ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2020 թվականի գործունեության

Հաշվետվություն

/ամենամյա/

Հայաստան 2021

2020թ.-ի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում մշտադիտարկում են իրականացրել՝ Արա Ղարագոզյանը, Արայիկ Զալյանը, Զարուհի Հովհաննիսյանը, Հասմիկ Հարությունյանը, Ռուբեն Սարգսյանը, Օֆելյա Զալյանը, Լուիզա Վարդանյանը, Նարե Հովհաննիսյանը, Հայկ հակոբյանը, Անահիտ Մկրտչյանը, Նարինե Շելելենկյանը, Տիգրան Դովլաթյանը, Սիրանուշ Դավթյանը, Անուշ Դանոյանը:

Զեկույցի հեղինակներն են՝ Արայիկ Զալյան, Արման Սահակյան, Հասմիկ Հարությունյան, Ռոբերտ Ռևազյան, Օֆելյա Զալյան, Հայկ Հակոբյան, Նարե Հովհաննիսյան, Լուիզա Վարդանյան, Զարուհի Հովհաննիսյան, Դավիթ Սիմոնյան:

Սույն հաշվետվությունում տեղ գտած տեսակետների և վերլուծությունների հեղինակը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբն է, և, հետևաբար, նյութի բովանդակության համար պատասխանատու է միայն Դիտորդների խումբը: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքները և հաստատված չեն Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի (ԲՀՀ-Հայաստան) կամ խորհրդի կողմից, հետևաբար, չեն ներկայացնում ԲՀՀ-Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն հաշվետվության բովանդակությունը կարող է չհամընկնել ԲՀՀ-Հայաստանի տեսակետներին:

Սույն հաշվետվության թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ- Հայաստանի ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ «Իրավունք և քրեական արդարադատություն» ծրագրի շրջանակում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....3

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....5

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 6

ԱՄՓՈՓՈՒՄ 9

1. ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀՀ ԱՆ ՔԿՀ–ՆԵՐՈՒՄ (2020 ԹՎԱԿԱՆ).....13

1.1.Գերբնակեցում 13

1.2. Խցային Պայմաններ 19

1.3.ՀՀ քրեակատարողական հիմնարկներում 2020 թվականի պլանային դիտարկման արդյունքում արձանագրվել են հետևյալ խնդիրները 23

Առաջարկություններ.....27

2. ՀՀ ԱՆ ՔԿՀ-ԵՐՈՒՄ 2020Թ.-Ի ԳՆՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ 28

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 32

3. ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ ԿԱՊԸ.....33

4. ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ.....40

Առաջարկություններ.....46

5.ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԱՆ ՔԿՀ–ՆԵՐՈՒՄ 48

5.1.Պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի հետ կապված առկա է ևս մեկ խնդիր, որը ազատազրկվածների շրջանում իր էությամբ տարիքի հիմքով խտրականության դրսևորման տիպիկ օրինակ է՝ որը սահմանված է իրավական ակտով: 52

6. ՄԱՀՎԱՆ, ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՑԱԴՈՒԼԻ ԴԵՊՔԵՐԸ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ.....56

6.1.Մահվան դեպքերի ընդհանուր նկարագիրը 56

7. ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄՆԵՐԻ և ՀԱՑԱԴՈՒԼԻ ԴԵՊՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ 64

8. ԿԱՆԱՆՑ և ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 69

8.2.Պահման պայմաններ և պատշաճ կացարան 70

8.3.Պատժախուց և կարանտին 72

8.4.Կանանց և անչապահասների Կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ 72

8.5.Կանանց և անչափահասների կրթություն, աշխատանք և զբաղվածություն 74

8.6.Բուժօգնություն և պայքար համավարակի դեմ 75

9. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԼԳԲՏ (ԼԵՍԲԻ, ԳԵՅ, ԲԻՍԵՔՍՈՒԱԼ, ՏՐԱՆՍ) ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ 77

9.1.Իրավական կարգավորումների ընդհանուր նկարագրությունը 77

9.2.Նախորդ տարիների իրավիճակի հակիրճ ամփոփում 79

9.3.Նույնասեռականությունը քրեական ենթամշակույթում. օրենսդրական փոփոխությունները քրեական ենթամշակույթի քրեականացման ուղղությամբ80

9.4. Առանձնացված տարաներով սննդի մատուցման դեպք 83

10. ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹ 86

11. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՅԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ... 95

12.ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ (ՔՈՎԻԴ -19) 101

13. ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐ, ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՔԿՀ–ՆԵՐՈՒՄ 103

14. ՍՆՆԴԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ և ՈՐԱԿԸ 108

14.1. Սննդի կազմակերպում 108

14.2. Ֆոտոշարք 109

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ 111

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 113

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՀԿ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

ԲՀՀ-Հայաստան Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան

ԴՀ Դատապարտյալների հիվանդանոց

ԵԽ Եվրոպայի խորհուրդ

ԹՆՕ Թմրամիջոցների ներերակային օգտագործող

ԼԳԲՏԻ Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս

ԽԿԿ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե (Խոշտանգումների կանխարգելման կոմիտե)

Խումբ/ Դիտորդների խումբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ

ՀՀ Հայաստանի Հանրապետություն

ՀՀ ԱՆ ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ ԱՆ ՔԿՎ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն

ՁԻԱՀ Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ

ՁՊՎ Ձերբակալված անձանց պահելու վայր

ՄԱԿ Միավորված ազգերի կազմակերպություն

ՄԻԱՎ Մարդու իմունային անբավարարության վիրուս

ՄԻԵԴ Մարդու իրավունքների եվրոպական դատարան

ՔԿՀ Քրեակատարողական հիմնարկ

ՔԿՕ Քրեակատարողական օրենսգիրք

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվության մեջ ներկայացվում են Հայաստանի Հանրապետության (ՀՀ) արդարադատության նախարարության (ԱՆ) քրեակատարողական հիմնարկներում (ՔԿՀ) և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի (Խումբ) մշտադիտարկման արդյունքները:

Հաշվետվությունում 2020 թ.-ի ընթացքում ՔՀԿ-ներում արձանագրված փաստերը ներկայացված և վերլուծված են ներպետական իրավական նորմերի, միջազգային չափանիշների և ՀՀ միջազգային պարտավորությունների համատեքստում:

Հաշվետվության մեջ ամփոփ ներկայացված են դիտարկման արդյունքները, առանձին-առանձին նկարագրված են առավել տարածված խնդիրները, խնդիրը կարգավորելուն միտված Խմբի ձեռնարկած գործողությունները, դրանց վերաբերյալ ՀՀ պատկան մարմիններին Խմբի կողմից ուղարկված գրությունները և այդ մարմինների պատասխանները, ինչպես նաև Խմբի գնահատականը: Իրավիճակն ավելի պատկերավոր նկարագրելու նպատակով որոշ թվային տվյալներ ներկայացված են գրաֆիկներով և աղյուսակներով: Նույն նպատակով Խմբի դիտարկումները, գնահատականներն ուղեկցվում են նկարներով:

Հաշվետվության մեջ ներառված տեղեկությունները հավաքագրվել են Խմբի կողմից ՔԿՀ-ներ կատարած այցելությունների, ազատությունից զրկված անձանցից ստացված ահազանգերի, նրանց հետ ունեցած առանձնազրույցների, հարցազրույցների, ՔԿՀ աշխատակիցների հետ զրույցների, ՔԿՀ գրանցամատյանների ուսումնասիրության հիման վրա: Հաշվետվության համար տեղեկատվության աղբյուր են հանդիսացել նաև ՀՀ պատկան մարմինների մեկնաբանությունները և տեղեկությունները, ինչպես նաև միջազգային և ներպետական իրավական նորմերը, հայեցակարգերը, օրենքները, ՀՀ կառավարության որոշումները:

2020 թ.-ի ընթացքում մշտադիտարկվել են ՀՀ ԱՆ 12 ՔԿՀ-ները, մասնավորապես ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման, պահման պայմանների, սննդի կազմակերպման, ազատությունից զրկված անձանց նկատմամբ վերաբերմունքի, ինչպես նաև խոցելի խմբերի նկատմամբ դրսևորած վերաբերմունքին առնչվող հարցեր:

Վերլուծվել է նաև պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի արդյունավետությունը, գնահատվել են այդ ոլորտին վերաբերող նախատեսվելիք օրենսդրական բարեփոխումները:

Հաշվետվության մեջ ներառված են նաև պաշտոնական տվյալներ ՔԿՀ-ներում արձանագրված մահվան, ինքնասպանության, ինքնավնասման և հացադուլի դեպքերի, տույժերի և հատուկ միջոցների կիրառման վերաբերյալ պաշտոնական տվյալներ:

Հաշվետվությունն եզրափակվում է «Առաջարկություններ» բաժնով, որը ներառում է արձանագրված խնդիրների լուծման առաջարկություններ՝ ուղղված ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի թերությունների և բացթողումների վերացմանը և ընդհանուր ոլորտի բարեփոխմանը:

Հաշվետվության մեջ Խմբի կողմից ՀՀ պատկան մարմիններին առանձին դատապարտյալների և/կամ կալանավորված անձանց վերաբերյալ գրությունների բովանդակությունը ներկայացնելիս Խումբը, հավատարիմ լինելով անձնական տվյալների գաղտնիության պահպանման սկզբունքին, չի հրապարակում այդ անձանց նույնականացնող տեղեկությունները՝ օգտագործելով միայն սկզբնատառերը: Բացառություն են կազմում միայն քաղաքական բարձր հնչեղություն ստացած դեպքերը, որոնք լայնորեն լուսաբանվել են զանգվածային լրատվության միջոցներով:

Հաշվետվության մեջ օգտագործված է «խոցելի խմբեր» եզրույթը, որի բացատրությունները ներկայացված է ստորև.

- **խոցելի խմբեր**, այս եզրույթով սահմանվում են հատուկ կարիքներ ունեցող անձինք, այն է՝ հատուկ բժշկական օգնություն և/կամ խնամք պահանջող (հոգեկան առողջության խնդիրներ, հաշմանդամություն

ունեցող, տուբերկուլյոզով հիվանդ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող) անձիք, ԼԳԲՏԻ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս), «քրեական» օրենքներին չենթարկվող կամ դրանք խախտած և որոշակի հանցագործություն կատարած անձինք:

ԱՄՓՈՓՈՒՄ

2020 թվականին Դիտորդների խմբի գործառույթներն իրականացվել են որոշ առանձնահատկություններով՝ պայմանավորված տարվա առաջին կեսին երկրում հաստատված արտակարգ և երկրորդ կեսին՝ ռազմական դրությամբ:

2020 թվականի մարտ ամսից ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում տարածված նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության դեմ պայքարի շրջանակներում առանձնակի ուշադրության արժանացավ նաև ազատությունից զրկված անձանց ու վերջիններիս շրջանում հիվադության տարածման կանխարգելման գրագետ միջոցառումների հարցը:

Պայմանավորված կորոնավիրուսային հիվանդության տարածման և փոխանցման ռիսկերով և սկզբնական շրջանում անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների ադապտացմամբ՝ հաշվետու տարում դիտորդների այցերը քրեակատարողական հիմնարկներ եղել են փոքր-ինչ ավելի սակավ, քան նախորդ տարիներին:

Այնուհանդերձ, ստացված ահազանգերը, իրականացված այցելություններն ու ոլորտային ուսումնասիրությունները թույլ են տալիս հաշվետու տարվա համար վեր հանել քրեակատարողական ոլորտի հիմնական խնդիրներն ու ձեռքբերումները հաշվետու տարվա համար:

Նախ պետք է նշել, որ 2020թ-ի ընթացքում Խումբը ստացել է թվով ընդհանուր 38 ահազանգ, ինչը նախորդ տարիների համեմատությամբ ավելի փոքր թիվ է կազմում[1]: Արձանագրված խնդրի պատճառները պայմանավորված են տարեսկզբից երկրում տարածված նոր կորոնավիրուսային վարակի առկայությամբ, ինչպես նաև՝ տարվա երկրորդ կեսից Արցախում սկսված 44–օրյա պատերազմական և հետպատերազմական դրությամբ: Վերը նշված երկու գործոնները նպաստել են ազատազրկված անձանց շրջանում ահազանգեր անելու պասիվ վիճակին: Որպես հիշեցում նշենք նաև, որ ամիսներ շարունակ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում այցելությունները երկրում հայտատարված կարանտինի պատճառով խստորեն վերահսկվում էին:

[1] http://pmg.am/hy/library/annual-reports

Ստացված ահազանգերը հիմնականում վերաբերել են ազատազրկված անձանց առողջական վիճակին ու տրամադրվող բուժօգնությանը:

Ստացված ահազանգերի հիման վրա, ինչպես նաև տարեկան պլանային այցերի շրջանակներում, Խումբը հաշվետու տարում կատարել է թվով 36 այցելություն ՀՀ ԱՆ տարբեր քրեակատարողական հիմնարկներ:

Ստացված ահազանգերի և կատարված այցերի արդյունքում Խումբը պատրաստել է և պետական տարբեր մարմիններ ուղարկել է թվով 78 գրություն, որոնց մեջ գերակշիռ մասը սակայն ուղղված է եղել ՀՀ Արդարադատության նախարարությանը: Ներկայացված գրությունները ըստ բնույթի ունեն հետևայլ պատկերը՝ դիմումներ՝ 16, ընթացիկ հաշվետվություններ՝ 19, հրատապ հաշվետվություններ՝ 2, Խմբին ուղղված գրություններին պատասխանվել են թվով 6, Օրենդրական առաջարկներ՝ թվով 7, տարբեր ուսումնասիրություններ կատարելու նպատակով արված հարցումներ՝ 26, մեկական եղել են հետազություն և հանցագործության մասին հաղորդում:

Ստացված ահազանգերի և գրությունների մեջ բուժսպասարկման հարցի գերակշիռ թիվ կազմելը խոսում է այն մասին, որ չնայած ոլորտում իրականացված փոփոխություններին և որոշակի կայունացմանը, հարցը դեռևս շարունակում է մնալ առավել մտահոգողներից մեկը: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ Քրեակատարողական բժշկության կենտրոն ՊՈԱԿ-ի ստեղծմամբ արդեն իսկ նախադրյալներ են դրվել ազատազրկված անձանց բուժօգնության արագ և արդյունավետ կազմակերպման համար:

Խմբի այցերն ու ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ոլորտի երկար տարիներ խնդրահարույց համարվող խնդիրներից մեկը՝ այն է որակյալ սննդի ապահովումը, վերջապես լուծված է: Մասնավորապես, դիտորդները արձանագրում են, որ մասնավոր ընկերության կողմից բոլոր հիմնարկներում սննդի մատակարարման ծրագիրը հաջողությամբ է պսակվել: Ինչի արդյունքում ազատազրկված անձանց տրամադրվող սնունդը բարձր է գնահատվում ինչպես բազմազանության, այնպես էլ սննդարարության համատեքստում:

Միևնույն ժամանակ, սակայն, դեռևս առկա են ոլորտներ, որտեղ շարունակում են տարիներ շարունակ բարձրաձայնված խնդիրները մնալ արդիական:

Չնայած 2018 թվականից հետո ՀՀ իշխանությունները քաղաքական կամք են ցուցաբերել, պայքարել փակ հաստատություններում կոռուպցիոն ռիսկերի ու քրեական ենթամշակույթի դեմ, այնուհանդերձ այս խնդիրները դեռևս ամբողջությամբ վերացված չեն: Նշենք, որ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի կրողների շրջանում տեղի են ունեցել ֆորմալ բնույթի փոփոխություններ, որոնք կապված էին քրեական ենթամշակույթի դրսևորումները քրեականացնելու հետ: Քրեական հեղինակությունների աստիճանակարգում գտնվող անձանց շրջանում ներքին պայմանավորվածությունների արդյունքում փոփոխվել են որոշ վարքագծեր, դրսևորումներ, սակայն, բուն ենթամշակույթը պահպանվել է, որն էլ պատճառ է հանդիսանում վերհանված խնդիրների միայն մասնակի լուծման: Այդուհանդերձ, թեև ՔԿՀ–ներում հիմնականում ժխտում են քրեական ենթամշակույթի առկայության մասին, սակայն դրա արտահայտման շոշափելի հանգույցներ դեռ գործում են, ինչի մասին խոսվում է սույն հաշվետվության քրեական ենթամշակույթի վերաբերյալ բաժնում: Խումբը արձանագրել է, որ ի տարբերություն նախորդ տարիների, նկատելի են փոփոխություններ, սակայն քրեական ենթամշակույթին բնորոշ դրսևորումները շարունակում են գործել բանտերում:

Նմանապես, դեռևս խնդրահարույց է քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձանց պահման պայմանների հարցը: Այս առնչությամբ դիտորդները այցերի արդյունքում արձանագրում են ազատությունից զրկված անձանց պահման ոչ բավարար պայմաններ՝ կապված սանիտարահիգիենիկ պահանջների ապահովման պայմանների և օդափոխության համակարգերի բացակայության, խոնավության բարձր աստիճանի, ջեռուցման, հիգիենայի պահպանման և ջրամատակարարման հարցերի հետ:

Խումբը մշտապես, ինչպես տարեկան զեկույցներում, այնպես էլ առանձին հրապարակումներով ուշադրություն է դարձրել խոցելի խմբերին՝ կանայք և անչափահասներ, ինքնամեկուսացված և ԼԳԲՏ անձինք:

Նախ պետք է նշել, որ վերջին տարիների համեմատությամբ կտրուկ նվազել է կին ազատազրկվածների թիվը, ինչը ողջունելի փոփոխություն է: Սակայն

վերջիններիս պայմանները, կապված սեռով պայմանավորված առանձնահատկությունների հետ, շարունակում են մնալ մտահոգիչ: Նման մտահոգության տեղիք է տալիս հատկապես մեկուսարանային մասնաշենքը, ինչը շարունակում է մնալ խոնավ և ոչ բարվոք վիճակում: Կանանց համար նախատեսված «Աբովյան» ՔԿՀ-ն պահման պայմանների, հիգիենայի և խնամքի տեսանկյունից շարունակում է մնալ չհարմարեցված հղի կանանց և մինչև 3 տարեկան երեխաների համար բավարար հնարավորություններ ապահովելու տեսանկյունից:

Հաշվետու տարվա համար մտահոգիչ է շարունակում մնալ նաև ԼԲԳՏ անձանց վիճակն ու վերջիններիս նկատմամբ գործող խտրական մոտեցումը:

Խումբը ուշադրության կենտրոնում է պահել նաև քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձանց վերասոցիալականացմանն ուղղված քայլերը: Չնայած իրականացվող ծրագրերին ու միջոցառումներին, վերջիններս դեռևս համակարգային բնույթ չեն կրում: Ավելին, արձնագարվել են խնդիրներ ինչպես մասնագիտական ուսուցման, այնպես էլ հանրակրթության առնչությամբ:

Վերը նշված և մի շարք այլ ոլորտային հարցեր առավել մանրամասն վիճակագրությամբ և վերլուծությամբ ներկայացվում են զեկույցի առանձին հատվածներում:

1. ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀՀ ԱՆ ՔԿՀ–ՆԵՐՈՒՄ (2020 ԹՎԱԿԱՆ)

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբն (այսուհետ Դիտորդների խումբ) իր գործունեության ողջ ընացքում մշտապես իր ուշադադրության կենտրոնում է պահել քրեակատարողական հիմնարկների պահման պայմանները, այդ թվում՝ գերբնակեցման խնդիրը: 2020 թվականին նույնպես Դիտորդների խումբը իր ուշադրության կենտրոնում է պահել ազատությունից զրկված անձանց բնակեցման պայմանները: 2020 թ. քրեակատարողական հիմնարկներում Դիտորդների խմբի կողմից իրականացված պլանային և ընթացիկ այցելությունների ժամանակ ուսումնասիրվել են խցերը, կացարանները, սանհանգույցները, տեսակցության սենյակները, զբոսանքի վայրերը: Հարկ է նշել, որ Դիտորդների խմբի կողմից նախորդ տարիներին բարձրացված և արձանագրված որոշ խնդիրներ նույնպես արդիական են հաշվետու ժամանակահատվածի համար: Մասնավորապես, ինչպես պլանային, այնպես էլ Դիտորդների խումբ կատարված ահազանգերի հիման վրա տեղի ունեցած այցելությունների ընթացքում Դիտորդների խումբն արձանագրել է ազատությունից զրկված անձանց պահման ոչ բավարար պայմաններ՝ կապված սանիտարահիգիենիկ պահանջների ապահովման պայմանների և օդափոխության համակարգերի բացակայության, խոնավության բարձր աստիճանի, ջեռուցման, հիգիենայի պահպանման և ջրամատակարարման հարցերի հետ:

1.1. Գերբնակեցում

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում պահվել է 1967 ազատազրկված անձ, որից 915-ը եղել են կալանավորված անձինք: Հարկ է նշել, որ ընդհանուր լրակազմի այդ ժամանակահատվածի համար նախատեսված է եղել 4922, որից կալանավորված անձանց թիվը՝ 1235:

Այս առումով հարկ է ընդգծել որոշ ՔԿՀ-ներում արձանագրված գերբնակեցման հարցը՝ փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկներում պատիժ կրող

դատապարտյալների, ինչպես նաև կալանավորված անձանց մասով դեռևս արդիական է:

Այսպես, «Նուբարաշեն» ՔԿՀ-ում կիսափակ ուղղիչ հիմնարկում նախատեսված 40 պատիժ կրող անձի փոխարեն արձանագրվել է 44 պատիժ կրող անձ, «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում՝ փակ ուղղիչ հիմնարկում նախատեսված 5-ի փոխարեն՝ 17, նույն ՔԿՀ-ում կիսափակ ուղղիչ հիմնարկում նախատեսված 5-ի փոխարեն արձանագրվել է 25 պատիժ կրող անձ, «Հրազդան» ՔԿՀ-ում կիսափակ ուղղիչ հիմնարկում 71-ի փոխարեն՝ 73 պատիժ կրող անձ: Միևնույն ժամանակ, «Վարդաշեն» ՔԿՀ-ում 34-ի փոխարեն արձանագրվել է 40 կալանավոր, «Դատապարտյալների հիվանդանոց»-ում նախատեսված 6-ի փոխարեն՝ 50 կալանավոր և «Արմավիր» ՔԿՀ-ում 200-ի փոխարեն արձանագրվել է 408 կալանավոր:

Առաջին հայացքից ակնհայտ է, որ քրեակատարողական հիմնարկներում պահվող փաստացի անձանց թիվը չի գերազանցում նախատեսված լրակազմի կեսը, սակայն ըստ դասակարգումնորվ նախաատեսվաած տիպերի համար լրակազմը գերազանցում է: Հարկ է նկատել, որ նույն խնդիրը Դիտորդների խմբի կողմից արձանագրվել է նաև նախորդ տարիներին: Այսպես, «Նուբարաշեն» ՔԿՀ-ում հատուկ քանակակազմը ըստ լրակազմի 01.01.2017 թ. դրությամբ նախատեսվել է 820, որից 550 կալանավոր, սակայն թվաքանակը եղել է 825, որից 657 կալանավոր, «Վարդաշեն» ՔԿՀ-ում՝ 34 կալանավորի փոխարեն՝ 53, «Արթիկ» ՔԿՀ-ում՝ 50 կալանավորի փոխարեն 57, «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում՝ 6-ի փոխարեն 26 կալանավոր: 01.01.2018 թ. դրությամբ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում հատուկ քանակակազմը ըստ լրակազմի նախատեսվել է 780, որից 590 կալանավոր, սակայն թվաքանակը եղել է 795, որից 676 կալանավոր, «Արթիկ» ՔԿՀ-ում՝ 50 կալանավորի փոխարեն 54, «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում՝ 6-ի փոխարեն 51 կալանավոր[2]: 01.01.2019 թ. դրությամբ «Վարդաշեն» ՔԿՀ-ում կալանավորված անձանց թվաքանակը ըստ լրակազմի նախատեսված

[2] Տես Դիտորդների խմբի 2017 թ. գործունեության հաշվետվության 26-րդ էջում՝ http://pmg.am/images/PMG_Annual-report_2017.pdf:

34-ի փոխարեն եղել է 47, «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում՝ 6-ի փոխարեն 44[3]:

31.12.2020 թ. դրությամբ քրեակատարողական հիմնարկների լրակազմերի, տեսակների և քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, տրամադրված ՀՀ արդարադատության նախարարության կողմից, ներկայացվում է ստորև.

ՔԿՀ	Փակ ուղղիչ հիմնարկ		Կիսափակ ուղղիչ հիմնարկ		Կիսաբաց ուղղիչ հիմնարկ		Բաց ուղղիչ հիմնարկ		Տեղաբաշխման ենթակա		Կալանավորված անձ	
	ըստ լրակազմի	31.12.20թ.	ըստ լրակազմի	31.12.20թ.	ըստ լրակազմի	31.12.20թ.	ըստ լրակազմի	31.12.20թ.	ըստ լրակազմի	31.12.20թ.	ըստ լրակազմի	31.12.20թ.
«Նուբարաշեն»	100	39	40	**44**	40	1	10	-	-	-	590	193
«Երևան-Կենտրոն»	7	5	3	2	5	-	-	-	-	-	45	13
«Արթիկ»	103	42	54	31	141	39	25	4	-	1	50	34
«Վանաձոր»	65	26	75	60	15	1	5	-	-	-	80	47
«Վարդաշեն»	10, որից 5 կալանք պատժա տեսակ	1	25	13	70	24	200	30	-	-	34	40
«Գորիս»	60	24	15	**19**	7	3	50	-	-	-	50	43
«Աբովյան»	15, որից 10 կալանք պատժա տեսակ	-	40	13	81	15	29	2	-	-	100	22
«Սևան»	-	-	-	-	533	95	15	1	-	-	-	-
«Կոշ»	-	-	-	-	615	79	25	-	-	-	-	-
«Դատ. հիվանդանոց»	5	17	5	25	14	14	10	-	-	-	6	50
«Հրազդան»	60, որից 17 կալանք պատժա տեսակ	19, որից 1 անձ կալանք պատժա տեսակ	71	73	4	-	-	-	-	-	80	64
«Արմավիր»	402	84	550	203	83	2	5	-	-	2	200	408
ԸՆԴԱՄԵՆԸ	**827**	**257, որից 1 անձ կալանք պատժա տեսակ**	**878**	**483**	**1608**	**273**	**374**	**37**	**-**	**3**	**1235**	**914**

[3] Տես Դիտորդների խմբի 2018 թ. գործունեության հաշվետվության 10-րդ էջում՝ http://pmg.am/images/Ditordakan_Zekuyc_Book__2019_for_Web.pdf:

Ըստ «Եվրոպայի խորհրդի 2019 թվականի տարեկան քրեական վիճակագրությունը փաստում է, որ Հայաստանն ազատազրկման ամենացածր մակարդակն ունեցող երկրների շարքում է: Ապրիլի 1-ի դրությամբ Եվրոպայի խորհրդի բանտային բնակչության խտության ինդեքսով (100 տեղի հաշվով) ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում խտությունն ընդամենը 42.2 % է (գրեթե երկու անգամ ցածր է եվրոպական միջինից (89,5%))»:

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում պահվել է 2221 ազատազրկված, որից 1017-ը եղել են կալանավորված անձինք: Ընդհանուր լրակազմը այդ ժամանակահատվածի համար նույնպես նախատեսված է եղել 4922, որից կալանավորված անձանց թիվը՝ 1235: Գերբնակեցման հարցն ինչպես նախորդ, այնպես էլ այս ժամանակահատվածի համար նույնպես արձանագրվել է որոշ ՔԿՀ-ներում՝ փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալների, ինչպես նաև կալանավորված անձանց մասով. այսպես, «Գորիս» ՔԿՀ-ում կիսափակ ուղղիչ հիմնարկում նախատեսված **15 պատիժ կրող անձի փոխարեն արձանագրվել է 18** պատիժ կրող անձ, «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում՝ փակ ուղղիչ հիմնարկում **նախատեսված 5-ի փոխարեն՝ 18**, նույն ՔԿՀ-ում կիսափակ ուղղիչ հիմնարկում նախատեսված **5-ի փոխարեն արձանագրվել է 23 պատիժ կրող անձ**: Միևնույն ժամանակ, «Վարդաշեն» ՔԿՀ-ում **34-ի փոխարեն արձանագրվել է 42 կալանավոր**, «Դատապարտյալների հիվանդանոց»-ում նախատեսված 6-ի փոխարեն՝ 48 կալանավոր և **«Արմավիր» ՔԿՀ-ում 200-ի փոխարեն արձանագրվել է 374 կալանավոր**:

31.12.2019թ. դրությամբ քրեակատարողական հիմնարկների լրակազմերի, տեսակների և քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, տրամադրված ՀՀ արդարադատության նախարարության կողմից, ներկայացվում է ստորև.

ՔԿՀ	Փակ ուղղիչ հիմնարկ		Կիսափակ ուղղիչ հիմնարկ		Կիսաբաց ուղղիչ հիմնարկ		Բաց ուղղիչ հիմնարկ		Տեղաբաշխման ենթակա		Կալանավորված անձ	
	ըստ լրակազմի	31.12.19թ.	ըստ լրակազմի	31.12.19թ.	ըստ լրակազմի	31.12.19թ.	ըստ լրակազմի	31.12.19թ.	ըստ լրակազմի	31.12.19թ.	ըստ լրակազմի	31.12.19թ.
«Նուբարաշեն»	100	39	40	19	40	4	10	2	-	2	590	286
«Երևան-Կենտրոն»	7	4	3	1	5	-	-	-	-	-	45	27
«Արթիկ»	103	51	54	38	141	52	25	2	-	-	50	42
«Վանաձոր»	65	34	75	49	15	1	5	-	-	7	80	55
«Վարդաշեն»	10, որից 5 կալանք պատժ ատեսակ	1	25	7	70	43	200	14	-	-	34	42
«Գորիս»	60	35	15	18	7	3	50	-	-	-	50	31
«Աբովյան»	15, որից 10 կալանք պատժ ատեսակ	2, որից 1 կալանք պատժատեսակ	40	10	81	20	29	3	-	-	100	43
«Սևան»	-	-	-	-	533	106	15	-	-	-	-	-
«Կոշ»	-	-	-	-	615	111	25	-	-	-	-	-
«Դատ. հիվանդանոց»	5	18	5	23	14	8	10	2	-	-	6	48
«Հրազդան»	60, որից 17 կալանք պատժ ատեսակ	35	71	59	4	1	-	-	-	-	80	69
«Արմավիր»	402	121	550	246	83	10	5	-	-	3	200	374
ԸՆԴԱՄԵՆԸ	**827**	**340**, որից 1 կալանք պատժատեսակ	**878**	**470**	**1608**	**359**	**374**	**23**	**-**	**12**	**1235**	**1017**

Դիտորդների խումբն ինչպես հրատապ, այնպես էլ տարեկան հաշվետվություններում մշտապես անդրադարձել է քրեակատարողական հիմնարկների գերբնակեցման խնդրին՝ արձանագրելով առկա խնդիրները և ներկայացնելով դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ: Հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում գերբնակեցման խնդիրը շարունակել է արդիական մնալ տարիներ շարունակ, սակայն հաշվետու ժամանակահատվածի՝

2020 թ. համար գերբնակեցման խնդիրը քրեակատարողական հիմնարկներում կարելի է լուծված համարել, **բացառությամբ իհարկե փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկներում պատիժ կրող և կալանավորված անձանց որոշ քրեակատարողական հիմնարկներում արձանագրված տվյալները, որոնց վերաբերյալ վերը նշվել և ներկայացվել է աղյուսակում:** Սակայն, նույնիսկ այդ տվյալները հաշվի առնելով պետք է արձանագրել, որ հաշվետու ժամանակահատվածի համար քրեակատարողական հիմնարկներում գերբնակեցման խնդիրն արդիական չի եղել, համեմատած նախորդ տարիների: ՔՈՎԻԴ–19-ով պայմանավորված բեռնաթափելու վերաբերյալ տեղեկություն չունենք: Այս մասով չկա նաև համակարգված վիճակագրություն: Ի պատասխան Դիտորդների խմբի գրության, ՀՀ ԱՆ–ից 21.07.2020 թ–ին թիվ 06/12.0.03/15727-20 գրությամբ հայտնել են հետևյալը. «Քրեակատարողական հիմնարկներում նոր կորոնավիրուսային վարակի ախտանշաններ ունեցող ազատությունից զրկված անձանց մեկուսացման համար առանձնացվել են առնվազն մեկուսացման համար 1–ական խցեր: Բացի այդ, երկարաձգվել է կարանտինային բաժնում պահելու օրերի թիվը՝ 7-ից դառնալով 14 (հիվանդության նշանների բացահայտման հնարավոր օրերի թվով): Քրեակատարողական համակարգում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման, ինչպես նաև հայտնաբերման դեպքում անհրաժեշտ միջոցառումների ծրագրով դիտարկվել են կորոնավիրուսով պայմանավորված զարգացումների տարբեր սցենարներ, որոնց համար նախապատրաստվել են համապատասխան մեխանիզմներ: Մասնավորապես նախատեսվել է ՀՀ ԱՆ Դատապարտյալների հիվանդանոց քրեակատարողական հիմնարկի մասնաշենքերը (սկզբնական շրջանում՝ երկուսը, իսկ վատագույն սցենարի դեպքում՝ բոլոր մասնաշենքերը) հատկացնել առավել ռիսկային համարվող ազատազրկվածներին և հիվանդներին՝ մյուսներից անջատ պահելու համար: Այսպես, կատարված աշխատանքների արդյունքում ներկայումս ՀՀ ԱՆ Դատապարտյալների հիվանդանոց քրեակատարողական հիմնարկի տուբերկուլոզային և նարկոլոգիական մասնաշենքերն ամբողջությամբ դատարկ են և օգտագործվում են բացառապես որպես կորոնավիրուսային վարակի կանխարգելման կարանտինային գոտի: Առանձնացված երկու

մասնաշենքերն ունեն մինչև 150 մահճակալային ֆոնդ հզորություն, որոնց անկողնային պարագաները տրամադրել է Կարմիր խաչ Միջազգային Կոմիտեն: Վերոնշյալ նախապատրաստական աշխատանքների արդյունքում ՀՀ ԱՆ Դատապարտյալների հիվանդանոց քրեակատարողական հիմնարկը ներկա դրությամբ վերազինված է համապատասխան բժշկական սարքավորումներով և անհրաժեշտության դեպքում պատրաստ է բուժօգնություն ցուցաբերել կորոնավիրուսով վարակված կալանավորված անձանց և դատապարտյալներին: Որպես երկրորդ տարբերակ՝ դիտարկվում է ՀՀ ԱՆ Դատապարտյալների հիվանդանոց քրեակատարողական հիմնարկը լրիվ ազատելու և այն վերապրոֆիլավորելու հնարավորությունը: Այս տարբերակի դեպքում ՀՀ ԱՆ Դատապարտյալների հիվանդանոց քրեակատարողական հիմնարկում ընդհանուր առմամբ հնարավոր կլինի տեղակայել 300 մահճակալ»:

1.2. Խցային Պայմաններ

Ստորև ներկայացվում են այն խախտումները, որոնք 2020 թվականին արձանագրվել են Դիտորդների խմբի կողմից.

1.2.1.ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ կատարած այցելության ժամանակ դիտորդներն արձանագրել են, որ հիմնարկի՝ որպես պատժախուց օգտագործվող հատվածը չի շահագործվում: Առաջին հարկի 2-6-րդ խցերը օգտագործվում են որպես պատժախցեր, իսկ 7-10-րդ խցերը՝ որպես կարանտինային խցեր: Հացադուլի մեջ գտնվող անձանց տեղափոխում են նշված խցերից որևէ մեկը, որն այդ պահին ազատ է լինում: Դիտորդներն արձանագրել են, որ նշված խցերի պայմանները հարմարեցված չեն պատժախցի կամ հացադուլ հայտարարած անձանց պահման համար՝ պատերի ծեփը թափված է, սանհանգույցները գտնվում են անմխիթար վիճակում, առկա է գարշահոտություն, նյութատեխնիկական պայմանները բավարար չեն: Նման պայմաններում անձանց պահելը Դիտորդների խմբի կողմից գնահատվել է որպես անմարդկային վերաբերմունքի դրսևորում:

ՀՀ արդարադատության նախարարությունից պարզաբանել են, որ «ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի խիստ անհրաժեշտ

տեղամասերում ներկայումս իրականացվում են ջրամատակարարման-ջրահեռացման և էլեկտրամատակարարման ցանցերի մասնակի վերանորոգման աշխատանքներ: Կարանտինային խցերի և հացադուլավորների համար նախատեսված խցերի հարդարման համար ֆինանսական միջոցներ այս պահին նախատեսված չեն՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 1717-Լ որոշմամբ նախատեսված ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի հետագա շահագործման դադարեցումը, ինչպես նաև COVID-19 համավարակի պատճառով առաջացած տնտեսական իրադրությունը»:

1.2.2.ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ այցելության ժամանակ դիտորդներն ուսումնասիրել են հացադուլի մեջ գտնվող անձանց պահման պայմաններն և արձանագրել, որ վերջիններս պահվում են պատժախուց հանդիսացող խցում, որտեղ օդափոխությունը բացակայում էր և տիրում էր խոնավություն, իսկ խցում օդը հեղձուցիչ էր: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա Դիտորդների խումբը դիմել է արդարադատության նախարարին՝ քննարկելու հացադուլի մեջ գտնվող անձանց խուցը փոխելու հարցը՝ վերջիններիս տրամադրելով մարդու իրավունքների ստանդարտներին համապատասխանող խուց:

ՀՀ արդարադատության նախարարությունից պարզաբանել են, որ «ազատությունից զրկված անձանց կողմից հացադուլ հայտարարելու դեպքերում տվյալ անձինք տեղափոխվում են պատժախցային մասնաշենքում հացադուլ հայտարարած անձանց պահելու համար առանձնացված խցեր, քանի որ ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում ի սկզբանե նախատեսված չեն եղել հացադուլ հայտարարած անձանց պահելու համար նախատեսված խցեր: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ յուրաքանչյուր տարի հատկացված ֆինանսական միջոցների սահմաններում իրականացվում են վերանորոգման և հարդարման աշխատանքներ, իսկ ջեռուցման համակարգի հետ համատեղած օդափոխության համակարգի նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերը

կազմվել են. շինարարական աշխատանքների իրականացումը նախատեսվում է 2021 թվականին»:

1.2.3.ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ կատարած այցելության ժամանակ դիտորդներն արձանագրել են, որ քրեակատարողական հիմնարկի նկուղային հարկում և խոհանոց տանող ճանապարհին կոյուղին վնասված է և առկա են ջրային կուտակումներ:

ՀՀ արդարադատության նախարարությունից պարզաբանել են, որ «ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) նկուղային հարկի խողովակաշարերը գործում են անխափան, և առաջացած ջրի կուտակումները կոյուղաջրեր չեն հանդիսանում, այլ նկուղում կուտակված մթնոլորտային ջրերն են, որոնք առաջացել են Հիմնարկի երկրորդ հարկի զբոսաբակի խողովակաշարի վնասված լինելու հետևանքով: Նշված խողովակաշարի վերանորոգումն ներկայումս գտնվում է ընթացքի մեջ»:

1.2.4.ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ կատարած այցելության ժամանակ դիտորդներն արձանագրել են, որ քրեակատարողական հիմնարկի խցերում բնակվող անձանց բաշխվածությունը խիստ անհամաչափ է՝ որոշ խցերում պահվել են 2-3, որոշներում էլ՝ 7-8 անձ:

ՀՀ արդարադատության նախարարությունից պարզաբանել են, որ «ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ներկայումս իրականացվում են շինարարական և վերանորոգման աշխատանքներ, և որոշ դեպքերում Հիմնարկում ազատությունից զրկված անձանց անհամաչափ բաշխվածությունը կարող է պայմանավորված լինել միայն այդ հանգամանքով»:

1.2.5.ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ կատարած այցելության ժամանակ դիտորդներն արձանագրել են, որ քրեակատարողական հիմնարկն ապահովված չէ մշտական ջրամատակարարմամբ, ինչը հատկապես է խնդրահարույց է եղել COVID-19 համավարակի պայմաններում:

ՀՀ արդարադատության նախարարությունից պարզաբանել են, որ «ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում իրականացվում է շուրջօրյա ջրամատակարարում, սակայն խմելու ջրի ճնշման անկման պատճառով դեռևս հնարավոր չէ քրեակատարողական հիմնարկի բոլոր մասնաշենքերում միաժամանակ ապահովել մշտական ջրամատակարարում»: Միևնույն ժամանակ պարզաբանել են, որ «ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ (ջրի հնարավոր արտահոսքերի (վնասված խողովակներ, ծորակներ, ցնցուղներ կամ զուգարանակոնքեր) հայտնաբերման և կանխարգելման աշխատանքներ)՝ ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի բոլոր մասնաշենքերում մշտական ջրամատակարարում միաժամանակ ապահովելու նպատակով»:

1.2.6.ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ կատարած այցելության ժամանակ դիտորդներն ուսումնասիրել են քրեակատարողական հիմնարկի կարանտինային խցերի պայմանները և արձանագրել, որ թիվ 02 խուցը բնակության համար անմխիթար վիճակում է, մասնավորապես՝ պատերը բորբոսնած են, ծեփը՝ թափված:

Նշվածի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունից պարզաբանել են, որ «Վարդաշեն» ՔԿՀ-ի թիվ 02 խցի վերանորոգման աշխատանքները կներառվեն 2021թ. իրականացվելիք վերանորոգման աշխատանքների ցանկում, իսկ կոսմետիկ աշխատանքներ ներկայումս իրականացվում են:

1.3. ՀՀ քրեակատարողական հիմնարկներում 2020 թվականի պլանային դիտարկման արդյունքում արձանագրվել են հետևյալ խնդիրները

1.3.1. ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի կարանտինում գտնվող անձանց և պատժախուց հանդիսացող հատվածի 2-րդ խցում դարձյալ արձանագրվել է խոնավության բարձր աստիճան և պատերի վրա գոյացած բորբոս:

Արձանագրենք նաև, որ ազատությունից զրկված անձանց բնակեցման պայմանները COVID-19 համավարակով պայմանավորված 2020 թվականի պլանային դիտարկումներով հնարավոր չի եղել ապահովել բոլոր քրեակատարողական հիմնարկներում: Օրինակ, ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի բնակելի գոտու դիտարկում չի իրականացվել, քանի որ բնակելի գոտում գտնվող 7 անձանց մոտ հայտանբերվել է COVID-19 հիվանդություն:

«Վարդաշեն» ՔԿՀ

1.3.2. ՀՀ ԱՆ «Գորիս» քրեակատարողական հիմնարկի 1-ին հարկի ինչպես խցային, այնպես էլ աշխատակիցների համար նախատեսված հանգստի սենյակները գտնվել են վատթար վիճակում՝ ունեցել են խոնավության բարձր աստիճան, որի հետևանքով պատերի վրա գոյացել էր բորբոս:

«Գորիս» ՔԿՀ

1.3.3. ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի պատերը դարձյալ ունեցել են խոնավության բարձր աստիճան, որն առաջացել է խոնավության հետևանքով:

«Աբովյան» ՔԿՀ

1.3.4. ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում հացադուլ հայտարարած անձանց և կարանտինային խցերը, պատժախցերը եղել են խոնավ, թաց և բորբոսնած վիճակում: Նույն պատկերն արձանագրվել է նշված տարածքների զուգարաններում, որտեղ տիրել է գարշահոտություն և որոնք նույնպես գտնվել են անմխիթար վիճակում: Գարշահոտություն առկա է եղել նաև քրեակատարողական հիմնարկում, Դիտորդների խմբի կողմից դիտարկված հիվանդասենյակներից մեկի սանհանգույցում:



«Արմավիր» ՔԿՀ

1.3.5. ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի 1-ին հարկի միջանցքն անսարք լվացարանի վթարի պատճառով լցված է եղել ջրով, իսկ 4-րդ խուցը, որն օգտագործվում է նաև որպես պատժախուց և որտեղ բնակեցնում են կարանտինի, հացադուլի մեջ գտնվող անձանց, գտնվել է խոնավ վիճակում և չի ջեռուցվել:



«Նուբարաշեն» ՔԿՀ

1.3.6. ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկի կարանտինային և պատժախցի բաժանմունքի հերթապահ մասի աշխատակիցների սենյակը պատերի ծեփերի վնասված (պոկված) լինելու պատճառով գտնվել է վատթար վիճակում:

«Սևան» ՔԿՀ




«Երևան-Կենտրոն» ՔԿՀ

«Կոշ» ՔԿՀ

«Հրազդան» ՔԿՀ



«Վանաձոր» ՔԿՀ

Առաջարկություններ

1. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում, ըստ անհրաժեշտության, իրականացնելիցերի, պատժախցերի,կացարանների, սանհանգույցների, տեսակցության սենյակների, զբոսանքի և այլ վայրերի, ինչպես նաևքրեակատարողական հիմնարկների շենքային պայմաններիհիմնանորոգման կամ մասնակի վերանորոգման աշխատանքներ,
2. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների աշխատակիցներինապահովել աշխատանքային բարվոք պայմաններով, այդ թվում՝ միջոցներ ձեռնարկել աշխատակիցների համար նախատեսված հանգստի սենյակներըբավարար պայմաններովապահովելուհամար,
3. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում ներդնել կենտրոնական օդափոխության համակարգեր,
4. Միջոցներ ձեռնարկել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների ազատությունից զրկված անձանց պահման բոլոր վայրերում մշտական ջեռուցում ապահովելու ուղղությամբ,
5. Միջոցներ ձեռնարկել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում հացադուլ հայտարարած անձանց պահման բավարար պայմանների ապահովման համար,
6. Միջոցներ ձեռնարկել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի խցերում բնակվող անձանց անհամաչափ բաշխվածությունը բացառելու ուղղությամբ,
7. Միջոցներ ձեռնարկել ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկը մշտական ջրամատակարարմամբ ապահովելու համար,
8. Հիմնանորոգել«ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի կոյուղին:

2. ՀՀ ԱՆ ՔԿՀ-ԵՐՈՒՄ 2020Թ.-Ի ԳՆՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Նախաբան

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը ուսումնասիրում է նաև տվյալ հաշվետու տարվա ընթացքում ՀՀ ԱՆ Քրեակատորողական Ծառայության կողմից իրականացված գնումները և ներկայացնում ուսումնասիրության ակնարկ:

2020թ.-ի ընթացքում ՔԿԾ-ի կողմից իրականցվել են գնումներ ըստ «Բաց մրցույթ», «Հրատապ բաց մրցույթ», «Մեկ անձ» և «Գնանշման հարցում» ընթացակարգերի: Ընդ որում «Բաց մրցույթ» և «Հրատապ բաց մրցույթ» ընթացակարգերի արդյունքում ձեռք է բերվել սննդի պատրաստման ծառայություն «ՌԵԴԻ-ՍԹԵԴԻ» ՍՊԸ-ից, որը այդ ծառայությունը սկսել է մատուցել 2019թ.-ի հոկտեմբեր ամսից: Փորձնական մատակարարման ծառայությունը մեկնարկել է «Արմավիր» և «Նուբարաշեն» ՔԿՀ-երում, իսկ այժմ ծառայությունը ընդլայնվել է և հասանելի է բոլոր ՔԿՀ-երում:

Ընդհանուր առմամբ իրականցվել է 82 գնում ըստ հետևյալ ընթացակարգերի

Ընթացակարգ	Քանակ
Բաց մրցույթ	2
Հրատապ բաց մրցույթ	1
Մեկ անձ	15
Գնանշման հարցում	**64**

Ընթացակարգերը, ըստ տոկոսային հարաբերության, ունեն հետևյալ պատկերը.

Ծառայություն, ապրանքների ձեռք բերման անվանում	Քանակ
Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ	**1**
ԱՊՊԱ ծառայություններ	**2**
Ավտոմեքենայի անվադողեր	**1**
Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	**1**

Արևաածաղկի ձեթ, ռաֆինացված, (զտած)	1
Արցունքաբեր գազային բալոններ	1
Գազային սարքերի պահպանման ծառայություններ	1
Գրասենյակային կահույք	5
Գրասենյակային ապրանք	4
Դոմենային անվանգրանցման կտրոնի տրամադրում (penitentiary.am-11.12/21)	1
Դոմենի երկարաձգում	1
Էլեկտրական սարքերի և սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ	1
Թվային լուսանկարչական ապարատ	1
Ինտերնետ կապի ապահովման և տվյալների փոխանցման ծառայություններ	1
Լրատվական մոնիտորինգի ծառայություններ	1
Կապալային աշխատանքեր	1
Համակարգչային սարքերի պահպանում և վերանորոգում	1
Համակարգչային տեխնիկա	2
Հանդերձանք և անկողնային պարագաներ	13
Հատուկ ինքնապաշտպանական միջոցներ	4
Հաց, 1-ին տեսակի	1
ՀԾ հաշվապահ	1
ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում անվտանգության համակարգի տեղադրում, նախագծանախահաշվարկային ծառայություններ, վերանորոգման աշխատանքներ	3
ՀՀ Ոստիկանության գերատեսչական տեղեկատվական ցանցին համակցելու և սպասարկելու ծառայություններ	1
Հոսթինգի տրամադրման ծառայություններ ced.am կայք (27/03/2020-26/03/2021)	1
Մանկական հիգիենիկ պարագաներ և հագուստ	3
Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգ ծրագրի սպասարկում	1
Մեխանիկական և էլեկտրոնային կշեռքների ստուգաչափման ծառայություններ	1
Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն	1
Շենքերի, շինությունների ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքներ	1

Պարբերական մամուլ	1
Պլաստիկ քարտ	1
Սննդամթերք	5
Սննդի պատրաստման ծառայություններ, թվով տասերկու ՔԿՀ-ներում	3
Վառելիք	1
Վկայականներ (մետաղական տարբերանշանով)	1
Տեխնիկական հսկողության ծառայություններ	1
Տնտեսական ապրանքներ	7
Տպագրական ծառայություններ	2
Փոստային-սուրհանդակային ծառայություններ	1
Քարտրիջ (պլաստիկ քարտ տպող)	1



Ըստ գնված ծառայությունների և ապրանքների պայմանագրերի ուսումնասիրության՝ ընդհանուր գումարի և առկա ֆինանսական միջոցների տարբերությունը կազմել է 1,564,884,999 ՀՀ դրամ, իսկ հաշվարկային տնտեսումը՝ 2,153,794 ՀՀ դրամ:



Պայմանագրերի ընդհանուր գումարները ըստ ընթացակարգի տեսակների.



Պայմանագրերի ընդհանուր գումարները ըստ առկա ֆինանսական միջոցների.



Պայմանագրերի ընդհանուր գումարների և առկա ֆինանսական միջոցների համադրությունը ըստ ընթացակարգերի տեսակների հետևյալն է.



Իսկ պայմանագրերի ընդհանուր գումարների և առկա ֆինանսական միջոցների տարբերությունը ըստ ընթացակարգերի տեսակների տոկոսային հարաբերակցությամբ հետևյալն է՝



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Պատվիրատուն, պահպանելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի դրույթները, կազմակերպել է գնման ընթացակարգերը:
- Գնումների ընթացակարգի մասին տեղեկատվության հասանելիության ապահովման մասին ուսումնասիրություններ չեն եղել:
- Գնումների ընթացակարգերում և կնքված պայմանագրերում խախտումներ չեն նկատվել:

3. ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ ԿԱՊԸ

Ինչպես կալանավորված անձինք, այնպես էլ դատապարտյալները ունեն արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունք: Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը պարտավոր է համապատասխան պայմաններ նախատեսել ընտանիքի և արտաքին աշխարհի հետ ազատազրկված անձանց կապն ապահովելու համար՝ այդ նպատակով ստեղծելով կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ և լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ: Այդուհանդերձ, 2020 թ–ի ընթացքում արտաքին աշխարհի հետ կապի պատկերն էականորեն տարբերվում էր նախորդ տարիների պատկերից: 2020 թ–ի մարտի կեսերից ինչպես գրեթե բոլոր պետություններում, այնպես էլ ՀՀ–ում հաստատվեց նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման նպատակով կարանտին, որի դեպքում սահմանափակվեց տեսակցությունները ու արտաքին աշխարհի հետ կապը: ՀՀ ԱՆ ՔԿՀ–ներում ՔՈՎԻԴ-19 վարակի տարածումը կանխելու նպատակով ՀՀ ԱՆ ձեռնամուխ եղավ մի շարք կանխագելիչ միջոցառումների իրականացմանը, որի ընթացքում ազատզրկվածների և ՔԿՀ աշխատակիցների շրջանում կատարվում էին ջերմաչափումներ, տրամադրվում էին պաշտպանիչ միջոցներ, դիմակներ, վիրաբուժական ձեռնոցներ, ալկոհոլային հիմքով ախտահանիչ միջոցներ, պատերին փակցվում էին տեղեկատվական պաստառներ, ինչպես նաև սահմանվում էր ակտիվ բժշկական վերահսկողություն, սակայն այս ամենը համաձայն դիտորդների դիտարկումների կատարվում էին ոչ այնքան համաչափ և ոչ այնքան հետևողական, ինչի արդյունքում էլ ականատես ենք լինում սույն հաշվետվության մեջ տեղ գտած առանձին ՔՈՎԻԴ-19 բաժնում զետեղված համավարակով վարակվածների թվի պատկերին:

Արտաքին աշխարհի հետ կապի պահպանումն ազատազրկված անձանց հիմնական իրավունքներից է: Այն նվազեցնում է լարվածությունը քրեակատարողական հիմնարկներում, նպաստում է դրական միջավայրի ձևավորմանը և ազատազրկված անձանց բարեկեցությանը, ազդում է ընտանիք

վերադառնալու ցանկության վրա, ինչն էլ ազատազրկված անձանց զերծ է պահում իրավախախտում կատարելուց և քրեական ենթամշակույթի ազդեցությունից: Հետևաբար արտաքին աշխարհի հետ կապի բացակայությունը կարող է ծանր հետևանքներ ունենալ ազատազրկված անձանց հոգեկան առողջության, վարքագծի և հոգեվիճակի վրա:

Խումբն ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ 2020թ. կալանավորված անձանց և դատապարտյալներին տրամադրվել է 437 երկարատև և 4986 կարճատև տեսակցություն: Ընդ որում, կարճատև տեսակցություններից 38-ն ազատազրկված անձանց լրացուցիչ է տրամադրվել:



2020թ. քրեակատարողական հիմնարկներ կատարած այցելությունների ընթացքում Խումբը դիտարկել է տեսակցությունների խնդիրներն և արձանագրել տեսակցությունների տրամադրման հետ կապված մի շարք խնդիրներ:

«Կոշ» ՔԿՀ-ում Խումբը դիտարկել է կարճատև տեսակցությունների սենյակը, որտեղ սեղաններն առանձնացված էին այնպես, որ լինի որոշակի հեռավորություն պահպանել և միմյանց չխանգարել: Երկարատև տեսակցության սենյակը չի դիտարկվել, քանի որ այցի պահին տեսակցություն կար:

«Երևան-Կենտրոն» ՔԿՀ կատարած պլանային այցի պահին բոլոր տեսակցություններն արգելված էին՝ պայմանավորված համաճարակով: Սակայն Խումբը պարզել է, որ հիմնարկում չկան երկարատև տեսակցության սենյակներ:

Խումբը նշված խնդրին անդրադարձել է նաև 2019թ. տարեկան հաշվետվության մեջ: Նախարարությունը պարզաբանել էր, որ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում նախկինում երկարատև տեսակցությունների սենյակների անհրաժեշտություն չի եղել, սակայն պարզաբանել էր, որ առաջիկայում նախատեսվում է իրականացնել կառուցապատումներ, որի շրջանակներում կներառվի նաև երկարատև տեսակցության սենյակների կառուցումը[4]: Խումբն արձանագրում է, որ խնդիրը դեռևս չի կարգավորվել:

«Արմավիր» ՔԿՀ կատարած պլանային այցի ժամանակ Խումբը դիտարկել է տեսակցության սենյակները: Աշխատակցի փոխանցմամբ հիմնարկն ունի երկարատև տեսակցության 12 սենյակ: Խմբի կողմից դիտարկվել է դրանցից 3-ը: Այցի պահին որևէ սենյակում տեսակցություն չկար: Խումբն արձանագրել է, որ այդ սենյակները չեն ջեռուցվում: Դիտարկվել է նաև մանկական կարճաժամկետ տեսակցությունների սենյակը, որը բարոք վիճակում չէր, թեև տեսակցություններն այցի պահին համավարակով պայմանավորված արգելված էին: Խմբի դիտարկմամբ անհրաժեշտ է բարեկարգել հիմնարկի տեսակցությունների սենյակը և դրանք ապահովել ջեռուցման և օդափոխության համակարգերով:

Խումբը դիտարկել է «Կոշ» ՔԿՀ-ում արտակարգ դրության ժամանակահատվածում տեսակցութունների տրամադրման կարգը: Բուժքրոջ փոխանցմամբ՝ իրականացվում է տեսակցության եկած անձանց ջերմաչափում, այդ մասին համապատասխան գրանցամատյանում նշում է կատարվում: Սակայն տեսակցության ժամանակ հիմնարկի կողմից դիմակներ տրամադրվում են միայն դատապարտյալներին: Տեսակցության եկած անձինք իրենց հետ բերած դիմակներն են կրում: Խմբի դիտարկմամբ՝ անհրաժեշտ է երկարատև և կարճատև տեսակցության սենյակներն ապահովել ախտահանման նյութերով և երկարատև տեսակցության եկած անձանց անձնական պաշտպանության միջոցներ տրամադրել:

[4]ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդների խմբի 2019 թվականի գործունեության տարեկան հաշվետվություն, էջեր 41-42, http://pmg.am/images/PMG_Report_2019.pdf:

«Նուբարաշեն» ՔԿՀ այցի ժամանակ ազատազրկված անձանցից Դ.Գ.-ն բարձրաձայնել է երկարատև տեսակցությունների հետ կապված հետևյալ խնդիրը: Տվյալ անձն ազատազրկման է դատապարտել 15 տարով: Նրա պատժի կրմանը մնացել է 10 տարի: Նա նշեց, որ իր ընտանիքի անդամների հետ կարողանում է երկարատև տեսակցություն ունենալ տարվա մեջ 2 անգամ, ինչը բավականին քիչ է ընտանիքի հետ կապը պահպանելու տեսանկյունից, հատկապես երկարատև ազատազրկման դատապարտված անձանց դեպքում: Ինչպես գիտենք, 2018թ. հուլիսի 12-ին ընդունվել է «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը[5], որով առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տրամադրվում է տարվա ընթացքում առնվազն 6 կարճատև և 2 երկարատև տեսակցության իրավունք: Խնդիրը, փաստորեն այն է, որ տարվա մեջ 2 երկարատև տեակցությունը նշված խմբի ազատազրկման դատապարտված անձանց համար քիչ է: Խմբի դիտարկմամբ՝ անհրաժեշտ է վերանայել նշված կարգավորումը և ավելացնել առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տրամադրվող երկարատև տեսակցությունների քանակը:

2019թ. կատարված օրենսդրական փոփոխությունների շրջանակներում նախատեսվել է, որ դատապարտյալին քրեակատարողական հիմնարկներում տեղաբաշխելու գործընթացում հաշվի առնվի նաև այն հանգամանքը, թե տվյալ հիմնարկում պատիժ կրելու դեպքում արդյոք երաշխավորվում է նրա՝ մերձավոր ազգականների հետ կապը: Սակայն Խումբն արձանագրել է իրավակիրառ պրակտիկայի հետ կապված մի շարք խնդիրներ:

Օրինակ՝ «Արմավիր» ՔԿՀ պատիժ կրող ցմահ դատապարտյալ Ա.Ս.-ն Խմբին հայտնել է, որ ինքը Վանաձոր քաղաքից է: Իր ծնողները բնակվում են Վանաձոր քաղաքում: Ֆինանսական և առողջական խնդիրների պատճառով նրանք չեն կարողանում իրեն տեսակցության գալ: Վերջին անգամ իր ծնողներին տեսել է 2017թ., երբ նրանք եկել են կարճատև տեսակցության: Ցմահ դատապարտյալը

[5]«ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=123919:

նշել է, որ իր ծնողներին Վանաձոր քաղաքից Արմավիր տեղափոխելու դեպքում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը կարող է փոխհատուցել ճանապարհածախսը, բայց նա նշեց, որ իր ծնողների առողջական վիճակը վատ է, և նրանք չեն կարող երկար ճանապարհ անցնել: Իրեն «Վանաձոր» ՔԿՀ տեղափոխելու պահանջը տեղաբաշխման հանձնաժողովը մի քանի անգամ մերժել է[6]:

Նմանատիպ դեպք արձանագրվել է նաև «Նուբարաշեն» ՔԿՀ-ում: Խումբն առանձնազրույց է ունեցել «Նուբարաշեն» ՔԿՀ-ի ցմահ դատապարտյալ Ա.Չ.-ի հետ: Նա Խմբին հայտնել է, որ իր ծնողները բնակվում են Ստեփանավանում: Նրանք վատառողջ են և չեն կարողանում իրեն տեսակցության գալ: Բացի այդ, մայրն աշխատում է դպրոցում և չի կարողանում աշխատանքային օրերին այցելել, իսկ ոչ աշխատանքային օրերին տեսակցություն չի տրամադրվում: Նա մի քանի անգամ դիմել է՝ իրեն «Վանաձոր» ՔԿՀ տեղափոխելու համար, սակայն մերժել են:

Խումբը գտնում է, որ անհրաժեշտ է քննարկել նշված ցմահ դատապարտյալներին «Վանաձոր» ՔԿՀ տեղափոխելու հարցը՝ հաշվի առնելով երկարաժամկետ կամ ցմահ ազատազրկման դեպքում ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապը պահպանելու կարևորությունը: Իսկ լայն առումով՝ Խումբն առաջարկում է վերանայել նշված օրենսդրական փոփոխության կիրառման հետ կապված խոչընդոտները և բարելավել այն:

Խումբը դիտարկել է արտակարգ դրության ժամանակահատվածում ազատազրկված անձանց հեռախոսակապից օգտվելու հետ կապված խնդիրները: Արձանագրվել է, որ արտակարգ դրության ժամանակահատվածում ազատազրկված անձանց հեռախոսաքարտեր չեն տրամադրվել՝ հիմնարկներում տեղադրված հեռախոսակապից օգտվելու համար: Թեև ներկայումս տեսակցություններն արդեն թույլատրվում են, սակայն Խմբի դիտարկմամբ անհրաժեշտ է ազատազրկված անձանց մինչև արտակարգ դրության ավարտը տրամադրել անվճար քարտեր՝ հեռախոսակապից օգտվելու առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու համար:

[6]Տեղաբաշխման հանձնաժողովը կքննարկի դատապարտյալին իր բնակության վայրին մոտ գտնվող հիմնարկ տեղափոխելու հարցը, http://pmg.am/hy/news/successful-cases/2020-12-04-12-48-49:

«Նուբարաշեն» ՔԿՀ-ի ցմահ դատապարտյալ Ա.Չ.-ն Խմբին հայտնել է, որ ընտանիքի հետ կապը մշտապես պահելու նպատակով կարիք կա, որպեսզի ինքը հաճախակի օգտվի հեռախոսազանգից: Նա նշված հիմնավորումներով դիմել է հիմնարկի պետին, սակայն դիմումները չեն բավարարվել: Ա.Չ.-ի խնդրանքն այն է, որ իր նկատմամբ բացառություն կատարեն և թույլ տան հաճախակի օգտվել հեռախոսակապից: Խմբի դիտարկմամբ անհրաժեշտ է փոփոխություն կատարել Ներքին կանոնակարգում և երկարատև կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց հեռախոսազանգեր տրամադրել ավելի հաճախ:

Խումբը դիտարկել է նաև տեսակապից օգտվելու համար նախատեսված սենյակները: «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ի գրադարանում առկա համակարգիչն օգտագործվում է տեսազանգերի համար: Աշխատակիցը Խմբին փոխանցել է, որ կալանավորված անձինք և դատապարտյալները ամսական 2 անգամ տեսազանգ են ունենում հարազատների հետ: «Սևան» ՔԿՀ-ում առկա է տեսազանգի սենյակ, որն ապահովված է համակարգչով: Աշխատակիցները նշել են, որ դատապարտյալները հաճախ են օգտվում տեսազանգերից և հեռախոսազանգերից: «Նուբարաշեն» ՔԿՀ-ն ևս ունի տեսազանգի սենյակ, որտեղ տեղադրված է մեկ համակարգիչ: Ազատազրկված անձինք օրենքով նախատեսված կարգով օգտվում են տեսազանգից: «Կոշ» ՔԿՀ-ում աշխատակիցները նշել են, որ ազատազրկված անձինք առավել հաճախ օգտվում են տեսակապից: Մասնավորապես 23 հոգի 29 անգամ օգտվել է տեսակապից (սկայպ):

Հաշվետու ժամանակահատվածում Խմբի կողմից արձանագրվել է տեսակապից օգտվելու հետ կապված հետևյալ խնդիրը: «Վանաձոր» ՔԿՀ-ի գրադարանում տեղադրված է 1 համակարգիչ՝ համապատասխան սարքավորումներով: Այն նախատեսված է տեսակապի համար: Սակայն աշխատակիցները նշել են, որ ազատազրկված անձինք չեն դիմում՝ տեսակապից կամ հեռախոսակապից օգտվելու համար:

«Արմավիր» ՔԿՀ կատարած այցի ժամանակ արձանագրվել է, որ տեսակապից օրվա կտրվածքով օգտվում է 10-15 անձ, ինչը հիմնարկի համար նորմալ է՝ հաշվի առնելով այնտեղ պահվող ազատազրկված անձանց թիվը: Նշվածից բխում է, որ

արտակարգ դրության ժամանակահատվածում տեսակապից օգտվող անձանց թվի աճ չի նկատվել:

Նշված խնդիրը նկատվել է նաև «Հրազդան» ՔԿՀ-ում: Այնտեղ Խմբին տեղեկացրել են, որ արտակարգ դրության ժամանակահատվածում ազատազրկված անձանց հիմնական բողոքները կապված են եղել տեսակցությունների և հանձնուքների արգելքի հետ: Սակայն տեսակապից և հեռախոսակապից օգտվող անձանց թվի աճ հիմնարկում չի նկատվել: Ազատազրկված անձինք տեսակապից և հեռախոսակապից քիչ են օգտվում:

Այս առումով Խմբի առաջարկությունն այն է, որ միջոցներ ձեռնարկվեն տեսակապից և հեռախոսակապից օգտվելը խրախուսելու համար:

Արտաքին աշխարհի հետ կապը

- ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներն ապահովել երարատև տեսակցությունների սենյակներով:
- Բարեկարգել ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկների տեսակցությունների սենյակները և դրանք ապահովել ջեռուցման և օդափոխության համակարգերով:
- Ավելացնել առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տրամադրվող կարճատև և երկարատև տեսակցությունների քանակը:
- Բարելավել դատապարտյալներին քրեակատարողական հիմնարկներում տեղաբաշխման գործընթացն այնպես, որ գործնականում երաշխավորվի նրանց՝ մերձավոր ազգականների հետ կապը:
- Վերանայել նշված օրենսդրական փոփոխության կիրառման հետ կապված խոչընդոտները և բարելավել այն:
- Ազատազրկված անձանց մինչև արտակարգ դրության ավարտը տրամադրել անվճար քարտեր՝ հեռախոսակապից օգտվելու առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու համար:
- Միջոցներ ձեռնարկել ազատազրկված անձանց շրջանում տեսակապից և հեռախոսակապից օգտվելը խրախուսելու համար:

4. ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ

Ազատազրկված անձանց աշխատելու և աշխատանքային վարձատրության իրավունքը սահմանված է քրեակատարողական ոլորտը կանոնակարգող օրենսդրությամբ: Բացի այդ, Հայաստանի կառավարությունը բազմիցս հայտարարել է, որ պատժողականից անցնում է վերասոցիալականացման քաղաքականության, որի կարևոր բաղադրիչներից են ազատազրկված անձանց աշխատանքով ապահովելը և աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը նպաստելը:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարությունը ևս գործողություններ է նախատեսում՝ ուղղված դատապարտյալների զբաղվածության խթանմանը: Կարևորվում է դատապարտյալների համար աշխատատեղերի ստեղծումը, արհեստակցական միությունների ձևավորումը, նրանց կողմից պատրաստած ապրանքների վաճառքի կազմակերպումն ինչպես առցանց, այնպես էլ այլ եղանակներով: Դիտարկվում է նաև քրեակատարողական հիմնարկներում արտադրության կազմակերպման կարողությունների զարգացումը՝ մասնավոր հատվածի հետ համագործակցության միջոցով: Բացի այդ, նախատեսվում է բարձրացնել «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի կառավարման արդյունավետությունը:

Ուսումնասիրության արդյունքում Խումբը պարզել է, որ 2020թ. քրեակատարողական հիմնարկներում պահվող 144 անձ ընդգրկվել է վարձատրվող աշխատանքներում, իսկ իրենց ցանկությամբ ոչ վճարովի աշխատանք կատարել է 188 անձ: Քրեակատարողական հիմնարկներում իրականացվող վարձատրվող աշխատանքներում ընդգրկվելու վերաբերյալ ազատազրկված անձանցից ներկայացված և մերժված դիմումների հաշվառում չի վարվում:

Ուստի այդ մասին Խմբին տեղեկատվություն չի տրամադրվել:

Չնայած ՀՀ օրենսդրությամբ սահմանված երաշխիքներին և պաշտոնական վիճակագրությանը՝ Խումբը 2020թ. քրեակատարողական հիմնարկներում

իրականացրած մշտադիտարկման ժամանակ արձանագրել է օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայի հետ կապված մի շարք խնդիրներ:

Այսպես, «Վանաձոր» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ դատապարտյալներից մեկը խնդիր է բարձրացրել առ այն, որ 7 տարուց ավելի ազատազրկված անձանց չեն ապահովում աշխատանքով: Խնդիրը հաստատել են նաև քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները՝ նշելով, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 110-րդ հոդվածով սահմանված արգելքը որոշ դատապարտյալների համար խոչընդոտներ է առաջացնում: Խմբի գնահատմամբ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի նշված հոդվածում առկա արգելքը չի կարող հիմք դառնալ անձին աշխատանքի ընդունելը մերժելու համար: Եթե նույնիսկ առկա է նման օրենսդրական արգելք, ապա Խումբն առաջարկում է հանել այն: Առաջարկությունը նախարարության կողմից ընդունվել է ի գիտություն[7]:

2020թ. Խումբը հանդես է եկել նաև մեկ այլ օրենսդրական առաջարկությամբ: ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ է դրվել «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծի 4-րդ հոդվածով օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ կետում նախատեսվում է փոփոխություն կատարել, ըստ որի՝ բաց ուղղիչ հիմնարկից կիսաբաց ուղղիչ հիմնարկ տեղափոխման հիմք կարող է դառնալ նաև տեղափոխումից հետո աշխատանքային հարաբերություններ չձևավորելը կամ աշխատող դատապարտյալի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելուց հետո մեկ ամսվա ընթացքում դատապարտյալի կողմից աշխատանքային նոր հարաբերություններ չձևավորելը բառերով: Խմբի գնահատմամբ նման չափանիշ սահմանելու համար միայն աշխատանքային հարաբերություն չձևավորելը դեռևս բավարար պայման չի կարող դիտվել: Պետք է հաշվի առնել մի շարք հանգամանքներ, օրինակ՝ անձը աշխատունա՞կ է, թե՞՝ ոչ, աշխատանքից խուսափո՞ւմ է, թե՞ գտնելու հնարավորություն չունի: Եթե չի կարող գտնել, ապա այստեղ պետք է լինի նաև պետության աջակցությունը: Այլ կերպ ասած,

[7]ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ կատարած այցելության արդյունքում արձանագրվել են մի շարք խնդիրներ, http://pmg.am/hy/news/successful-cases/2020-06-11-12-36-56:

բացասական հետևանքը պետք է վրա հասնի միայն աշխատանքից չարամիտ խուսափելու դեպքում:

Ինչպես գիտենք, սննդի ապահովման գործընթացը 2019թ. հոկտեմբերից մեկնարկած փորձնական ծրագրի արդյունքում պատվիրակվեց բաց մրցույթում հաղթող ճանաչված մասնավոր ընկերությանը՝ «Արտ Լանչ» ապրանքանիշը ներկայացնող «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ին: 2020թ. տարբեր հիմնարկներ կատարած այցերի արդյունքում Խումբը պարզել է, որ «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն սննդի պատրաստման աշխատանքները կատարում է իր աշխատակազմով, որում, սակայն, ներգրավված չեն ազատազրկված անձինք: Այսինքն՝ այն ազատազրկված անձինք, որոնք մինչ այդ ընդգրկված են եղել սննդի պատրաստման աշխատանքներում, զրկվել են զբաղվածության այդ հնարավորությունից: Այս առումով առաջարկում ենք, որպեսզի «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող մասնագիտական ուսուցման դասընթացների մեջ ներառել «Խոհարարական արվեստ» դասընթացը: Քրեակատարողական հիմնարկները կարող են պայմանավորվածություն ձեռք բերել առ այն, որ այդ դասընթացը բարեհաջող ավարտած ազատազրկված անձանց «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն ներգրավի սննդի պատրաստման աշխատանքներում:

«Նուբարաշեն» ՔԿՀ կատարած պլանային այցի ժամանակ Խումբը պարզել է, որ որոշ ցմահ դատապարտյալներ աշխատում են IT ոլորտում: Նրանց դժգոհությունը կապված էր իրենց համակարգչով ապահովելու հետ: Ցմահ դատապարտյալները նշել են, որ ծրագրավորումը ստեղծագործական մասնագիտություն է, և հնարավոր չէ իրենց հատկացված 5 ժամվա ընթացքում առաջադրանքը կատարել: Նրանք դժվարանում են աշխատանքը կատարել սահմանափակ ժամանակում: Այս առումով Խումբը գտնում է, որ անհրաժեշտ է ավելացնել համակարգիչների քանակը, ինչպես նաև համակարգչով աշխատող ազատազրկված անձանց հատկացվող ժամաքանակը, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ կատարել աշխատանքային պարտականությունները:

«Կոշ» ՔԿՀ կատարած այցի ժամանակ Խումբը պարզել է, որ հիմնարկում առկա է 18 վճարովի աշխատատեղ դատապարտյալների համար, որոնցից 7-ը թափուր

է: Խումբը գտնում է, որ անհրաժեշտ է ավելացնել ազատազրկված անձանց համար նախատեսված աշխատատեղերը, պարզել այդ աշխատատեղերի թափուր մնալու պատճառները և քայլեր ձեռնարկել դրանք համալրելու ուղղությամբ:

Վերասոցիալականացման միջոցառումների շարքում կարևորվում է նաև ազատազրկված անձանց կրթության իրավունքի իրացմանն ուղղված քայլերի ձեռնարկումը, մասնագիտական կրթության նոր ծրագրերի ներդնումը: Այս գործողության շրջանակներում քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարությամբ նախատեսվում է իրականացնել ազատազրկված անձանց մասնագիտական կրթության կարիքների գնահատում և ըստ այդմ մշակել կրթական նոր ծրագրեր կամ փոփոխել առկա ծրագրերը:

2019թ. տարեկան հաշվետվության մեջ Խումբն անդրադարձել է ազատազրկված անձանց հանրակրթության կազմակերպմանը[8]:

2020թ. Խումբն արձանագրել է ազատազրկված անձանց հանրակրթության կազմակերպման հետ կապված հետևյալ խնդիրը: «Նուբարաշեն» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ Խմբին տեղեկացրել են, ազատազրկված անձանց հանրակրթական ուսուցման դասընթացները կազմակերպվել են հիմնարկի վարչական մասում: Սակայն հիմնարկի «զոն նայողները» պահանջել են, որպեսզի դասերը կազմակերպվեն «զոնի» հատվածում, ինչից հետո այդ դասընթացները կազմակերպվել են քննչական սենյակներում: Այս առումով ՀՀ արդարադատության նախարարությանն առաջարկում ենք, որպեսզի հետևողականություն ցուցաբերվի ազատազրկված անձանց աշխատանքի և կրթության իրավունքի անխոչընդոտ իրացմանը, մասնավորապես՝ քայլեր ձեռնարկել, որպեսզի քրեական ենթամշակույթի ազդեցությունը հնարավորինս նվազեցվի և չխոչընդոտի ազատազրկված անձանց իրավունքների իրացմանը:

Մասնագիտական ուսուցման դասընթացների կազմակերպման հետ կապված արձանագրվել են հետևյալ խնդիրները:

«Արմավիր» ՔԿՀ կատարած այցի ընթացքում Խումբն արձանագրել է անգլերենի դասընթացի կազմակերպման հետ կապված հետևյալ խնդիրը: Դասընթացի ընդհանուր տևողությունը 6 ամիս է, անցկացվում է շաբաթական 1 անգամ՝ 2

[8] ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդների խմբի 2019 թվականի գործունեության տարեկան հաշվետվություն, էջեր 35-36, http://pmg.am/images/PMG_Report_2019.pdf:

ժամ 20 րոպե տևողությամբ: Այդ դասընթացը սկսնակների համար է: Ազատազրկված անձինք նշել են, որ 6 ամիսը բավարար չէ լեզվին տիրապետելու համար: Անհրաժեշտ է, որպեսզի ապահովվի դասընթացի շարունակականությունը, այսինքն՝ սկսնակների համար նախատեսված անգլերենի դասընթացին զուգահեռ ավելացնեն անգլերենի այլ մակարդակների դասընթացներ, որպեսզի այն մասնակիցները, որոնք արդեն ստացել են նախնական գիտելիքներ, հնարավորություն ունենան մասնակցել մնացած մակարդակների դասընթացներին և ամբողջությամբ տիրապետել լեզվին:

«Երևան-Կենտրոն» ՔԿՀ կատարած պլանային այցի ժամանակ Խումբն արձանագրել է, որ այնտեղ համակարգչային դասընթացներ չեն անցկացվում: Աշխատակիցը պարզաբանել է, որ չկա պահանջարկ: Խումբը գտնում է, որ անհիրաժեշտ է «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում պահվող ազատազրկված անձանց կրթական կարիքների գնատահում անցկացնել և ըստ այդմ՝ մասնագիտական ուսուցման դասընթացներ կազմակերպել:

Խումբը 2020թ. քրեակատարողական հիմնարկներ կատարած այցերի ընթացքում դիտարկել է նաև գրադարանները: «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ն ունի գրադարան, որտեղ մեծամասամբ գեղարվեստական գրականության գրքեր են: Գրականությունը հայերենով և ռուսերենով է: Հիմնարկն ունի ջեռուցման համակարգ, սակայն խնդիրն այն է, որ գրադարանը ջեռուցվում է ոչ թե այդ համակարգով, այլ տաքացուցիչով: «Արմավիր» ՔԿՀ-ի գրադարանը համալրված է հայերեն, ռուսերեն և պարսկերեն գրքերով: Գրադարանում առկա են նաև համակարգիչներ: Այնտեղ կազմակերպվում են համակարգչային դասընթացներ: «Սևան» ՔԿՀ-ի գրադարանը համալրված է հայերեն, վրացերեն, ռուսերեն գրականությամբ: Հիմնարկի աշխատակիցների փոխանցմամբ՝ դատապարտյալներն օգտվում են գրադարանից: «Կոշ» ՔԿՀ-ի գրադարանում առկա են հոգևոր, իրավական գրականություն: Գրքերը հայերեն և ռուսերեն լեզուներով են:

Սակայն Խումբն արձանագրել է, որ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում մատուռ կամ կրոնական արարողությունների համար նախատեսված այլ սենյակներ չկան: Ըստ պետի կողմից փոխանցված տեղեկության՝ այնտեղ պահվող անձանց քահանա չի

այցելում: «Սևան» ՔԿՀ-ում կա եկեղեցի: Աշխատակիցները հայտնել են, որ քահանան այցելում է յուրաքանչյուր ուրբաթ, ընդհանուր քարոզ է կազմակերպվում: Հիմնարկում պահվում են նաև օտարերկրյա քաղաքացիներ, որոնք նույնպես այցելում են հիմնարկի հայկական եկեղեցի և մոմ վառում: «Արմավիր» ՔԿՀ-ում կա 4 մատուռ, որից դիտարկվել է երկուսը: Դրանք գտնվում են մասնաշենքերում, դռները բաց են: Այնտեղ առկա են խաչքարեր, սրբապատկերներ, մոմ վառելու տեղ: Սակայն հիմնարկում պահվող օտարերկրյա քաղաքացիներն իրենց աղոթքները կատարում են խցերում: «Նուբարաշեն» ՔԿՀ-ում առկա է փոքր մատուռ, սակայն այլ կրոնական համոզմունք ունեցող անձանց համար որևէ պայման ապահովված չէ: Խումբը գտնում է, որ անհրաժեշտ է այլ կրոնական համոզմունք ունեցող անձանց համար պայմաններ ստեղծել կրոնական արարողությունների կազմակերպման համար:

«Հրազդան» ՔԿՀ-ում Խմբի կողմից արձանագրվել է հետևյալ խնդիրը: Հիմնարկն ունի 86 խուց, սակայն զբոսահրապարակների թիվը 6-ն է: Գործնականում դա խնդիրներ է առաջացրել արտակարգ դրության ժամանակահատվածում զբոսանքը կազմակերպելու հարցում՝ սոցիալական հեռավորության պահպանման և ազատազրկված անձանց միջև շփումը հնարավորինս նվազեցնելու տեսանկյունից: Ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավումը, քրեակատարողական հիմնարկների օպտիմալացումը և արդիականացումն ամրագրվել են որպես քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի ռազմավարական ուղղություն: Նշված գործողության շրջանակներում նախատեսվում է լուծարել «Հրազդան» ՔԿՀ-ն և «Սևան» ՔԿՀ-ի տարածքում կառուցել «Հրազդան» ՔԿՀ-ի համար սահմանված լրակազմով՝ փակ, կիսափակ ռեժիմների և կալանավորվածների պահելու վայր, այդ թվում՝ կալանք պատժատեսակի համար նախատեսված մասնաշենք: Խումբն առաջարկում է քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման և արդիականացման ուղղությամբ իրականացվող գործողությունների ժամանակ ուշադրություն դարձնել նշված հիմնախնդրին և զբոսահրապարակները կառուցել այնպես, որ հնարավոր լինի պահպանել ազատազրկված անձանց միջև սոցիալական հեռավորությունը:

Առաջարկություններ

- ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 110-րդ հոդվածում կատարել համապատասխան փոփոխություն և հանել 7 տարուց ավելի ազատազրկված անձանց աշխատանքով ապահովելուն խոչընդոտող արգելքը:
- «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող մասնագիտական ուսուցման դասընթացների մեջ ներառել «Խոհարարական արվեստ» դասընթացը: Համագործակցելով «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի հետ՝ այդ դասընթացը բարեհաջող ավարտած ազատազրկված անձանց ներգրավել սննդի պատրաստման աշխատանքներում:
- Քրեակատարողական հիմնարկներում ավելացնել ազատազրկված անձանց համար նախատեսված համակարգիչների քանակը, ինչպես նաև համակարգչով աշխատող ազատազրկված անձանց հատկացվող ժամաքանակը, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ կատարել աշխատանքային պարտականությունները:
- Ավելացնել ազատազրկված անձանց համար նախատեսված աշխատատեղերը, պարզել այդ աշխատատեղերի թափուր մնալու պատճառները և քայլեր ձեռնարկել դրանք համալրելու ուղղությամբ:
- Հետևողականություն ցուցաբերել ազատազրկված անձանց աշխատանքի և կրթության իրավունքի անխոչընդոտ իրացմանը, մասնավորապես՝ քայլեր ձեռնարկել, որպեսզի քրեական ենթամշակույթի ազդեցությունը հնարավորինս նվազեցվի և չխոչընդոտի ազատազրկված անձանց իրավունքների իրացմանը:
- Ապահովել մասնագիտական ուսուցման դասընթացների շարունակականությունը: Մասնավորապես, սկսնակների համար նախատեսված անգլերենի դասընթացին զուգահեռ ավելացնել անգլերենի այլ մակարդակների դասընթացներ, որպեսզի այն մասնակիցները, որոնք

արդեն ստացել են նախնական գիտելիքներ, հնարավորություն ունենան մասնակցել մնացած մակարդակների դասընթացներին և ամբողջությամբ տիրապետել լեզվին:

- Կատարել ազատազրկված անձանց կրթական կարիքների գնատահում անցկացնել և ըստ այդմ՝ համապատասխան մասնագիտական ուսուցման դասընթացներ կազմակերպել բոլոր քրեակատարողական հիմնարկներում:
- Այլ կրոնական համոզմունք ունեցող անձանց համար կրոնական արարողությունների կազմակերպման համար պայմաններ ստեղծել:
- Քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման և արդիականացման ուղղությամբ իրականացվող գործողությունների ժամանակ ուշադրություն դարձնել նշված հիմնախնդրին և զբոսահրապարակները կառուցել այնպես, որ հնարավոր լինի պահպանել ազատազրկված անձանց միջև սոցիալական հեռավորությունը:



5.ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԱՆ ՔԿՀ–ՆԵՐՈՒՄ

2020 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանց շրջանում պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ դատարան ներկայացվել է 163 միջնորդություն, պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ դատարան միջնորդություն չներկայացնելու վերաբերյալ 497 որոշում, դատարանի կողմից պայմանական վաղաժամկետ ազատ է արձակվել 199 դատապարտյալ, դատարանի կողմից 92 դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատ արձակումը մերժվել է: Խումբը հատկապես կարևորում է Կովիդ-19 համավարակի ժամանակ պայմանական վաղաժամկետ ազատ արձակման գործընթացի արդյունավետ կիրառման անհրաժեշտությունը: Դատապարտյալների պայմանական վաղաժամկետ ազատ արձակման վերաբերյալ վիճակագրական տվյալները՝ ըստ քրեակատարողական հիմնարկների, ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

Հ/Հ	ՔԿՀ	Պ/Վ ներկայացված միջնորդություններ	Պ/Վ միջնորդություն չներկայացնելու վերաբերյալ որոշումներ	Պ/Վ ազատ արձակված դատապարտյալներ	Պ/Վ ազատ արձակումը մերժված դատապարտյալներ
1.	«Նուբարաշեն»	1	27	5	-
2.	«Գորիս»	8	8	9	9
3.	«Աբովյան»	15	8	12	4
4.	«Արմավիր»	19	66	39	7
5.	«Վարդաշեն»	44	19	28	5
6.	«Սևան»	23	67	40	18
7.	«Դատապարտյալների հիվանդանոց»	8	23	7	1
8.	«Վանաձոր»	12	91	17	2
9.	«Կոշ»	10	63	22	20
10.	«Արթիկ»	16	57	13	3
11.	«Հրազդան»	7	65	7	23
12.	«Երևան-Կենտրոն»	-	3	-	-

Դիտորդների խումբը տարբեր դատապարտյալներից ստացել է ահազանգեր, որ քրեակատարողական հիմնարկները պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցը կրկին քննարկելու ժամկետի հաշվարկ դիտարկում են ոչ թե Առաջին ատյանի դատարանի որոշման կայացման պահը, այլ եթե այն բողոքարկվել է, ապա Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանների որոշումների կայացման պահը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինումը դատարանի կողմից մերժվելու դեպքում այդ հարցի կրկին քննարկում կարող է տեղի ունենալ ոչ շուտ, քան **մերժման վերաբերյալ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամիս անց, իսկ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց դեպքում՝ երեք տարի անց**:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 1. Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը օրինական ուժի մեջ է մտնում վերաքննության կարգով բողոքարկման ժամկետն անցնելուց հետո, եթե այն բողոքարկված չի եղել: Առաջին ատյանի դատարանի՝ ***գործն ըստ էության չլուծող դատական ակտն ուժի մեջ է մտնում կայացման պահից: Վերաքննիչ դատարանի և վճռաբեկ դատարանի դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից***, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: 6-րդ հոդվածի 10[1] հոդվածի իմաստով՝ *գործն ըստ էության լուծող դատական ակտեր են համարվում՝* առաջին ատյանի դատարանի դատավճիռը, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումը, ինչպես նաև այդ ակտերի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերը, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում վճռաբեկ դատարանի դատական ակտերը:

Քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում սպառիչ թվարկված են գործն ըստ էության լուծող դատական ակտերը, ինչից հետևում է, որ մնացած բոլոր որոշումները դասվում են գործն ըստ էության չլուծող դատական ակտերի թվին: Մասնավորապես, այդպիսին է համարվում նաև պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու հարցը քննելու մասին դատարանի կողմից կայացված որոշումը: Նույն օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Վերաքննիչ դատարանում գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բողոքները քննվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, իսկ **գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բողոքները՝ միանձնյա**: Պայմանական վաղաժամկետ ազատ արձակվածի վերաբերյալ բողոքները Վերաքննիչ դատարանի կողմից միանձնյա քննելու հանգամանքը լրացուցիչ անգամ փաստում է, որ նման որոշումները հանդիսանում են **գործն ըստ էության չլուծող դատական ակտեր:**

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ Դատարանի կողմից պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում դատապարտյալի՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցը կարող է կրկին քննարկվել **վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամիս անց, եթե դատապարտյալը նշված ժամկետը լրանալուց ոչ շուտ, քան 40 օր առաջ ներկայացրել է դիմում**, բացառությամբ սույն օրենսգրքի 116-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Դատապարտյալի կողմից կրկին դիմում ներկայացվելու դեպքում զեկույցները կազմվում են դիմումն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

Վերոհիշյալ օրենսդրական վերլուծություններով ակնհայտ է, որ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, թե ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցը կրկին

քննարկելու ժամկետի հաշվարկը դիտարկում են **դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից սկսած:**

Թերևս տարընթերցումների առիթ է հանդիսանում ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 13-րդ մասի «վերջնական դատական ակտ» արտահայտությունը: Քրեակատարողական հիմնարկները հիմնվելով հիշյալ արտահայտության վրա, որպես պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցը կրկին քննարկելու ժամկետի հաշվարկ դիտարկում են նշված գործերով վերադաս դատարանների որոշումները (Առաջին ատյանի դաարանի որոշումը բողոքարկված լինելու դեպքում):

Նույնիսկ, եթե դիտարկենք, որ «վերջնական դատական ակտ» արտահայտությունը վերաբերվում է վերադաս դատարանների դատական ակտերին (բողոքարկման առկայության դեպքում), չնայած այն վիճելի է, ապա ակնհայտ է, որ առկա է իրավական հակասություն ՀՀ քրեական դատավարության 434-րդ հոդվածի 3-րդ և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 13-րդ մասերի միջև:

Իրավական հակասությունների հետ կապված հարցերը կարգավորվում են Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքով, որի 40-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հետևյալը.

1. Նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, ըստ հերթականության, կիրառվում են հետևյալ կանոնները, ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ կանոնը կիրառվում է, եթե կիրառելի չէ նախորդ կանոնը՝

1) ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը.

2) ընդհանուր նորմի և հատուկ նորմի միջև կոլիզիաների դեպքում գործում է հատուկ նորմը, սակայն եթե նորմատիվ իրավական ակտն ունի ընդհանուր և հատուկ մասեր, ապա այդ մասերի նորմերի միջև կոլիզիայի դեպքում գործում են ընդհանուր մասի նորմերը.

3) ավելի վաղ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը.

4) ֆիզիկական և իրավաբանական անձանց համար բարենպաստ նորմատիվ իրավական ակտի նորմը, եթե այդ նորմի կիրառմամբ չեն շոշափվում այլ անձանց իրավունքները կամ օրինական շահերը:

Առնվազն երկու կետով հիմնավորվում է, որ պետք է կիրառելի լինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 3-րդ մասը, քանի, որ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ուժի մեջ է մտել ավելի վաղ՝ 12.01.1999, իսկ ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը 10.02.2005թ.: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 3-րդ մասը ֆիզիկական անձանց՝ այն է դատապարտյալների համար նախատեսում է առավել բարենպաստ պայմաններ, քան ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 13-րդ մասն այն ձևով, որով մեկնաբանում են քրեակատարողական հիմնարկների աշխատակիցները:

Վերոգրյալի հիման վրա, գտնում ենք, որ պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցը կրկին քննարկելու ժամկետի հաշվարկի մեկնարկ պետք է դիտարկել Առաջին ատյանի դատարանի կողմից դատական ակտի կայացման պահը:

5.1. Պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի հետ կապված առկա է ևս մեկ խնդիր, որը ազատազրկվածների շրջանում իր էությամբ տարիքի հիմքով խտրականության դրսևորման տիպիկ օրինակ է՝ որը սահմանված է իրավական ակտով:

Այսպես՝ 04.06.2019թ. թիվ 198 հրամանով և 12.07.2018թ. թիվ 336-Լ հրամանի հավելված N 3-ով սահմանվում են ազատազրկված անձի պատիժը կրելուց վաղաժամկետ ազատվելու, կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համար անհրաժեշտ և ՀՀ ԱՆ քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների կողմից զեկույցի կազմման համար դատապարտյալի անձնական գործի և վարքագծի փաստական նկարագրի վերաբերյալ ներկայացված տեղեկանքում ներառված տեղեկատվության գնահատման հիմքում ընկած վավերապայմանները և չափորոշիչները:

Սույն չափորոշիչների «գնահատման վավերապայմանները» վերտառությամբ աղյուսակի 5-րդ և 6-րդ կետերում համապատասխանաբար սահմանվում են հանցագործության կատարման պահին և գնահատման ներկա պահին դատապարտյալի ունեցած **տարիքի** հիմքով տրվելիք միավորները: Մասնավորապես, 5-րդ կետով սահմանված «տարիքը հանցագործություն կատարելու պահին» չափորոշիչով մինչև 28 տարեկան հասակում հանցագործություն կատարած լինելու դեպքում պատիժը կրելուց վաղաժամկետ ազատվելու, կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համար նախատեսվում է 0 միավոր, 28-ից մինչև 55 տարեկանի դեպքում 1 միավոր, իսկ 55-ից բարձրի դեպքում՝ 2 միավոր:

Գնահատման նույնատիպ մոտեցում ցուցաբերվում է նաև 6-րդ կետում՝ «դատապարտյալի տարիքը ներկա պահին» կետով, որի շրջանակներում նույնպես սահմանվում է, որ եթե պատիժը կրելուց վաղաժամկետ ազատվելու, կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համար դիմած դատապարտյալը դիմելու պահին մինչև 28 տարեկան է, ապա նրան տրվում է 0 միավոր, 28-ից մինչև 55 տարեկանի դեպքում 1 միավոր, իսկ 55-ից բարձրի դեպքում՝ 2 միավոր:

Նշված տարբերակված մոտեցումը չունի օբյեկտիվ հիմնավորում և վերոնշյալ չափորոշիչների մեջ 5-րդ և 6-րդ կետերը, որոնք սահմանում են տարիքային հիմքով և անորոշ իրավական տրամաբանությամբ ընտրված տրամադրվելիք միավորներ, ակնհայտորեն չեն բխում խտրականության արգելքի, իրավական որոշակիության և համաչափության սկզբունքների կիրառման հրամայականից:

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից (…), **տարիքից** կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների

հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Թիվ 336-Լ հրամանի և դրան կից հավելվածների գործնական կիրառության արդյունքում, ներքոգրյալ մոտեցման հիմքում ընկած տրամաբանությունը չգտնելուն զուգահեռ, արձանագրում ենք, որ երբ օրենսդիրը մինչև 28 տարեկան հասակում հանցագործություն կատարած լինելու դեպքում անձին պայմանական վաղաժամկետի կամ պատժի փոխարինման համար տրամադրում է 0 միավոր, իսկ 28-55 տարեկանում հանցագործություն կատարած լինելու դեպքում՝ 1 միավոր, ակնհայտորեն խախտվում է տարիքային հիմքով խտրականության սահմանադրական արգելքը: Բնականաբար, ինչպես յուրաքանչյուր իրավակարգավորման մեջ, այստեղ նույնպես *թույլատրելի և իրավական մտածողությանը համապատասխանելի են սահմանափակումները կամ որոշակի խմբերի անձանց տրվող արտոնությունները, սակայն այդ ամենը պետք է տեղավորվի օրենքով սահմանված սկզբունքների շրջանակներում, չդառնա տարակարծությունների և անձի իրավունքների խախտման հիմք:*

Մասնավորապես գտնում ենք, որ սույն հավելվածի մեջ ***տարիքային հիմքով տրամադրվող միավորների հատվածը պետք է ամբողջովին հանվի***՝ տարիքով պայմանավորված խտրականությունների կիրառման, անհասկանալի իրավական մեկնաբանությունների տեղիք չտալու և բոլորի համար հավասար պայմանների առկայությունն ապահովելու համար:

Ուստի, անհրաժեշտ է վերանայել 12.07.2018թ. թիվ 336-Լ հրամանի N 3 հավելվածը, մասնավորապես, ***ամբողջովին հանել*** պատիժը կրելուց վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համար ***տարիքային հիմքով պայմանավորված միավորների տրամադրման 5-րդ և 6-րդ կետերը***:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ միավորներ ձեռք բերելու համար նախատեսված այս կետերը հանելուց հետո կառաջանա խնդիր՝ սահմանված նվազագույն 28 միավորը հավաքելու հարցում, միաժամանակ առաջարկում ենք ***վերանայել և համամասնորեն նվազեցնել ՀՀ արդարադատության***

նախարարի N 198–L հավելվածում սահմանված 28 միավորի չեմը, դրանով ապահովելով վկայակոչված հավելվածների՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու, վերջինիս սկզբունքներից բխելու, որևէ խտրականության տեղիք չտալու և բոլորի համար հավասար ու արդարացի պայմաններ ստեղծելու հանգամանքը:

6. ՄԱՀՎԱՆ, ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՂՈՒԼԻ ԴԵՊՔԵՐԸ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ

6.1. Մահվան դեպքերի ընդհանուր նկարագիրը

Քրեակատարողական հիմնարկներում հայտնված անձանց կյանքի իրավունքի պաշտպանությունը պետության հոգածության ներքո է: Պետությունը, ստանձնելով մի շարք միջազգային պարտավորություններ, պետք է պաշտպանի անազատության մեջ գտնվող անձանց և պատշաճ կարգով քննի նրանց մահվան դեպքերը՝ այդ գործընթացը կազմակերպելով միջազգային չափանիշներին համապատասխան:

Ե՛վ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, և՛ ՄԱԿ-ի մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական դաշնագրերը ներառում եմ ազատությունից զրկված անձանց կյանքի իրավունքի ապահովման ուղղակի և անուղղակի երաշխիքներ: Այսպես, օրինակ, ՄԻԵԿ 2-րդ հոդվածը ուղղակիորեն սահմանում է յուրաքանչյուրի կյանքի իրավունքը և կյանքից դիտավորությամբ զրկելու անթույլատրելիությունը:[9]Այս դրույթը վերաբերում է նաև կալանավորված կամ ազատազրկման դատապարտված անձանց կյանքի իրավունքին: Անազատության մեջ գտնվող անձանց կյանքի իրավունքի ապահովման պարտավորությունը ներառում է այդ անձանց անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելու պարտականությունը: [10]Միաժամանակ որպես անազատության մեջ կյանքի իրավունքի պաշտպանության լրացուցիչ երաշխիք կարող է դիտվել ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածը՝ խոշտանգումների արգելքը.[11] քրեակատարողական հիմնարկներում խոշտանգումները, անմարդկային վերաբերմունքը կարող են հանգեցնել այդտեղ պահվող անձի մահվան, ուստի խոշտանգումներից զերծ լինելու իրավունքի նախատեսումը անուղղակիորեն պաշտպանում է կյանքի իրավունքը: Այս հոդվածը պետությանը պարտավորեցնում է ապահովել ազատությունից զրկված անձանց ֆիզիկական բարեկեցությունը՝ նրանց

---

[9]*Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, հոդված 2:*

[10]*Jasinskis v. Latvia, 2010, § 60; Hilmioğlu v. Turkey 2020, § 70:*

[11]*Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, հոդված 3:*

անհրաժեշտ բժշկական խնամք տրամադրելով:[12] Այնուամենայնիվ, բժշկական օգնության չտրամադրումը, ուշացումը կամ այլ կերպ անբավարար լինելը դեռևս չի նշանակում, որ ՄԻԵԿ 3-րդ հոդվածը խախտվել է: Հիմնավոր պահանջը պետք է տեղեկություններ պարունակի հիվանդության կարգավիճակի, հայցված բուժման, այն տրամադրելու կամ մերժելու մասին, ինչպես նաև այլ ապացույցներ, ինչպես օրինակ՝ փորձագետի եզրակացություն, որում փաստվում է, որ մահացած անձին տրամադրվող բժշկական օգնության հարցում լրջագույն թերացումներ են եղել:[13]Միևույն ժամանակ, բացառապես այն փաստը, որ բժիշկը այցելել է անձին, կամ որոշակի բուժում է նշանակվել, ինքնաբերաբար չի նշանակում, որ բժշկական օժանդակությունը պատշաճ է եղել:[14]

N	Մահվան ամսաթիվ	ՔԿՀ	Մահվան պատճառ/ախտորոշում	Ծննդյան ամսաթիվ	Սեռ
1	07. 01. 2020թ.	«Դատապարտյալների հիվանդանոց»	Քրոնիկական երիկամային անբավարարություն, պոլիօրգանական անբավարարություն	1975թ.	արական
2	10. 01. 2020թ	«Դատապարտյալների հիվանդանոց»	«ՄԻԱՎ-վարակ 3-րդ կլինիկական փուլ, խիստ արտահայտված իմունային անբավարարություն, մարմնի քաշի կորուստ 10%-ից ավել, կախեքսիա 3-րդ աստիճանի: Տարածուն ատոպիկ դերմատիտ, բարդացած ֆուրունկուլյոզով: Քրոնիկական գաստրիտ: Քրոնիկական տոքսիկ հեպատիտ «Ց», հակամարմինները դրական: Երկրորդային սակավարյունություն: Հիպոալբումինեմիա: Լեղաքարային հիվանդություն, լեղապարկի քարեր	1961թ.	Արական
3	20. 01. 2020թ	«Արմավիր»	Նշված չէ	1975թ.	Արական

[12]*Kudła v. Poland, 2000, § 94; Paladi v. Moldova, 2009, § 71; Blokhin v. Russia, 2016, § 136:*

[13] *Krivolapov v. Ukraine, 2018, § 76:*

[14]*Hummatov v. Azerbaijan, 2007, § 116:*

4	02. 05. 2020թ	«Դատապարտյալների հիվանդանոց»	Լյարդի ցիռոզ խառը՝ տոքսիկ և վիրուսային HBV էթիոլոգիայի (HCV Ab(+), HCV PCR (=)), ըստ Չայլդ Պյուի B դաս: Կերակրափողի երակների վարիկոզ լայնացում: Էրոզիվ գաստրոսդուոդենիտ: Քրոնիկ կոլիտ՝ փորկապությունների հակումով: Հոգեկան և վարքային խանգարումներ ափիոնատիպ նյութերի գործածման հետևանքով: Ներկայումս գործածման բացառում (ռեմիսիայի փուլ) (F11.20): Մնացորդային փոփոխություններ թոքերի տուբերկուլյոզից կլինիկական ապաքինումից հետո թոքերի ֆիբրոզի և էմֆիզեմատոզ-բուլոզ փոփոխությունների տեսքով	1969թ.	Արական

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը սահմանում է, որ բոլոր ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք:[15] Իսկ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիան պարտավորեցնում է մասնակից պետություններին պարբերաբար վերանայել ցանկացած ձևով անազատության մեջ գտնվող անձի հետ վերաբերմունքի պայմանները,[16] կանխել պաշտոնական լիազորություններով օժտված անձի կողմից դաժան և անմարդկային վերաբերմունքի ձևերը:[17]

Որպես կանոն, միայն այն հանգամանքը, որ անազատության մեջ գտնվող անձը մահացել է կասկածելի հանգամանքներում, հարց է բարձրացնում արդյոք պետությունը կատարել է այդ անձիր կյանքի իրավունքի պաշտպանության պարտավորությունը:[18]

Կարող ենք արձանագրել, որ յուրաքանչյուր դեպքում, երբ ազատազրկված անձը մահանում է ազատազրկման ընթացքում, օրինակ՝ բանտում, բանտից

---

[15] *Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 10:*

[16] *Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիա, հոդված 11:*

[17] *Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիա, հոդված 16:*

[18] *Karsakova v. Russia, 2014, § 48:*

քաղաքացիական հիվանդանոց կամ այլ վայր տեղափոխվելիս, տեղափոխման վայրում և այլն, պետության կողմից կյանքի իրավունքի լիարժեք պաշտպանության հարցն է առաջ գալիս:

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության տրամադրված տվյալների՝ 2020թ. ընթացքում ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում գրանցվել է մահվան 5 դեպք, որից 1-ը՝ ինքնասպանության:

Մահվան դեպքերի վերաբերյալ ՀՀ ԱՆ կողմից տրամադրվել են հետևյալ տեղեկությունները.

Ինչպես երևում է նախորդ աղյուսակից՝ 2020թ. ընթացքում մահացած բոլոր անձինք եղել են արական սեռի: Նրանց մահվան պատճառները կապվում են առողջական տարբեր խնդիրների, այդ թվում՝ քրոնիկ հիվանդությունների հետ: 20.01.2020թ. «Արմավիր» ՔԿՀ-ում մահացած 1 անձի մահվան պատճառների մասին ՀՀ ԱՆ-ն տեղեկատվությունչի տրամադրել: ԱՆ-ն հայտնել է, որ քրեական գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով՝ **բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, որն անզգուշությամբ առաջացրել է**ուժվող հիվանդի մահ կամ մարդու իմունային անբավարարության վարակի հարուցիչով վարակում, սակայն քրեական գործի վարույթը հետագայում կարճվել է արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Բացի վերևում նշված 4 դեպքերից, արձանագրվել է մահվան ևս մեկ դեպք: 1970թ. ծնված արական սեռի անձը 30.05.2020թ. ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ի կարանտինային խցում հայտնաբերվել է սավանով պատուհանի ճաղավանդակից կախված վիճակում: Ըստ ՀՀ ԱՆ-ի՝ անձը ինքնասպանություն է գործել:

ՀՀ արդարադատության նախարարությունը, տրամադրելով մահացությունների դեպքերի վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն, չի հայտնել այնպիսի համապարփակ տվյալներ, որոնք թույլ կտան եզրակացություններ կատարել անձանց մահացության և պետության կողմից կյանքի իրավունքի պաշտպանության հարաբերակցության վերաբերյալ: Մասնավորապես՝ ԱՆ-ը չի հայտնում՝ ինչ վիճակում են գտնվել ազատազրկված անձինք մինչև իրենց մահը,

արդյոք հացադուլի, ջրադուլի մեջ են եղել, արդյոք ՔԿՀ-ներում պահվելու ընթացքում ստացել են անհրաժեշտ ընթացիկ բուժօգնություն, արդյոք շտապ բուժօգնության անհրաժեշտություն է եղել, ինչ չափով է տրամադրվել այդ բուժօգնությունը, արդյոք դրա չտրամադրումն է հանգեցրել ազատազրկված անձանց մահվան, թե ոչ:

Համեմատելով 2020թ. արձանագրված մահվան դեպքերի քանակը նախորդ տարիներին արձանագրված մահվան դեպքերի քանակի հետ՝ պետք է նշել, որ մահացությունների թիվը, իրավամբ, նվազել է: Այսպես՝ 2019 թվականին քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել է մահվան 21 դեպք, որից 15-ը՝ բնական մահ, 1-ը՝ դժբախտ պատահար, և 5-ը՝ ինքնասպանություն: 2018թ. արձանագրվել է մահվան 18 դեպք, 2017թ.՝ 17 դեպք: Ստորև տեղադրված աղյուսակը ներկայացնում է ՔԿՀ-ներում պահվող անձանց և գրանցված մահերի քանակը՝ ըստ տարեթվերի՝ սկսված 2013 թվականից:

Տարեթիվ	Ազատազրկված անձանց ընդհանուր թիվը	Մահվան դեպքերը
2013 թվական	**4013** 2013 թ. նոյեմբերի 13-ի դրությամբ	**19**
2014 թվական	**3947** 2014 թ. հոկտեմբերի 13-ի դրությամբ	**38**
2015 թվական	**3882** 2015թ. հունվարի 1-ի դրությամբ	**28**
2016 թվական	**3923** 2016թ. հունվարի 1-ի դրությամբ	**29**
2017 թվական	**3833** 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	**17**
2018 թվական	**2266** 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**18**
2019 թվական	**2221**	**21**

	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
2020 թվական	**1967** 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5**

Այնուամենայնիվ մահացությունների թվի նվազման պատճառների վերաբերյալ համապարփակ եզրակացություններ չեն կարող կատարվել, քանի որ ԱՆ-ի տրամադրած տվյալների վերլուծությամբ մահվան դեպքերի հիմնային պատճառները անհայտ են մնում: Միայն կարող ենք փաստել, որ դա որոշակիորեն կարող է կապված լինել ՔԿՀ-ներում պահվող անձանց թվի նվազման հետ, քանի որ ինչպես երևում է աղյուսակից, 2020թ. ընթացքում ՔԿՀ-ներում պահվող անձանց թիվը ավելի քիչ է եղել նախորդ տարիներից յուրաքանչյուրի ընթացքում պահվող անձանց թվից: Այսինքն՝ ազատազրկված անձանց ընդհանուր թվի նվազման միտումները, բնականաբար, փոխում են մահացության ցուցանիշների ընդհանուր պատկերը՝ դարձյալ արձանագրելով նվազման միտումներ:

Անդրադառնալով մահվան դեպքերի գործերով քննությանը՝ ՀՀ ԱՆ-ը նշել է, որ մահվան յուրաքանչյուր դեպքի, այդ թվում՝ ինքնասպանությունների դեպքերի առթիվ նախապատրաստվում են նյութեր, հարուցվում է քրեական գործ և իրականացվում է նախաքննություն, որի ընթացքում նշանակվում է դատաբժշկական փորձաքննություն, ստուգվում է քրեակատարողական ծառայողների կողմից իրենց ծառայողական պարտականությունները կատարելու պատշաճությունը և նրանց գործողությունների համապատասխանությունը օրենսդրությանը: ԱՆ-ը միաժամանակ հայտնում է, որ հաշվետու տարվա ընթացքում արձանագրված մահվան դեպքերի վերաբերյալ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում և ՔԿՀ-ներում ծառայողական քննություններ չեն անցկացվել, այդ դեպքերով որևէ միջնորդագիր չի ներկայացվել, և որևէ քրեակատարողական ծառայող պատասխանատվության չի ենթարկվել:

Նախարարությունը հայտնել է, որ հարուցված քրեական գործերի ընթացքի վերաբերյալ տեղեկատվությանը չի տիրապետում: ՔԿՀ-ներում արձանագրված

մահերի դեպքերով քերական գործերի ընթացքին չհետևելու, տեղեկատվություն չհավաքելու և վիճակագրություն չվարելու պարագայում անհայտ է մնում՝ ինչպես է նախարարությունը մահացությունների պատճառների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքում և վիճակագրություն վարում, ինչպես է առանձնացնում ինքնասպանության դեպքերը, քանի որ յուրաքանչյուր դեպքով քրեական գործի քննության ընթացքում կարող են պարզվել հանգամանքներ, որոնց լույսի տակ, օրինակ՝ ինքնասպանությունը կարող է որակվել որպես սպանության, անզգուշությամբ մահ պատճառելու կամ ինքնասպանության հասցնելու դեպք:

ԱՆ-ը, մշակելով ՔԿՀ-ներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման ռազմավարությունը, նշում է, որ որդեգրել է մի շարք նորարարական լուծումներ: Մասնավորապես՝ 2021-2022թթ. ռազմավարությամբ նախատեսվում է քրեակատարողական հիմնարկներում հոգեբույժների և հոգեբանների օպտիմալ թվաքանակի և պրոֆեսիոնալ կադրերի համալրման ապահովում, քրեակատարողական հիմնարկներից դուրս հոգեբանական ծառայությունների ներդրում, հոգեկան առողջության վիճակի գնահատման, ինքնասպանության և ինքնավնասման թեմաներով ծրագրերի մշակում և համապատասխան վերապատրաստումների իրականացում քրեակատարողական և բժշկական անձնակազմի համար:[19]

Ինքնասպանությունների դեպքերի կանխարգելման ռազմավարության մշակումը և գործողությունների պլանի սահմանումը նույնպես կարող են իրականացվել միայն այդպիսի դեպքերի վերաբերյալ ոչ թե ընդհանրական պատկերացումների հիման վրա, այլ նման դեպքերի խորքային պատճառները վեր հանելու և քրեակատարողական ոլորտի իրադրության համալիր վերլուծության արդյունքում: Խմբին տրամադրված տեղեկատվությունը Արդարադատության նախարարության կողմից ինքնասպանությունների դեպքերի պատճառները իմանալու վերաբերյալ տվյալներ չի բացահայտում: Կարծում ենք՝ մահացությունների, այդ թվում՝ ինքնասպանությունների դեպքերի

---

[19] *ՀՀ արդարադատության նախարարի թիվ 513-Լ հրաման, Հավելված 1, https://www.moj.am/legal/view/article/1366/ :*

կանխարգելման ռազմավարությունը մշակելու համար անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն ՔԿՀ-ների, «Քրեակատարողական *բժշկության* կենտրոն» *ՊՈԱԿ*-ի կողմից տրամադրած սահմանափակ տեղեկատվությունը, այլ նաև հետևել մահացության դեպքերի վերաբերյալ քրեական գործերի ընթացքին՝ վերջնական եզրահանգումներ իրականացնելու համար: Ուստի, առաջարկում ենք մշտադիտարկել ՔԿՀ-ներում գրանցված մահվան դեպքերովքրեական գործերի քննության ամբողջական ընթացքը և գործերով կայացվող վերջնական որոշումների վիճակագրություն վարել, մշտադիտարկման արդյունքներն արտացոլել այս ուղղությամբ մշակվող ռազմավարությունների և գործողությունների պլաններում:

7. ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՑԱԴՈՒԼԻ ԴԵՊՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձինք, զրկված լինելով իրենց հուզող հարցերի վերաբերյալ իրենց կարծիքը բարձրաձայնելու այն եղանակներից, որոնք կարող էին օգտագործել ազատության մեջ, երբեմն իրենց բողոքի ձայն արտահայտում են ինքնավնասումների և հացադուլների միջոցով:

Ըստ Արդարադատության նախարարության տրամադրած տվյալների՝ 2020թ. ընթացքում գրանցվել է ինքնավնասման 537 դեպք: Ստորև ներկայացվում է ինքնավնասումների դեպքերի քանակը՝ ըստ ՔԿՀ-ների:



Ինչպես երևում է աղյուսակից, ինքնավնասման առավել շատ դեպքեր գրանցվել են «Արմավիր» ՔԿՀ-ում՝ 213 դեպք, «Նուբարաշենում»՝ 112 դեպք, «Արթիկում»՝ 85 դեպք: Մյուս ՔԿՀ-ներում ինքնավնասումների դեպքերը համեմատաբար քիչ են: Սակայն յուրաքանչյուր ՔԿՀ-ում ինքնավնասումների տարածվածությունը հաշվելու համար պետք է նկատի ունենալ ոչ միայն ներկայացված դեպքերը, այլև տվյալ ՔԿՀ-ում պահվող անձանց քանակը: Օրինակ՝ «Արմավիր» ՔԿՀ-ում ինքնավնասումների դեպքերի մեծ թիվը կարող է պայմանավորված լինել նաև այն հանգամանքով, որ այդտեղ ավելի շատ անձ է անազատության մեջ պահվում, քան մյուս ՔԿՀ-ներում: Մասնավորապես՝ 2020թ. դեկտեմբերի դրությամբ «Արմավիր» ՔԿՀ-ի լրակազմը եղել է 699 անձ, «Նուբարաշեն» ՔԿՀ-ինը՝ 277 անձ, ինչն համեմատաբար ավելի շատ է, քան մյուս ՔԿՀ-ներում: Այնուամենայնիվ,

ինչպես երևում է աղյուսակից՝ ինքնավնասումների տարածվածությունը պայմանավորված չէ միայն այդտեղ պահվող անձանց թվով, քանի որ որոշ ՔԿՀ-ներում պահվող անձանց թիվը, չնայած ավելի փոքր է այլ ՔԿՀ-ներում պահվող անձանց թվից, սակայն այդտեղ գրանցված ինքնավնասումների թիվը ավելի մեծ է, ինչպես օրինակ՝ «Վանաձոր» ՔԿՀ-ում պահվող 134 անձի դեպքում գրանցվել է ինքնավնասման 48 դեպք, իսկ «Հրազդան» ՔԿՀ-ում պահվող 156 անձի դեպքում գրանցվել է ինքնավնասման 19 դեպք՝ ավելի քիչ, քան «Վանաձորում»: Այլ դեպքում «Աբովյան» ՔԿՀ-ի լրակազմը 52 է, ինչը գրեթե 2 անգամ պակաս է «Վարդաշեն» ՔԿՀ-ի լրակազմից, որը 108 է, սակայն «Աբովյանում» գրանցվել է ինքնավնասման գրեթե 2 անգամ ավելի դեպք, քան «Վարդաշենում»:

Համեմատելով 2020թ. արձանագրված դեպքերը նախորդ տարիների հետ՝ պետք է նշել, որ հաշվետու տարվա ընթացքում ինքնավնասումների դեպքերը նվազել են: 2019թ. արձանագրվել է ինքնավնասման 604 դեպք, 2018թ.՝ 612 դեպք, իսկ 2017թ.՝ 607 դեպք:Այս կապակցությամբ պետք է նշել, որ ինքնավնասումների դեպքերի նվազումը կապված է նաև ՔԿՀ-ներում պահվող անձանց ընդհանուր թվի նվազման հետ: Մասնավորպես՝ 2020թ. բոլոր քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թիվը կազմել է 1967, 2019թ. այն եղել 2221, 2018թ.՝ 2266, 2017թ.՝ 3833:

Նախարարությունը հայտնում է, որ արձանագրված ինքնավնասումները հիմնականում կատարվել են մեկանգամյա օգտագործման սափրիչի սայրի կամ կրակայրիչի մետաղական գլխիկի միջոցով քերծվածք կամ կտրվածք անելու եղանակով, ինչպես նաև զանազան իրեր և առարկաներ կուլ տալու միջոցով: Ինքնավնասում կատարելու հիմնական պատճառներից են քրեական գործի հանգամանքները, նյարդային խնդիրները, առողջական խնդիրները, այլ քրեակատարողական հիմնարկ կամ այլ խուց տեղափոխվելու պահանջը և այլն:

Հարկ է հայտնել, որ դեռևս 2019թ. ընթացքում Խումբը առանձին փորձագետների ներգրավմամբ իրականացրել է «Ինքնավնասում կատարած ազատազրկված անձանց հետ կատարվող աշխատանքների

առանձնահատկությունները» հետազոտությունը՝[20] հաշվի առնելով ՔԿՀ-ներում պահվող անձանց կողմից ինքնավնասումների պատճառների բացահայտման և ինքնավնասումների նվազեցման կարևորությունը: Հետազոտությունն իրականացվել է «Արմավիր» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ներում հոգեբանական, սոցիալական և իրավական աշխատանքների (ՍՀԻԱ) բաժնի աշխատակիցների հետ նախօրոք մշակված հարցաշարի միջոցով, ուսումնասիրվել են նաև մի շարք փաստաթղթեր և ՀՀ ԱՆ-ից ձեռք են բերվել անհրաժեշտ տեղեկություններ: Ըստ հետազոտության ստացած տվյալների՝ ինքնավնասումների հիմնական պատճառներն են տեղափոխվելու և տեղաբաշխման հետ կապված խնդիրները, հոգեկան առողջության խնդիրները և օրգանական խանգարումները, թմրանյութերի կախվածությունները, ցուցադրական վարքը, շանտաժը, քրեական գործի և դրա հետ կապված խնդիրները, անձնական, հոգեբանական կամ ընտանեկան խնդիրները: Ուսումնասիրված ՔԿՀ-ների հոգեբաններին բաժին է ընկնում 150 և ավելի ազատազրկված անձանց հետ աշխատանք, ինչը ոչ միայն հակասում է մասնագիտական էթիկային, այլ նաև անհնար է: ՍՀԻԱ բաժնի լիարժեք աշխատանքը խոչընդոտվում է մի շարք այլ հանգամանքներով ևս, օրինակ՝ աշխատակիցները իրականացնում են թղթաբանության հետ կապված ծավալուն աշխատանք, որը հստակ ժամանակային սահմանափակումներ ունենալու պատճառով դիտարկվում է հրատապ և շահառուների/այցելուների հետ տարվող աշխատանքը փաստացի երկրորդվում է դրան: Օտարերկրացիների հետ մասնագիտական աշխատանքի կազմակերպումը չի իրականանում թարգմանչի մասնակցությամբ, այլ ՔԿՀ-ում այդ լեզուն տիրապետող մեկ այլ դատապարտյալի/կալանավորի օգնությամբ, ինչն իր հերթին ունի մի շարք էթիկական խնդիրներ: Հետազոտության ընթացքում պարզվել է, որ ՔԿՀ-ների հոգեբանները, սոցիալական աշխատողը հիմնարկի նախաձեռնությամբ մոտ երկու տարի և ավել չեն անցել համապատասխան նեղ մասնագիտական վերապատրաստումներ դատապարտյալների հետ աշխատանք իրականացնելու համար: Դիտարկումները ցույց են տվել նաև, որ ՍՀԻԱ բաժնի հոգեբաններն ու սոցիալական աշխատողը չեն ստացել համապատասխան նեղ մասնագիտական

[20] *Հասանելի է 15.03.2021թ. դրությամբ հետևյալ հղումով՝ http://www.pmg.am/images/Self_harm_research.pdf:*

հմտություններ ինքնավնասումներ կատարած անձանց հետ հոգեթերապեվտիկ և կանխարգելիչ աշխատանքներ իրականացնելու համար:

Ելնելով հետազոտության ընթացքում պարզված տվյալներից՝ առաջարկում ենք հաճախակի կազմակերպել նեղ մասնագիտական վերապատրաստումներ սպասարկող աշխատակիցների համար, ապահովել մասնագիտական աշխատանքի համար անհրաժեշտ պայմանները, առանձնացնել ինքնավնասում կատարած անձանց վիճակագրական տվյալները, ինչը հնարավորություն կտա առանձնացնել ինքնավնասման ռիսկային գործոնները և ունենալ ինքնավնասման հետ աշխատանքի հստակ մշակված ռազմավարություն մասնագիտական թիմի կողմից:

Հացադուլը կալանավորված անձի կամ դատապարտյալի կողմից գիտակցաբար և սեփական կամքով ցանկացած տեսակի սննդամթերքից և (կամ) ջրից որոշակի ժամկետով կամ անժամկետ հրաժարվելն է:[21] Հացադուլի մեջ գտնվող անձինք պետք է գտնվեն ամենօրյա բժշկական հսկողության ներքո,[22] նրանց յուրաքանչյուր օր պետք է առաջարկել օրվա սննդաբաժինը,[23] սակայն արգելվում է հացադուլի մեջ գտնվող անձի վրա ճնշում գործադրել հացադուլը դադարեցնելու նպատակով[24] կամ հարկադիր կերակրել նրան:[25] Հացադուլի մեջ գտնվող յուրաքանչյուր անձի հարկադիր կերակրումը պետք է պայմանավորված լինի անձի կյանքը փրկելու մղումով, դրա համար պետք է առկա լինեն բժշկական ցուցումներ:[26]

2020թ. ընթացքում արձանագրվել է հացադուլի 601 դեպք:

---

[21] *ՀՀ կառավարության թիվ 1543-Ն որոշում **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին, կետ 173.1:***

[22] *Նույն տեղը, կետ 173.7:*

[23] *Նույն տեղը, կետ 173.12:*

[24] *Նույն տեղը, կետ 173.9:*

[25] *Նույն տեղը, կետ 173.11:*

[26] *Nevmerzhitsky v. Ukraine, 2005, Ciorap v. Moldova, 2007:*



Վերոգծյալ աղյուսակից պարզ է դառնում, որ հացադուլի առավել շատ դեպքեր եղել են «Արմավիր» ՔԿՀ-ում՝ 187 դեպք, «Վանաձորում»՝ 127 դեպք, «Արթիկում»՝ 72 դեպք, «Նուբարաշենում»՝ 70 դեպք:

8. ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

«Աբովյան» ՔԿՀ-ում2020 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդների խմբի կողմից «Աբովյան» ՔԿՀ կատարվել են ինչպես պլանային, այնպես էլ ընթացիկ այցելություններ: Այսպիսով, 2020 թվականին անազատության մեջ գտնվող կանանց թիվը «Աբովյան» ՔԿՀ-ում զգալիորեն նվազել է: Ազատազրկված 52 կանանցից 29-ը դատապարտյալ է, 23-ը՝ կալանավոր: «Աբովյան» ՔԿՀ-ում կալանքի տակ է գտնվում նաև 5 անչափահաս տղա, և մեկ չափահաս դատապարտյալ: Անդրադառնալով ազատազրկված կանանց թվին, ապա կարելի է համեմատելով նախորդ տարիների հետ, հստակորեն արձանագրել, որ կանանց թիվն այժմ վերջին տարիների կտրվածքով նվազագույնն է: Համեմատության համար նշենք, որ անցած՝ 2019 թվականին ազատազրկված կանանց թիվը 75-ն էր: Ինչ վերաբերում է քրեակատարողական համակարգում կանանց իրավունքներին, ապա՝ ոլորտում առկա խնդիրների դիտարկման չափանիշներն այս ոլորտում ԽԿԿ-ի չափանիշներն էվոլյուցիա են ապրում: Դրանք չպետք է դիտարկել միջազգային այնպիսի փաստաթղթերից կտրված, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերելի նախադեպային որոշումները, Եվրոպայի խորհրդի Եվրոպական բանտային կանոնները,[27] Կին բանտարկյալների հետ վարվեցողության և կին իրավախախտների նկատմամբ կիրառվող՝ ազատազրկման հետ չառնչվող միջոցների վերաբերյալ Միավորված ազգերի

[27]Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ (2006) 2 հանձնարարականը, ընդունվել է 2006 թվականի հունվարի 11-ին:

կազմակերպության կանոնները (Բանգկոկյան կանոններ)[28] և Բանտարկյալների հետ վարվեցողության Միավորված ազգերի կազմակերպության ստանդարտ նվազագույն կանոնները (Նելսոն Մանդելայի կանոններ):[29]

8.2.Պահման պայմաններ և պատշաճ կացարան

Պլանային դիտարկման արդյունքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը դարձյալ արձանագրել է բավական մտահոգիչ վիճակ է քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի մասնաշենքում, որն ամեն տարի ավելի ու ավելի է խարխլվում, խոնավանում և դառնում բնակության համար անհամապատասխան: Առավել ևս, որ այստեղ պահվում են կալանավորված կանայք, փակ ուղղիչ հիմնարկ տեղաբաշխված ազատազրկման դատապարտված կանայք, ինչպես նաև կալանավորված և դատապարտված անչափահասներ, այս մասնաշենքում է նաև կարանտինային հատվածը:

Անչափահաս կալանավորված անձինք պահվում են սույն մեկուսարանի մասնաշենքի խցերում, որտեղ ինչպես միջանցքներում, այնպես էլ՝ խցերում խոնավ է, իսկ պատերի ու առաստաղների ծեփը թափված: Այս առնչությամբ, Եվրոպական բանտային կանոնների համաձայն՝ անչափահասները պետք է պահվեն իրենց համար հատուկ նախատեսված հաստատություններում և չպետք

[28]Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի թիվ 65/229 բանաձևը, ընդունվել է 2010 թվականի դեկտեմբերի 21-ին:
[29]Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի թիվ 70/175 բանաձևը, հավելված, ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 17-ին:

է պահվեն չափահասների համար նախատեսված քրեակատարողական հիմնարկներում[30]:

Բացի պահման պայմանների անբավարար վիճակից, անչափահասներից ոմանք պահվում են առանձնացված խցերում, առանց բավարար մարդկային շփման, ինչը նպաստավոր չէ նրանց հատկապես հոգեկան առողջության համար՝ հատկապես 2020 թվականին, երբ համավարակով պայմանավորված երկարատև արգելք կար ընտանիքի անդամների հետ տեսակցության համար:

Ինչ վերաբերում է հղի կամ մինչև 3 տարեկան երեխա ունեցող կանանց, ապա խմբի այցի ժամանակ «Աբովյան» ՔԿՀ-ում կար հղի կին և մինչև 1 տարեկան երեխա ունեցող մայր: Ի դեպ, երեխան ծնվել է ՔԿՀ-ում, ունի ի ծնե առողջական խնդիրներ: Ըստ բժշկական ծառայության ներկայացուցչի հավաստման, երեխան հսկողության տակ է և պարբերաբար հետազոտություն է անցնում:

Այնուամենայնիվ, «Աբովյան» ՔԿՀ-ն, պահման պայմանների, հիգիենայի և խնամքի տեսանկյունից հարմարեցված չէ հղի կանանց և մինչև 3 տարեկան երեխաների համար բավարար հնարավորություններ ապահովելու տեսանկյունից: ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշման հավելվածի 79-87-րդ կետերը սահմանում են կալանավորվածներին պահելու վայրերում և ուղղիչ հիմնարկներում հղի կանանց կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կամ անչափահաս կալանավորված անձանց ու դատապարտյալներին պահելու պայմանների որոշ առանձնահատկություններ, սակայն դրանք բավարար չեն արտացոլում վերոնշյալ խմբի անձանց կարիքներին համապատասխան միջավայր ունենալու հնարավորությունը: Մասնավորապես խցերը ապահովված չեն տաք ջրով[31], ինչը բարդեցնում է երեխայի խնամքը:

[30] https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae

[31] https://www.arlis.am/documentview.aspx?docid=70166

8.3.Պատժախուց և կարանտին

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկների պատժախցերում և կարանտինային բաժանմունքի խցերում, որոնք գտնվում են մեկուսարանի մասնաշենքում վիճակն անմխիթար է: Հատակը բետոնից, պատերն ու առաստաղը հնամաշ և խոնավ, սանհանգույցն անմխիթար վիճակում է: Նույն իրավիճակն է գրանցվել նաև կարանտինային խցում:

Եթե հաշվի ենք առնում այն հանգամանքը, որ ազատազրկված անձանց առաջին շփումը ՔԿՀ-ի հետ, այսինքն ընդումը կազմակերպվում է կարանտինային բաժանմունքում, ապա նման անմխիթար պայմանների առկայությունը կարող է որոշակի սթրես առաջացնել կալանավորված կամ ազատազրկման դատապարտված անձանց շրջանում: Իսկ կանայք և անչափահասներն էլ ավելի խոցելի են և կարող են ունենալ լրջագույն խնդիրներ: Նաև՝ հաշվի առնելով, որ կալանքը կարող է լինել ոչ երկարատև և անձը դեռևս դատապարտված չէ և նրա մեղավորությունն ապացուցված չէ, նման ծանր պայմաններում կալանավորված կանանց պահելը ևս անընդունելի է:





8.4.Կանանց և անչապահասների Կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ

2020 թվականը ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում նոր մարտահրավերների առաջ կանգնեցրեց՝ COVID-19 համավարակի պատճառով: Պետությունները ստիպված եղան կիրառել բազմաթիվ սահմանափակումներ, որպեսզի կանխեն վարակի տարածումը: Քրեակատարողական համակարգը ևս անմասն չէր այդ սահմանափակումների և հատուկ միջոցների կիրառման անհրաժեշտությունից:

Փաստացի, ինչպես բոլոր ՔԿՀ-ներում, այնպես էլ «Աբովյան» ՔԿՀ-ում գործել են «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» Կառավարության որոշմամբ նախանշված կորոնավիրուսային հիվանդության ներթափանցումը կանխելուն միտված մի շարք միջոցառումներ: Դրանց շրջանակում արգելված են եղել տեսակցությունները, հանձնուքները, ծանրոցներ և փաթեթներ ստանալը, կրոնական ծեսերը, քանի որ նման միջոցառումների ժամանակ հնարավոր չի լինում պահպանել անհրաժեշտ ֆիզիկական տարածություն:

Այս բոլոր միջոցառումները բավական արդյունավետ են եղել կանխարգելման տեսանկյունից և հատկապես «Աբովյան» ՔԿՀ-ում COVID-19 հիվանդության որևէ դեպք՝ ազատազրկված անձանց շրջանում չի արձանագրվել: Սակայն տեսակցության արգելքը չէր կարող իր ոչ բարենպաստ ազդեցությունը չթողնել ազատազրկված կանանց և անչափահասների շրջանում: Իհարկե, ՔԿՀ ադմինիստրացիան փորձել է տեսակցությունների բացը լրացնել տեսազանգերի հնարավորությամբ, սակայն հասկանալի է, որ տեսազանգը չի կարող փոխարինել կենդանի շփմանը, որի կարիքն ունեն կանայք և անչափահասները: Կանանց ինքնազգացողությունն ու հոգեկան տառապանքները էլ ավելի են խորացել 44 օրյա պատերազմի ժամանակ: Մասնավորապես կանանցից մեկը՝ առանձնազրույցի ժամանակ պատմում էր առողջական խնդիրների սրացման մասին, քանի որ որդին եղել է առաջնագծում և որևէ լուր չի ունեցել նրանից: Նրա վերադարձից հետո ևս հնարավոր չի եղել նրա հետ տեսակցել:

Այսպիսով, կանանց, առանց այդ էլ սակավաթիվ տեսակցությունները, որոնց քանակն արդեն իսկ մտահոգիչ է եղել 2019 թվականին և արձանագրվել է Դիտորդների խմբի զեկույցում[32] , 2020 թվականի ընթացքում հնարավոր չի եղել

[32] http://pmg.am/images/PMG_Report_2019.pdf

ապահովել՝ սահմանափակումների հետ կապված օբյեկտիվ պատճառներով, ինչը, սակայն իր բացասական ազդեցությունն է թողել կանանց և անչափահասների սոցիալականացման և վերաինտեգրման գործընթացի վրա:

8.5 Կանանց և անչափահասների կրթություն, աշխատանք և զբաղվածություն

«Աբովյան» ՔԿՀ-ում անչափահասները 2019 թվականից ի վեր, երբ վերականգնվեց կրթություն ստանալու խախտված իրավունքը, շարունակում են հանրակրթությունը: Դասընթացները անխափան իրականացվել են նաև համավարակի պայմաններում, սակայն հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշումը՝ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում իրականացվող հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագիրը 2020 թվականի մարտի 23-ից կազմակերպվել է հեռավար ուսուցման ձևաչափով: Անչափահասների հետ առանձնազրույցի ժամանակ նրանք նշել են, որ հանրակրթությունն իրականացվել է դասացուցակին համապատասխան և ընդհատումներ չեն եղել:

Ինչ վերաբերում է կանանց հետ կրթական միջոցառումներին, ապա շարունակում են իրականացվել դասընթացներ, ընդհանուր առմամբ 13 կին մասնակցել է վարսահարդարման, հայոց լեզվի, անգլերենի, ընտանեկան բռնության և հույզերի կառավարման վերաբերյալ դասընթացների, որոնք իրականացվում են «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Կանանց մեծ մասը ցանկություն ունի աշխատելու, սակայն կան ընդհատումներ այն ծրագրերի շրջանում, որոնք իրականացվում են «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի կողմից, մասնավորապես կրակայրիչների պատրաստման համար մասերի մատակարարման մասով, իսկ կարի արտադրամասն ընդհանրապես չի աշխատում, չի աշխատել նաև պատերազմի ժամանակ, թեև կարելի էր այս ներուժը էֆեկտիվորեն օգտագործել քնապարկեր և այլ անհրաժեշտ պարագաներ կարելու և սահմանագծից եկող պահանջարկը լրացնել:

8.6. Բուժօգնություն և պայքար համավարակի դեմ

Ըստ «Աբովյան» ՔԿՀ բժշկական ծառայության ղեկավարի, **«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրվող դեղորայքը ամբողջովին բավարարում է պահանջարկը: Շատ հազվադեպ է լինում, որ կանայք իրենց հարազատներից դեղորայք խնդրեն, բացառվում է նաև ժամկետանց դեղերի առկայությունը, որը նախորդ տարիներին արձանագրվել է, ինչը խումբը ևս արձանագրել և դիտարկել է:**ՔԿՀ-ում բնակելի գոտիներում և վարչական մասնաշենքերում իրականացվել են ախտահանիչ նյութով սանիտարահիգիենիկ մշակումներ, ազատությունից զրկված անձանց շրջանում պարբերաբար անցկացվել են անհրաժեշտ բուժզննման, այդ թվում՝ ջերմաչափման և արտաքին

զննման աշխատանքներ, առողջության հետ կապված գանգատներ ներկայացնող դատապարտյալները և կալանավորված անձինք անհապաղ ենթարկվել են առավել խորացված ստուգման և ախտորոշիչ հետազոտման: Ամենօրյա ջերմաչափման են ենթարկվել նաև քրեակատարողական ծառայողները, որպեսզի վիրուսը չներթափանցի բնակելի գոտի: Ազատությունից զրկված անձանց տեղաշարժի դեպքում նրանց և նրանց ուղեկցող անձնակազմին տրամադրվել են դիմակներ, ձեռնոցներ: Քրեակատարողական հիմնարկը պաշտպանիչ և ախտահանիչ միջոցներով ապահովվել է ինչպես **«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի,** այնպես էլ՝ Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի միջոցով: Յուրաքանչյուր մասնաշենքի մուտքի մոտ և միջացքներում առկա են ալկոգելով լի տարաներ և փակցված են նոր կորոնավիրուսային վարակի դեմ պայքարին վերաբերող իրազեկող նյութեր:

9. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՁԱՏԱՁՐԿՎԱԾ ԼԳԲՏ (ԼԵՍԲԻ, ԳԵՅ, ԲԻՍԵՔՍՈՒԱԼ, ՏՐԱՆՍ) ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

9.1. Իրավական կարգավորումների ընդհանուր նկարագրությունը

Խտրականությունից զերծ լինելու իրավունքը սահմանված է և՛ ՀՀ Սահմանադրությամբ, և՛ միջազգային կոնվենցիաներով:

Սահմանադրությունը արգելում է խտրականությունը՝ կախված ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, հաշմանդամությունից, գենետիկական հատկանիշներից, աշխարհայացքից, սեռից, գույքային վիճակից, տարիքից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, ծնունդից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:[33]

Մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր գլխավոր փաստաթղթերը, ընդգծելով անձի՝ խտրականությունից զերծ լինելու իրավունքի համամարդկային և արժեքավոր էությունը, սահմանում են մարդու իրավունքների՝ առանց խտրականության իրացվելու հնարավորությունը:[34] Պետք է նշել, որ դրանք վերաբերում են նաև անազատության մեջ պահվող անձանց:

Միջազգային իրավունքում խտրականությունը բնութագրվում է որպես ցանկացած տարբերակում, նախապատվություն կամ բացառում, որը հիմնված է կոնկրետ հանգամանքի վրա, և որը նպատակ ունի սահմանափակել անձի իրավունքների և ազատությունների ճանաչումը կամ իրացումը:[35] Այլ կերպ ասած՝ խտրականությունը նույնանման իրավիճակում գտնվող անհատների նկատմամբ տարբերակված վերաբերմունքն է առանց որևէ ողջամիտ կամ օբյեկտիվ հիմքի:[36]

Քրեակատարողական ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրությունը նույնպես պարունակում է խտրականությունն արգելող նորմեր: ՀՀ

---

[33] ՀՀ Սահմանադրություն, հոդված 29,

[34] Articles 1 (3) and 55 of the UN Charter, Article 7of UNDR,
Article 2,4 (1) and 26 of ICCPR, Article 2 of ICESCR, Article 2 of CRC, Article 14 of ECHR, Protocol No. 12 of the ECHR.

[35] HRC, General Comment No. 18, para. 7.

[36] ECtHR, Judgenment of 23 July 1968, Case of Certain Aspects of the laws on the Use of Languages in Education in Belgium.Willis v. United Kingdom, no. 36042/97, § 48, ECHR 2002-IV, VIRABYAN v. ARMENIA JUDGMENT, no. 40094/05, 02/01/2013.

քրեակատարողական օրենսգիրքը և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը սահմանում են, որ պատիժը կատարելու և կալանքի տակ պահելու կարգն ու պայմանները տարածվում են բոլոր ազատազրկված անձանց վրա՝ անկախ նրանց ռասայից, մաշկի գույնից, սեռից, կրոնից, լեզվից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծնունդից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային կամ այլ դրությունից:[37]

Չնայած ո՛չ ՀՀ Սահմանադրությունը և ներպետական օրենքները, ո՛չ միջազգային պայմանագրերը ուղղակիորեն չեն նախատեսում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը խտրականությունից պաշտպանվող հիմքերի մեջ, այնուամենայնիվ ներպետական օրենսդրության մեջ խտրականությունից պաշտպանվող հիմքերի ցանկը բաց է. իրավական ակտերը չեն բացառում ուղղակիորեն նախատեսված հիմքերից զատ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ, որոնք կարող են տարբերակված վերաբերմունքի թիրախ հանդիսանալ: Սա նշանակում է, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը պետք է դիտարկվեն որպես անձնական և սոցիալական այլ բնույթի հանգամանքներ և հավասարաչափ պաշտպանվեն խտրականությունից, ինչպես սեռը, ռասան, հաշմանդամությունը: Մարդու իրավունքների պայմանագրերի վրա գործող մարմինները բազմիցս վերահաստատել են այս պնդումը՝ սահմանելով, որ գենդերային ինքնությունը և սեռական կողմնորոշումը ամբողջությամբ տեղավորվում են խտրականությունից պաշտպանվող հատկանիշների շարքում:[38]

Սեռական կողնորոշման և գենդերային նույնականացման վերաբերյալ մարդու իրավունքների միջազգային իրավական նորմերի կիրառման Յոգյակարտյան սկզբունքների 9-րդ կետը սահմանում է, որ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի նկատմամբ պետք է արժանապատվությունը հարգող

---

[37]ՀՀ քրեակատարողականօրենսգիրք, հոդված 8, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 2, կետ 3,

[38]Identoba and Others v. Georgia, 2015, § 96), (Salgueiro da Silva Mouta v. Portugal, 1999, § 28; Fretté v. France, 2002, § 32. VejdelandandOthers v. Sweden, 2012, § 55, CommitteeAgainst Torture, GeneralComment No.2: Implementatioů of Article 2 by State parties,paras 21,22,

վերաբերմունք ցուցաբերվի: Սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը յուրաքանչյուր անձի արժանապատվության անբաժանելի մասն են կազմում:[39] ՄԱԿ-ի Հատուկ կարիքներով դատապարտյալների վերաբերյալ ձեռնարկով սահմանվում է, որ նույնասեռական համարվող ազատազրկված անձանց հիմնական կարիքը սեռական շահագործումից պաշտպանված լինելն է, ինչը հիմնականում հնարավոր է տեղի ունենա այլ դատապարտյալների կողմից: Ինչ վերաբերում է վերջիններիս նկատմամբ խտրական դրսևորումներին, ապա խնդրահարույց է դիտարկվում հատկապես իրավաբանական օգնություն տրամադրելու հարցը, քանզի գոյություն ունեցող խորը կարծրատիպերը խոչընդոտում են այս խմբի անձանց ապահովել պատշաճ իրավաբանական օգնությամբ:[40]

9.2. Նախորդ տարիների իրավիճակի հակիրճ ամփոփում

Դիտորդների խումբն իր գործունեության ընթացքում բազմիցս բարձրաձայնել է ազատազրկման վայրերում պահվող ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության դրսևորումների մասին: ՔԿՀ-ներում գտնվող ԼԳԲՏ անձինք ենթարկվում են հոգեբանական ճնշումների, իսկ որոշ դեպքերում՝ սեռական բռնությունների, ոտնձգությունների և շահագործման մյուս ազատազրկված անձանց կողմից: Թե՛ վարչակազմը, թե՛ այլ ազատազրկված անձինք ԼԳԲՏ անձանց անվանում են «արվամոլներ», «համասեռամոլներ», «շեղվածներ» կամ «գոմիկներ» և նրանց նկատմամբ դրսևորում արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք:[41] Խումբը նաև փաստել է, որ նույնասեռականների աշխատանքային շահագործումը ընդունված պրակտիկա է մի շարք ՔԿՀ-ներում: Առաջին և ամենատեսանելի խտրական վերաբերմունքը ի հայտ է գալիս նույնասեռական անձանց խոցելի խմբերի համար նախատեսված խցերում

---

[39] *The Yogyakarta Principles on the Application of International Human Rights Law in relation to Sexual Orientation and Gender Identity,*

[40] *UN Office on Drugs and Crime, Handbook on Prisoners with special needs, 2009,*

[41] *ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, էջ 39, հասանելի է 15.03.2021թ. դրությամբ հետևյալ հղումով՝ http://pmg.am/images/Ditordakan_Zekuyc_Book__2019_for_Web.pdf*

պահելու փաստով, որոնք գրեթե բոլոր ՔԿՀ-ներում գտնվում են անբարենպաստ պայմաններում՝ ոչ հիգիենիկ վիճակ, անկայուն սենյակային ջերմաստիճան, կոտրված մահճակալներ, անսարք վարդակներ, կոտրված ապակիներով պատուհաններ, ամբողջովին չվերանորոգված խցեր:[42] 2019թ. ընթացքում խումբը բազմաթիվ ահազանգեր է ստացել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող ԼԳԲՏ անձանցից, որոնք հիմնականում վերաբերել են պահման պայմաններին, առողջության հետ կապված խնդիրներին, այլ ազատազրկվածների և հիմնարկի վարչակազմի կողմից դրսևորվող խտրական վերաբերմունքի դեպքերին:[43]

9.3. Նույնասեռականությունը քրեական ենթամշակույթում. օրենսդրական փոփոխությունները քրեական ենթամշակույթի քրեականացման ուղղությամբ

Քրեական ենթամշակույթը հատուկ է հետսովետական երկրներին, ինչպիսին է Հայաստանը: Այն իրենից ենթադրում է ՔԿՀ-ում պահվող անձանց աստիճանակարգություն, երբ ամենաբարձր աստիճանին գտնվող անձինք վայելում են ազատազրկված մյուս անձանց և ՔԿՀ-ի աշխատակիցների հարգանքը, իսկ ամենաստորին աստիճանին գտնվողները արժանանում են նվաստացուցիչ վերաբերմունքի: Նույնասեռական անձինք քրեական հիերարխիայում ամենացածր դիրքն են զբաղեցնում:[44] Քրեական ենթամշակույթում «նույնասեռականությունը» կարգավիճակ է, որը կարող է որևէ առնչություն չունենալ անձի սեռական կողմնորոշման հետ, իսկ նույնասեռական տերմինը խարան կամ պիտակ է, որով նվաստացնում և պատժում են այն

---

[42] *ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, էջ 53, հասանելի է 15.03.2021թ. դրությամբ հետևյալ հղումով՝ http://pmg.am/images/PMG_Annual-report_2017.pdf*

[43] *ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, էջ 67, հասանելի է 15.03.2021թ. դրությամբ հետևյալ հղումով՝ http://pmg.am/images/PMG_Report_2019.pdf*

[44] *Նույն տեղը,*

անձանց, ովքեր կատարել են քրեական ենթամշակույթի օրենքներով արգելվող կամ անընդունելի որևէ արարք:[45]

Հիմնարկների աշխատակիցները և մնացած ազատազրկված անձինք նշված խմբի անձանց անվանում են «արվամոլներ», «համասեռամոլներ», «միասեռականներ», «շեղվածներ», «այլազգիներ», «այլմոլորակայիններ», «գոմիկներ», «հարսներ» և այլն:[46]

Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի գործուն մեխանիզմներ ստեղծելու համար պետությունը 2020թ. փոփոխություններ կատարեց ՀՀ քրեական օրենսգրքում: Օրենսդրությունը լրացվեց քրեական ենթամշակույթին հարելը քրեականացնող մի շարք հոդվածներով: Մասնավորապես՝ 2020 թվականից քրեական պատասխանատվություն է նախատեսվում քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու, ստանալու կամ պահպանելու համար,[47] քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու,[48] քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու, դրանում ներգրավվելու,[49] քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու համար:[50]

Օրենսգիրքը պարզաբանում է նաև «օրենքով գողի» և քրեական ենթամշակույթը կրող խմբավորման հասկացությունները: «Օրենքով գող» (քրեական հեղինակություն կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող) է համարվում այն անձը, որը, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն,

---

[45] *ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում եւ մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակականդիտորդների խումբ, «ՀՀ ԱՆ քրեակատարողական համակարգը 2011-2012 թվականներին», Երևան, 2013թ., էջ 30, հասանելի է 15.03.2021թ. դրությամբ հետևյալ հղումով՝ http://bit.do/fLtq3,*

[46] *ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, Երևան, 2021, էջ 29-30, հասանելի է 15.03.2021թ. դրությամբ հետևյալ հղումով՝ https://drive.google.com/file/d/1h_fY3qk_-oYf0v9S76uKCZxdDkN0mJqt/view ,*

[47] *ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 223.1*

[48] *ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 223.2*

[49] *ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 223.3*

[50] *ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 223.4*

համարվում է հեղինակություն և քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացման համար տալիս է հրահանգներ, ինչպես նաև կազմակերպում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կամ մասնակցում է դրանց կամ կազմակերպում կամ իրականացնում է դրամական միջոցների հավաքագրում (այդ թվում՝ մոլախաղերի միջոցով) կամ տնօրինում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման միջոցով ստացված անօրինական օգուտը կամ կատարում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանն ուղղված այլ գործողություններ:[51] «Գողական աշխարհ» է համարվում քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորումը, որը գործում է իր սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, որոնք չեն համապատասխանում պետության սահմանած վարքագծի համապարտադիր կանոններին կամ դրանց իրացման իրավաչափ ձևերին, և որի նպատակը հանցագործություն կատարելն է կամ հանցագործության կատարումը հովանավորելը կամ այլ անձանց հանցավոր արարքի կատարմանը ներգրավելը կամ բռնության, սպառնալիքի, հարկադրանքի կամ անօրինական այլ գործողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելը կամ անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալը:[52]

Քանի որ նախորդիվ նշված փոփոխությունները կատարվել են մոտ 1 տարի առաջ, նոր հոդվածների գործարկման պրակտիկան այնքան լայնամասշտաբ չէ, որպեսզի թույլ տա համապարփակ եզրակացություններ կատարել այդ հոդվածների դրական ազդեցության մասին՝ ԼԳԲՏ անձանց վերաբերությամբ: Մի կողմից կարող ենք հաստատապես նշել, որ տասնամյակներով գոյություն ունեցող գաղափարախոսությունը և պրակտիկաները դժվար է փոխել և վերակերպել միանագամից, դրա համար կպահանջվի որոշակի ժամանակ: Մյուս կողմից կարող ենք նկատել ընդունված նորմերի հնարավոր բացասական ազդեցությունը ԼԳԲՏ ազատազրկված անձանց վրա: Այսպես՝ նույնասեռական անձինք

---

[51] *ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 223.1, 2-րդ մաս*

[52] *ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 223.2, 3-րդ մաս*

միջնորդավորված կերպով ներգրավվում են այնպիսի հակաօրինականգործողություններում, ինչպիսիք են թմրամիջոցների, հեռախոսների, արգելված այլ իրերի ներկրումը բնակելի գոտիներ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք կատարում են հիմնարկների տնտեսական աշխատանքները և համեմատաբար ազատ տեղաշարժի իրավունք են ունենում:[53] Կարևոր է նշել, որ նույնասեռականները այդ դերում են հայտնվում ոչ թե իրենց որոշումով կամ ցանկությամբ, այլ մեխանիկորեն: Քանի որ վերջիններս չունեն որոշում կայացնելու հնարավորություն, նրանք համաձայնվում են կատարել իրենց հանձնարարված աշխատանքները կամ գործառույթները:[54] Նման պարագայում ԼԳԲՏ անձինք կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու, դրա հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու համար: Կարծում ենք՝ այս հանգամանքը պետք է գտնվի իրավակիրառ մարմինների ուշադրության կենտրոնում, ՀՀ քրեական օրենսգրքում ներառված նոր հոդվածների գործողության ընթացքում պետք է հաշվի առնել ԼԳԲՏ անձանց՝ քրեական ենթամշակույթում ներգրավվելու իրական պատճառները, իսկ հետագայում, դրա անհրաժեշտության պարագայում, կատարել օրենսդրական փոփոխություններ, օրինակ՝ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության նկատմամբ խտրականության հետևանքով նրա խոցելի վիճակում հայտնվելը օգտագործելով՝ նրան քրեական աշխարում ներգրավելը նախատեսել որպես հանցագործությունը ծանրացնող հանգամանք:

9.4. Առանձնացված տարաներով սննդի մատուցման դեպք

2020 թ. ընթացքում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքը նույնն է մնացել:

Խմբի անդամները 27.02.2020 թ. ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ արձանագրել են, որ նույնասեռական անձանց համար

---

[53] *ՀՀ արդարադատության ակադեմիա, Բիշարյան, Ա., «Քրեական ենթամշակույթին առնչվող արարքներիքրեաիրավական բնութագիրը: Գիտագործնական մեկնաբանություններ», Երեւան, 2020թ., էջ 29,*

[54] *ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, Երևան, 2021, էջ 33, հասանելի է 15.03.2021թ. դրությամբ հետևյալ հղումով՝ https://drive.google.com/file/d/1h_fY3qk_-oYf0v9S76uKCZxdDkN0mJqt/view ,*

նախատեսված սնունդը շարունակվում է մատուցվել առանձին տարաներով: Մասնավորապես՝ այցելության պահին սնունդ տեղափոխող սայլակի ներքևի հատվածում մեկանգամյա օգտագործման տարաներում տեղադրված է եղել 3 բաժին սնունդ: Արձանագրված փաստը լրացուցիչ անգամ հավաստում է քրեական ենթամշակույթի և առանձին խմբերի նկատմամբ տարբերակվող վերաբերմունքի առկայությունն ու ազդեցությունը տարբեր ոլորտներում, նույնիսկ սննդի բաժանման հարցում:

Խումբը ՀՀ ԱՆ-ին ուղարկված ընթացիկ հաշվետվությամբ առաջարկել է գործողություններ ձեռնարկել քրեական ենթամշակույթի ազդեցությունը և տարբերակված մոտեցումը վերացնելու ուղղությամբ: Խումբը հղում է կատարել ՀՀ կառավարության և ՀՀ արդարադատության նախարարության՝ քրեական ենթամշակույթի դեմ պայքարելու քաղաքական կամքին՝ նշելով, որ խտրականության նման դրսևորումը անընդունելի է, մանավանդ, որ սնունդը «Արմավիր» ՔԿՀ-ում պատրաստվում է մասնավոր կազմակերպության կողմից:

Բարձրացված հիմնախնդրի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունը պատասխան մեկնաբանության մեջ մասնավորապես նշել է, որ սննդի բաժանման գործընթացը կազմակերպելիս այն դեպքում, երբ դատապարտյալները խցում չեն, օրինակ, չվարձատրվող աշխատանքների, փաստաբանական, քննչական կամ բժշկական գործողությունների մասնակցելու պատճառով, իրենց ցանկությամբ իրենց սննդի բաժինները նախապես լցվում են առանձին տարաների մեջ և դրվում կերակրադռնակների վրա, որպեսզի աշխատանքից հետո կարողանան օգտվել հասանելիք սննդից:

Նախարարության պարզաբանմամբ՝ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի ազդեցության դրսևորումների, ինչպես նաև կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ խտրական վերաբերմունքի բացառումը մշտապես գտնվում է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ղեկավարության ուշադրության կենտրոնում:

Այս համատեքստում քրեակատարողական հիմնարկների երկարատև տեսակցության սենյակներում իրականացվում են վերանոնոգման և հարդարման աշխատանքներ, որոնք միտված են ապահովելու միատեսակ բարվոք

պայմաններ՝ անխտիր բոլոր կալանավորված անձանց և դատապարտյալների, ինչպես նաև նրանց տեսակցելու եկած հարազատների համար:

Բացի այդ, ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց ֆինանսական միջոցների հաշվին վերջիններիս պահման պայմանների բարելավման, մասնավորապես՝ խցերի վերանորոգման պրակտիկան հետզհետե բացառելու նպատակով, ինչը նույնպես կարևոր գործընթաց է ազատությունից զրկված անձանց պահման պայմանների միատեսակության ապահովման, ինչպես նաև տարբերակված կամ խտրական վերաբերմունքի բացառման տեսանկյունից:[55]

[55] *Խմբի հրապարակումը դեպքի կապակցությամբ. հասանելի է 15.03.2021թ. դրությամբ հետևյալ հղումով՝ http://www.pmg.am/hy/news/successful-cases/2020-04-01-08-10-57*

10. ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹ

Դիտորդների խումբը իր նախկին զեկույցներում բազմիցս անդրադարձել է քրեական ենթամշակույթի առկայությանը քրեակատարողական հիմնարկներում և դրանից բխող մարդու իրավունքների մարտահրավերներին: Խումբը հանդես է եկել նաև մի շարք առաջարկություններով[56]:

2019 թ. մայիս-հոկտեմբեր ամիսների ընթացքում Դիտորդների խումբը ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հետ համագործակցությամբ ԵՄ ֆինանսավորմամբ իրականացված «Պայքար խոշտանգման և վատ վերաբերմունքի դեմ Վրաստանում, Հայաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում իրականացրել է բանտային ենթամշակույթի խորքային ուսումնասիրություն: Ուսումնասիրության առաջնային նպատակն էր տալ Հայաստանում քրեական ենթամշակույթի, մասնավորապես՝ բանտային ենթամշակույթի մանրամասն բնութագիրը և ցույց է տալ դրա սոցիալական վտանգը: Զեկույցում մանրամասն նկարագրվում է բանտային ենթամշակույթի առանձնահատկությունները և ոչ ֆորմալ հիերարխիկ հարաբերությունները ՀՀ քրեակատարողական հիմնարկներում, բացահայտում է քրեակատարողական հիմնարկներում բանտային ենթամշակույթի տարածվածությունը և դրա ազդեցությունը ազատազրկված անձանց միջև բռնությունների դրսևորումների վրա, բացահայտում է քրեական ենթամշակույթի ազդեցությունը մարդու իրավունքների, մասնավորապես՝ խոցելի խմբերի իրավունքների վրա և ցույց է տալիս անազատության մեջ պահվող անձանց վերաբերմունքը բանտային ենթամշակույթի նկատմամբ:

Նշված ուսումնասիրության շրջանակներում Դիտորդների խմբի կողմից իրականացվել են հարցումներ և հարցազրույցներ 30 կալանավորված և դատապարված անձանց և 12 նախկինում անազատության մեջ գտնված անձանց հետ:

[56] http://pmg.am/hy/news/successful-cases/2018-09-03-10-45-39

2020թ.-ի ընթացքում Խումբը շարունակել է դիտարկել քրեական ենթամշակույթին առնչվող արարքները քրեականացնող օրենքի ազդեցությունը բանտային ենթամշակույթի վրա:

Ստորև ներկայացվում են Դիտորդների խմբի կողմից 2019-2020թթ.-ի ընթացքում իրականացված ուսումնասիրությունների հիմնական բացահայտումները.

- Հայաստանում գրեթե բոլոր քրեակատարողական հիմնարկներում, բացառությամբ «Վարդաշեն», «Երևան-Կենտրոն» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ի առանձնացված մասնաշենքի[57], առկա է բանտարկյալների բաժանում ոչ ֆորմալ հիերարխիկ խմբերի:

Կալանավորները և դատապարտյալները ենթախմբերի (կաստաների) են բաժանվում՝ ըստ հանցավոր հիերարխիայում իրենց զբաղեցրած տեղի:

Բանտային ոչ ֆորմալ հիերարխիայի աստիճանասանդղակի, կամ բուրգի վերևում «օրենքով գողերն» են, նրանցից հետո «լավ տղերքն» են՝ «քրեական հեղինակությունները», «գողականները», «հանցագործ տղերքը»: Հիերարխիայի վերնախավը օժտված է հիերարխիկ գործառույթներով և որոշումներ կայացնելու իրավասությամբ:

Բուրգի ներքևի սանդղակում «հարիֆներն» են, իսկ ամենաստորին սանդղակում «աբսլուգները», «ճտերը», նույնասեռականները և «թռածները»:

Քրեակատարողական հիմնարկներում ոչ ֆորմալ հիերարխիայի կառավարման մեխանիզմը հետևյալն է՝ ամբողջ համակարգը կառավարվում է «օրենքով գողերի կողմից»: Օրենքով գողերն են նշանակում քրեակատարողական հիմնարկներում պատասխանատուներին՝ «զոն նայողներին», որոնք հաշվետու են անմիջապես օրենքով գողերին: Զոն նայողներն էլ իրենց հերթին ընտրում են

[57] Նշված քրեակատարողական հիմնարկներում պահվում են անձինք, ովքեր նախկինում ծառայել և/կամ աշխատել են ուժային և դատական համակարգում, նախկին բարձրաստիճան պաշտոնատար անձինք կամ քրեական օրենսգրքի որոշակի հոդվածներով (օր.՝ Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործություններ՝ պետական դավաճանություն, լրտեսություն և այլն) սահմանվող հանցագործությունների մեջ մեղադրվող կամ դատապարտված անձինք:

իրենց ենթականերին՝ պալաժենիայի անդամներին, խցերի, կացարանների գործերով պատասխանատուներին:

«Օրենքով գողը» ունի բարձրագույն հեղինակություն բանտարկյալների շրջանում: Անազատության մեջ գտնվող «օրենքով գողը» օժտված է քրեակատարողական հիմնարկում տարբեր առանցքային հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավունքով:

«Օրենքով գողերի» կողմից «քրեական հեղինակություններից», «գողականներից» ընտրվում են «զոն նայողները», որոնք էլ ընտրում են «պալաժեննիի» անդամներին՝ իրենց օգնականներին, և նշանակում են խցերի/կացարանների պատասխանատուներին: Պալաժեննին կոլեգիալ մարմին է, որը օժտված է առանցքային որոշումներ կայացնելու և դատապարտյալների միջև, դատապարտյալների և վարչակազմի միջև կոնֆլիկտներ լուծելու իրավասությամբ:

Հարցվածներն առանձացրել են «հանցագործ տղերք» խումբը քրեական հեղինակություններից՝ չնայած վերջիններս նույնպես կիսում են քրեական ենթամշակույթի նույն արժեքները, սակայն չեն հանդիսանում մյուսներին այդ արժեքներն ու գաղափարախոսությունը պարտադրող և իրավասու չեն կոնֆլիկտներ լուծել:

Ոչ ֆորմալ հիերարխիայում առավել մեծ թիվ են կազմում «հարիֆները», որոնց անվանում են նաև «ռաբատյագներ» (այս կատեգորիայի ներկայացուցչին ռուսական գրականության մեջ անվանում են «мужик»):

Այս խմբի ներկայացուցիչները «պորֆեսյոնալ» հանցագործներ չեն: Սրանք ավելի շուտ «պատահական անցորդներ» են, որոնք տարբեր հանցագործություններ կատարելու համար հայտնվել են անազատության մեջ: Այս խմբի ներկայացուցիչներ կարող են լինել վարորդները, արհեստավորները, գիտնականները, ուսուցիչները և այլ մասնագիտության տեր մարդիկ: Նրանց միավորում է այն, որ այս խմբի ներկայացուցիչները որևէ առնչություն չունեն քրեական ենթամշակույթի հետ, նրանց նպատակն է հնարավորինս «անփորձանք» կրել սահմանված պատիժը: Այս խմբի ներկայացուցիչները չեն ձգտում իշխանության կամ դիրքի քրեական/գողական համայնքում, սակայն

անհրաժեշտության դեպքում նրանք կատարում են ոչ ֆորմալ հիերարխիայի վերնախավի անդամների ցուցումները:

Բանտային հիերարխիայի սանդուղքի ամենացածր մակարդակում են գտնվում «աբսլուգները»՝ վճարովի հիմունքներով քրեակատարողական հիմնարկի սպասարկման աշխատանքներում ընդգրկված դատապարտյալները և «ճտերը»՝ անվճար հիմունքներով այլ դատապարտյալներին սպասարկող դատապարտյալները:

Բանտային հիերարխիայում ամենամարգինալ խմբերը «թռածները» և նույնասեռականներն են:

- Բանտային հիերարխիայի որևէ խմբում ներգրավվելը պայմանավորված է բանտարկյալի անցած քրեական կյանքով, հատկապես՝ նրա կողմից կատարված հանցագործության բնույթով: Ելնելով այս տվյալներից՝ մինչև քրեակատարողական հիմնարկ մուտք գործելն արդեն որոշված է անձի խմբային/դասակարգային պատկանելությունը և այս տեղեկատվությունը մատչելի է թե՛ վարչակազմին, թե՛ մյուս բանտարկյալներին:

- «Պալաժեննին» բանտային ենթամշակույթում որոշում կայացնող կոլեգիալ մարմին է, որը գործում է վարչակազմի աջակցությամբ և համաձայնությամբ: Վարչակազմի և բանտային ենթամշակույթի վերնախավի միջև գոյություն ունի փոխշահավետ համագործակցություն: Վարչակազմը քրեակատարողական հիմնարկում կառավարումը իրականացնում է իր լիազորությունների որոշ մասը փոխանցելով ոչ ֆորմալ հիերարխիայի վերնախավին:
- «Քրեական աշխարհը» բավականին հանդուրժող է էթնիկ և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ, ավելին՝ նշված փոքրամասնությունների անդամ լինելը չի խանգարում քրեական «կարիերա» ստեղծելուն, ինչը չի կարելի ասել սեռական փոքրամասնությունների կամ «քրեական հեղինակությունների» կողմից նույնասեռականի կարգավիճակ ստացած անձանց մասին: Այս խմբի

ներկայացուցիչները մեծ ճնշումների են ենթարկվում ոչ ֆորմալ հիերարխիայի ազդեցիկ խմբերի կողմից: Այս խմբի ներկայացուցիչները, ինչպես նաև քրեական ենթամշակույթի կողմից մերժված մյուս խմբերի ներկայացուցիչները՝ «թռածները», «աբսլուգները», «ճտերը» զրկված են իրավունքներից: Այս մոտեցումն ու տարբերակումը մեծ խարան է ստեղծում նշված խմբերի ներկայացուցիչների նկատմամբ և տանում է մարգինալացման:

- Ուսումնասիրության արդյունքում արձանագրել ենք, որ բանտային ենթամշակույթի հիերարխիայի սանդղակով ավելի հեշտ է իջնել, քան՝ բարձրանալ: Բանտարկյալի կարգավիճակը կարող է փոփոխվել նրա կողմից բանտային օրենքները խախտելու, ինչ-որ միջադեպի, ստացված տեղեկատվության հիման վրա: Հիերարխիայի ներսում փոփոխությունների վերաբերյալ որոշումը կայացնում է «պալաժեննին»՝ խցերի պատասխանատուների, կամ կացարանների պատասխանատուների հետ համատեղ: Նման որոշումների կատարումը և դրանց ենթարկվելը համարվում է պարտադիր բոլոր բանտարկյալների համար: «Զոն նայողների» հետ կապված հարցերը լուծվում են օրենքով գողերի կողմից և նույնպես ենթակա են պարտադիր կատարման:
- Ուսումնասիրությունը պարզել է, որ բանտարկյալների՝ բարձրաստիճան ազդեցիկ խմբի մաս դառնալու հիմնական դրդապատճառը քրեակատարողական հիմնարկում իշխանության և արտոնությունների ձեռքբերումն է: Որոշ բանտարկյալներ ընդօրինակում են մյուսներին. շատերը նախընտրում են հարմարվել որոշակի դերի՝ հաստատությունում գտնվելու ընթացքում անվտանգություն ստանալու համար: Այսպես կոչված՝ քրեական աշխարհի ներկայացուցիչները փորձում են «հավաքագրել» երիտասարդներին:
- «Զոն նայողները» կարող են էական ազդեցություն ունենալ քրեակատարողական հաստատության կառավարման վրա, նրանք ակտիվորեն ներգրավված են հաստատության տարբեր հատվածների գործունեության մեջ: Մասնավորապես՝ վարչակազմի հետ

համագործակցությամբ նրանք կարող են ազդել հաստատության կարգի և անվտանգության, բանտարկյալների ընդունման, բողոքարկման կարգի, բանտարկյալների, բանտարկյալների և վարչակազմի միջև կոնֆլիկտների լուծման վրա:

- Ուսումնասիրությունից պարզվել է, որ «զոն նայողները» և պատասխանատուները իրականում միջնորդներ են բանտարկյալների, վարչակազմի և այլ բանտարկյալների միջև: Մասնավորապես՝ վարչակազմը այս համագործակցությունից ձեռք է բերում խաղաղություն հաստատությունում, խուսափում է հիմնարկի խնդիրների հրապարակայնացումից, իսկ դրա դիմաց՝ բանտային ենթամշակույթի վերնախավի ներկայացուցիչները ստանում են տարբեր արտոնություններ:
- Ինչպես ցույց է ստվել ստացված տեղեկատվության վերլուծությունը, բանտարկյալների և վարչակազմի միջև հարաբերությունները, բանտային օրենքների համաձայն, կարծես թե հանգիստ են, սակայն եթե անձնակազմի և ազդեցիկ բանտարկյալների շահերը չհամընկնեն, և անհրաժեշտ լինի ուժի ցուցադրում, բանտարկյալները, առանց մտածելու, վարչակազմի դեմ դուրս կգան «զոն նայողի» որոշումով:
- Բանտային ենթամշակույթի ներկայացուցիչների կողմից խտրականության ենթարկվող նույնասեռականների և նրանց հավասարեցված անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորում կա նաև աշխատակիցների կողմից: Դա արտահայտվում է վարչակազմի կողմից խարան պարունակող բառերի կիրառմամբ և վերաբերմունքով:
- Բանտարկյալների միջև հարաբերությունները անհավասար են: Հիերարխիայի ցածր և միջին դասի ներկայացուցիչները պարտավոր են անվերապահորեն ենթարկվել հիերարխիայի ավելի բարձր դասի ներկայացուցիչների կողմից ընդունված որոշումներին և նրանց սահմանած կանոններին:
- Քրեական ենթամշակույթը բնութագրող հատկանիշ է բռնությունը, որը ոչ ֆորմալ հիերարխիայի ապահովման միջոցն է: Բռնությունը

հիմնականում դրսևորվում է հոգեբանական և տնտեսական բռնության տեսքով:

Հոգեբանական բռնությունը տարածված է բանտային ենթամշակությում, այն բանտարկյալներին ճնշելու կամ որևէ գործողություն իրենց կամքին հակառակ անելու, ենթամշակույթի կանոններին ենթարկեցնելու գործիքներից մեկն է:

Բռնության մեկ այլ տեսակ է տնտեսական բռնությունը, որն արտահայտվում է, այսպես կոչված, «օբշակի»՝ ընդհանուր ֆոնդերի հավաքագրմամբ: «Օբշակի» գումարի հավաքմանը մասնակցում են բոլոր ազատազրկված անձինք՝ բացի ցմահ ազատազրկվածներից և անվճարունակ ճանաչված բանտարկյալներից, որոնք, չնայած չեն մասնակցում «օբշակին», բայց օգտվում են «օբշակի» գումարով ձեռք բերված «գրեֆից»: «Օբշակին» չեն մասնակցում նաև «գողական օրենքով» մերժված խմբերը: Առանձնացվում է նաև «տան փող» կոչվող գումարը, որը գործում է փակ տիպի հիմնարկներում և նախատեսված է վարչակազմին կաշառելու համար:

Ինչ վերաբերում է ֆիզիկական բռնությանը, ուսումնասիրության արդյունքում պարզել ենք, որ բանտային ենթամշակույթի նորմերով արգելվում է դատապարտյալների միջև ծեծկռտուքը, նույնիսկ եթե անձը այնպիսի արարք է կատարել, որը խցակիցների կարծիքով արժանի է ծեծի: Ֆիզիկական ուժ կիրառելու իրավունք ունի միայն «օրենքով գողը» և «զոն նայողը», կամ նրանց հավասարեցված անձը: Միայն նրանք են իրավասու ծեծը որպես պատիժ թույլատրելու և/կամ կիրառելու: Ծեծը ծանր պատիժ է համարվում, հիմնականում այն դրսևորվում է ապտակի ձևով «զոն նայողի», կամ վերջինիս հրահանգով՝ խցակիցների, այլ դատապարտյալների կողմից:

Ծանր պատիժ է համարվում նաև հիերարխիայում զբաղեցրած դիրքի իջեցումը, որի արդյունքում հեռացնում են խցից, կացարանից և ավելի ցածր կարգավիճակ ունեցող անձանց խուց տեղափոխում: Ցածր կարգավիճակի խուց է համարվում «ոչ գողական խուցը», «նույնասեռականների խուցը», «թռածների խուցը»: Կացարանային պայմաններում դա դրսևորվում է քնելու տեղի փոփոխությամբ, կամ ավելի ցածր կարգավիճակ ունեցող կացարան տեղափոխելով:

Սեռական բռնության դեպքերի մասին տեղեկատվություն ուսումնասիրության ընթացքում չի ստացվել: Համաձայն հարցումների արդյունքի՝ բանտային ենթամշակույթի նորմերով բռնաբարությունը արգելվում է:

- Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ այսպես կոչված՝ ոչ ֆորմալ օրենքները/բանտային օրենքները հաստատուն չեն, և դրանցից որոշները հնարավոր է փոխել՝ կախված առկա քաղաքական համակարգից և կառավարության մոտեցումներից: Այսինքն՝ ենթամշակութային կանոնները ընդունվում և հարմարվում են երկրի իրավիճակին և կարիքներին, ինչը այս համակարգի կայունության կարևորագույն որոշիչներից մեկն է: Ցանկացած փոփոխություն ոչ ֆորմալ օրենքներում/բանտային օրենքներում կատարվում է «օրենքով գողերի» նախաձեռնությամբ և որոշմամբ և ըստ էության բխում է նրանց շահերից:

Ըստ հարցվածների՝ քրեական ենթամշակույթին անդամակցելը քրեականացնելու մասին օրենքի ընդունումից հետո օրենքով գողերի հրամանով բոլոր քրեակատարողական հիմնարկներում սկսվել է «պալաժեննին» վերացնելու գործընթաց:

«Պալաժեննին» վերացնելը բնութագրվում է որպես քրեական աշխարհի կողմից «զոն նայողների» և «պալաժեննիի» մյուս անդամների նկատմամբ հոգատարության դրսևորում: Պալաժեննին վերացնելով «զոն նայողներին» և «պալաժեննիի» անդամներին հնարավոր չի լինի քրեական ենթամշակույթին անդամակցելու համար մեղադրանք առաջադրել, սակայն «պալաժեննիի» վերանալով՝ քրեական ենթամշակույթի գաղափարախոսությունը չի դադարել գոյություն ունենալ: Նախկին «զոն նայողները», «պալաժեննիի» անդամները, խցի պատասխանատուները, «ուգլավիկները» անազատության վայրերում դատապարտյալների շրջանում շարունակում են հեղինակություն վայելել և շարունակում են հարցեր լուծել, կոնֆլիկտներ հարթել: Եթե նախկինում այս ամենն արվում էր բացահայտ, ապա այժմ այն լավ քողարկված է:

Հարցվածները նշել են, որ նշված փոփոխությունների հետո բանտարկյալները շարունակում են գումար հավաքել «օբշչակի» համար, սակայն այն հիմնականում ծախսվում է ներսում դատապարտյալների կարիքների համար:

Հարկ է նշել, որ քրեական ենթամշակույթին անդամակցելը քրեականացնելուց հետո բանտային ենթամշակույթի ուսումնասիրությունը դժվարացել է, քանի որ ոչ հիերարխիկ հարաբերություններին առնչվող ցանկացած տեղեկատվություն անազատության մեջ գտնվող անձանց կողմից հնարավորինս գաղտնի է պահվում:

Չնայած վերոհիշյալ խոչընդոտներին, Խումբը կշարունակի դիտարկել քրեական ենթամշակույթի դրսևորումները քրեակատարողական հիմնարկներում և դրանց ազդեցություն մարդու իրավունքների վիճակի վրա:

11. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՅԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը (այսուհետ՝ Դիտորդների խումբ) 2020թ. ընթացքում ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացրել է 2 հրատապ և 18 ընթացիկ հաշվետվություն:

Առաջին հրատապ հաշվետվությամբ Խումբը մտահոգություն էր հայտնել ՔՈՎԻԴ-19 համավարակի պայմաններում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում բժշկական անձնակազմին, վարչակազմին ու ազատազրկված անձանց անհրաժեշտ պաշտպանիչ միջոցներով չապահովելու հարցի շուրջ և ներկայացրել էր հիվանդության կանխարգելմանն ուղղված մի շարք առաջարկություններ:

Մյուս հրատապ հաշվետվությունը վերաբերվել է 2020թ. օգոստոսի 23-ին, ՀՀ ԱՆ ՔԿԾ հատուկ ստորաբաժանման կողմից «Նուբարաշեն» ՔԿՀ կատարած չնախատեսված այցին, որի ընթացքում խցերի խուզարկության ժամանակ հատուկ միջոցներ եւ ֆիզիկական ուժ է կիրառվել մի քանի կալանավորված անձանց նկատմամբ: Հրատապ հաշվետվությամբ Դիտորդների խումբը բարձրացրել է պարզաբանման ենթակա հարցեր, որոնք վերաբերվել են խուզարկության ընթացքին, կալանավորված անձանց վրա առկա մարմնական վնասվածքներին, ինչպես նաև տրամադրված բուժօգնությանը:

Ընթացիկ հաշվետվությունները հիմնականում վերաբերվել են անձանց առողջական, սննդի հետ կապված խնդիրներին, ՔՈՎԻԴ-19 համավարակի պայմաններում ոչ բավարար կանխարգելիչ միջոցառումներին, խցային ոչ բարվոք պայմաններին և այլն:

Նշվածից բացի ուղարկվել են շուրջ 60 գրություններ տարբեր հարցերի շուրջ, այդ թվում՝ դիրքորոշում է ներկայացվել տարբեր օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ, հարցումներ է կատարել ոլորտին վերաբերող հարցերի շուրջ, ներկայացրել է ոլորտային բազմաթիվ առաջարկություններ և այլն:

2020թ. ապրիլի 27-ի թիվ 20-25 գրությամբ Դիտորդների խումբը հայտնել է, որ Հանրապետությունում ՔՈՎԻԴ-19 համավարակի պատճառով ստեղծված իրավիճակում 60 տարեկանից բարձր շեմ և քրոնիկ հիվանդություններ ունեցող անձանց քրեակատարողական հիմնարկներում գտնվելը վտանգավոր է նրանց կյանքի համար: Ուստի առաջարկվել է քննարկել նշված խմբի դատապարտյալներին պատժից ազատելու հնարավորության հարցը:

2020թ. ապրիլի 28-ի թիվ 20-27 գրությամբ Դիտորդների խումբը հղում անելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից 2020 թ.-ի մարտի 15-ին հրապարակված «ՔՈՎԻԴ-19. Պատրաստվածությունը, կանխարգելումը և վերահսկումը բանտերում և ազատությունից զրկելու այլ վայրերում» միջանկյալ ուղեցույցին, նշել է, որ ազատությունից զրկված անձինք, հավանաբար ավելի խոցելի են կորոնավիրուսային հիվանդյթան (ՔՈՎԻԴ-19) բռնկման նկատմամբ, քան՝ ընդհանուր բնակչությունը, քանի որ նրանք տևական ժամանակ միասին բնակվում են փակ տարածքներում: Ավելին, փորձը ցույց է տալիս, որ բանտերը և նմանօրինակ այլ վայրերը, որոնցում մարդիկ հավաքված են փոքր տարածքում, կարող են վարակման աղբյուր լինել և նպաստել վարակիչ հիվանդությունների տարածմանը բանտերում և դրանցից դուրս:

ՀՀ Քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում է պատժից ազատման որոշ մեխանիզմներ: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինումը դատարանի կողմից մերժվելու դեպքում այդ հարցի կրկին քննարկում կարող է տեղի ունենալ ոչ շուտ, քան մերժման վերաբերյալ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամիս անց, իսկ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց դեպքում՝ երեք տարի անց:

Հիմք ընդունելով ԱՀԿ մտահոգությունը և ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում հնարավոր ռիսկերը նվազեցնելու նպատակով՝ Դիտորդների խումբն առաջարկել է մշակել օրենսդրական փոփոխության նախագիծ՝ պայմանական վաղաժամկետ ազատ արձակման առավել ճկուն և արդյունավետ

մեխանիզմ նախատեսելու համար՝ միևնույն ժամանակ պատրաստակամություն հայտնելով մասնակցել հարցի կապակցությամբ բովանդակային քննարկմանը:

2020թ.-ի օգոստոսի13-ի թիվ 20-48 գրությամբ Դիտորդների խումբը «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացրել է հետևյալ նկատառումները.

1. Նախագծի 3-րդ հոդվածում նախատեսվում է օրենսգրքի 101-րդ հոդվածը շարադրել այլ խմբագրությամբ, ըստ որի հիշյալ հոդվածի 2-րդ կետով առաջարկվում է, որ ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելիս Տեղաբաշխման հանձնաժողովը կաշկանդված չէ քրեակատարողական հիմնարկի կողմից ներկայացված միջնորդագրով և դատապարտյալի վարքագիծը կարող է գնահատել՝ հաշվի առնելով.

…

2) պատժի կրման ընթացքում խրախուսանքի առկայությունը.

3) պատժի կրման ընթացքում կարգապահական տույժի առկայությունը.

- Խրախուսանքի առկայության վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ դիրքորոշումը.

Ընդհանրապես խրախուսանքի առկայությունը կարող է համարվել օբյեկտիվ տվյալ, սակայն եթե հարցը դիտարկենք ներկա դրությամբ գոյություն ունեցող իրավիճակով, ապա ուսումնասիրելով վիճակագրությունը, պարզ կդառնա, որ տույժի միջոցները մի քանի տասնյակ անգամ ավելի շատ են կիրառվում, քան խրախուսանքները, 2019 թ. խրախուսանքի են արժանացել մի քանի տասնյակ ազատությունից զրկված անձ, իսկ տույժերը գերազանցել են 2000-ը: Ուստի գտնում ենք, որ այս ժամանակահատվածում խրախուսանքի բացակայությունը չպետք է հանդիսանա բացասական գործոն:

-Տույժի առկայության վերաբերյալ ունենք հետևյալ նկատառումը. Մեր գնահատմամբ պետք է հստակեցնել տույժի առկայությունը ամբողջ ազատազրկման ընթացքում, դատապարտվելուց հետո, և գործող տույժերը: Հատկապես երկարատև ազատազրկման դեպքում,

ենթադրենք 10 տարի առաջ ստացված տույժը, մեր կարծիքով, չպետք է հաշվի առնվի տվյալ գործընթացում:

2. Առաջարկում ենք 101-րդ հոդվածը ավելացնել նոր կետով, որը կսահմանի հստակ ժամկետ՝ տեղաբաշխման հանձնաժողովի կողմից հարցի քննության համար, գործնականում այն կարող է տևել մի քանի ամիս, որը մեր գնահատմամբ արդարացված չէ:

3. Նախագծի 4-րդ հոդվածով օրենսգրքի 102-րդ հոդվածի 2–րդ կետում նախատեսվում է «դիմումը» բառից հետո լրացնել «Բաց ուղղիչ հիմնարկից կիսաբաց ուղղիչ հիմնարկ տեղափոխման հիմք է նաև տեղափոխումից հետո աշխատանքային հարաբերություններ չձևավորելը կամ աշխատող դատապարտյալի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելուց հետո մեկ ամսվա ընթացքում դատապարտյալի կողմից աշխատանքային նոր հարաբերություններ չձևավորելը» բառերով.

Մեր գնահատմամբ նման չափանիշ սահմանելու համար միայն աշխատանքային հարաբերություն չձևավորելը դեռևս բավարար պայման չի կարող դիտվել: Պետք է հաշվի առնել նաև այն, թե արդյո՞ք անձը աշխատունակ է, թե ոչ, աշխատանքից խուսափո՞ւմ է, թե՞ գտնելու հնարավորություն չունի: Եթե չի կարող գտնել, ապա այստեղ պետք է լինի նաև պետության աջակությունը: Այլ կերպ ասած բացասական հետևանքը պետք է վրա հասնի միայն աշխատանքից չարամիտ խուսափելու դեպքում:

4. Օրենսգրքի 102-րդ հոդվածն առաջարկում ենք ավելացնել նոր կետով, որը կսահմանի այն դեպքերը, երբ տեղաբաշխման հանձնաժողովի կողմից մերժվել է ուղղիչ հիմնարկը փոխելու միջնորդագիրը, ապա կրկին ներկայացնելու ժամկետ նույնպես պետք է լինի, օրինակ՝ մերժվելուց 3 ամիս անց, այն դեպքում, երբ սահմանված լինի գործի քննության կոնկրետ ժամկետ, օրինակ՝ միջնորդագիրը ստանալուց հետո մինչև 1 ամիսը: Միևնույն ժամանակ պետք է նախատեսել նաև ընթացակարգ այն դեպքի համար, երբ հիմնարկը

մերժում է ներկայացնել միջնորդագիր: Ներկա դրությամբ, եթե հանձնաժողովը մերժել է ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու միջնորդագիրը և այն բողոքարկվել է դատարան, ապա հարցի կրկին քննարկում տեղի չի ունենում մինչև դատական գործի ավարտը, որը կարող է տևել տարիներ: Մեր գնահատմամբ մերժման բողոքարկումը չպետք է խոչընդոտ հանդիսանա հարցի կրկին քննարկման համար՝ ինչպես պայմանական վաղաժամկետ ազատարձակման դեպքում է:

Դիտորդների խմբի համար առանձնապես խնդրահարույց էր այն հարցը, որ 2020թ. ՀՀ արդարադատության նախարարության կողմից փոփոխության ենթարկվեց Խմբի գործունեության կարգը, որը հանգեցրեց մի շարք խնդիրների: Դիտորդների խմբի գործունեությունը կանոնակարգվում էր ՀՀ արդարադատության նախարարի 2005թ. նոյեմբերի 18-ի թիվ ՔՀ-66-Ն հրամանով սահմանված Խմբի կարգով:

2020թ. մարտի 20-ին ՀՀ արդարադատության նախարարի թիվ 126-Ն հրամանով Խմբի Կարգը ենթարկվեց փոփոխության: Մինչև Կարգի փոփոխությունը ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչների և Խմբի անդամների միջև տեղի են ունեցել քննարկումներ նոր Կարգի նախագծի վերաբերյալ, որի ժամանակ փոխադարձ համաձայնություն է ձեռք բերվել նախագծում առկա վիճահարույց դրույթների վերաբերյալ:

Սակայն նախարարությունը 2020թ. մարտի 20-ի վերոնշյալ հրամանով ընդունել է համաձայնեցված դրույթների հետ առնչություն չունեցող նոր Կարգ, որում տեղ են գտել բազմաթիվ վիճահարույց դրույթներ: Օրինակ՝ 75-րդ կետով սահմանվել է, որ Խմբի անդամը ոչ աշխատանքային ժամերին քրեակատարողական հիմնարկներ կարող է այցելել քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշմամբ: Այսինքն՝ վերահսկողություն իրականացնող մարմինը պետք է հիմնարկի վարչակազմից թույլտվություն ստանա՝ նրան վերահսկելու համար: Տրամաբանությունից դուրս այս կարգավորումը ոչ միայն անհասկանալի է, այլև որևէ կերպ չի տեղավորվում ողջամտության սահմաններում:

Կարգով սահմանված է, որ անհրաժեշտության դեպքում Խումբն իր գործունեության մեջ կարող է ներգրավել համապատասխան մասնագիտական

ուղղվածությամբ փորձագետներ: Փորձագետների համար առաջադրվում է նույն պահանջը, ինչ անդամների համար: Նաև պարտադիր պայման է նրանց մրցույթով ներգրավելը:

Պարտադիր պայմանների մեջ է մտնում, որ որպես փորձագետ առաջադրվող անձը պետք է հանդիսանա հասարակական կազմակերպության այն ներկայացուցիչը, ով ունի քրեակատարողական ոլորտի երկու կամ ավելի տարվա գործունեության փորձ՝ վերջին հինգ տարիների ընթացքում: Օրինակ, եթե անձը բարձրակարգ հոգեբան, կոռուպցիայի գծով մասնագետ կամ սոցիոլոգ է և ցանկություն է հայտնում կամավորության սկզբունքներով աջակցել Դիտորդների խմբին և ներդրում ունենալ, ապա ստացվում է, որ չի կարող ընդգրկվել Խմբում որպես փորձագետ, քանի որ հասարակական կազմակերպության անդամ չէ, քրեակատարողկան ոլորտում փորձ չունի և պարտադիր պետք է մասնակցի մրցույթի:

Նման չհիմնավորված սահմանափակումները խիստ բացասաբար են ազդում Խմբի գործունեության վրա: Նման կարգավորում կիրառելիս նախագիծը մշակողները ճիշտ չեն պատկերացրել Խմբի գործունեությունը, ավելին՝ անտեսել են Խմբի հետ ձեռք բերված ընդհանուր պայմանավորվածությունները: Նոր Կարգում առկա են նաև բազմաթիվ խնդիրներ Խմբում նոր անդամ ընդունելու պահանջների, ընթացակարգի և այլ հարցերի շուրջ:

Այս ամենը խիստ հարցականի տակ է դնում Խմբի բնականոն գործունեությունը: Խմբի անդամները մի քանի անգամ դիմել են ՀՀ արդարադատության նախարարին հանդիպելու և առկա խնդիրները քննարկելու առաջարկով, սակայն մինչև օրս որևէ հանդիպում չի կայացել:

Խումբը նաև իր մտահոգությունն է հայտնել առ այն, որ Խմբի քննարկումների արդյունքում չի պահպանվել ձեռք բերված ընդանուր փոխհամաձայնությունը, և Կարգի փոփոխությունը որևէ կերպով չի համապատասխանում ընդհանուր պայմանավորվածությանը:

Որպես արդյունք 2020թ.նոր Կարգի համաձայն հայտարարված անդամների ընդունելության մրցույթին մասնակցել է ընդամենը 2 դիմորդ, ովքեր հանդիսացել են Խմբի նախկին անդամները, այլ դիմորդ չի եղել:

12.ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ (ՔՈՎԻԴ - 19)

2019 թվականի դեկտեմբերի 31-ին Չինաստանում գրանցվեց նոր տեսակի կորոնավիրուսային վարակ, որը կարճ ժամանակահատվածում տարածվեց ողջ աշխարհով մեկ՝ ազդելով բոլորիս կայնքի վրա: Վարակի արագ տարածումը և մարդկությանը դեռևս հայտնի չլինելու փաստը հանգեցրին տարատեսակ տեղեկատվության առաջացմանը և տարածմանը:

Վարաքից անմասն չմնացին նաև փագ հաստատությունները մասնավորապես ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկները:

2020թ. դեկտեմբերի 30-ի[58] դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող

դատապարտյալներից թեստավորվել է 227 անձ, որոնցից 27-ը՝ դրական, 200-ը՝ բացասական:

2020թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանցից թեստավորվել է 86-ը, որոնցից 12-ը՝ դրական, 74-ը՝ բացասական:

2020թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայողներից (աշխատակիցներից) թեստավորվել է 666 անձ, որոնցից 270-ը՝ դրական, 396-ը՝ բացասական:

Ստորև ներկայացնում ենք կատարված COVID-19 թեստավորման քանակական տվյալների վերաբերյալ կազմված տեղեկանքը՝ ըստ քրեակատարողական հիմնարկների (2020 դեկ. 30–ի դրությամբ).

Հ/Հ	ՀՀ ԱՆ ՔԿ հիմնարկի անվանումը	Կալանավորված անձ		Դատապարտյալ		ՔԿՀ աշխատակիցներ	
		Դրական	Բացասական	Դրական	Բացասական	Դրական	Բացասական
1	«Նուբարաշեն»		8			18	28
2	«Վանաձոր»		4		1	21	7
3	«Վարդաշեն»	2	5	11	9	30	31
4	«Երևան–Կենտրոն»					5	57
5	«Գորիս»				1	19	21
6	«Կոշ»			1	111	17	87
7	«Արթիկ»					5	5
8	«Սևան»			4		27	32

[58] Նշված ժամանակահատվածում ազատազրկվածների թիվը կազմել է **1967 անձ:**

9	**«Աբովյան»**		1			22	18
10	**«Դատապարտյալների հիվ.»**	4	47	5	60	13	17
11	**«Հրազդան»**	6	7	6	11	24	29
12	**«Արմավիր»**		2		7	25	12
13	**ՔԿԾ կենտրոնական մարմին**					44	52
	Ընդամենը՝	12	74	27	200	270	396
		313				**666**	

13. ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐ, ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՔԿՀ–ՆԵՐՈՒՄ

2020 թ–ի օգոստոսի 3-ին ՀՀ ԱՆ ՔԿԾ հատուկ ստորաբաժանման կողմից չնախատեսված այց է կատարվել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ, որի ժամանակ տեղի է ունեցել խուզարկություն, 4-րդ պատժախցում, որտեղ գտնվել են կալանավորված անձինք Հ.Շ. և Ա. Շ.: Համաձայն զեկուցագրի՝ խուզարկության ընթացքում հայտնաբերվել են արգելված իրեր, սակայն քանի որ կալանավորված

նշված անձինք չեն ենթարկվել աշխատակիցների օրինական պահանջներին, նրանց նկատմամբ կիրառվել են հատուկ միջոցներ և ֆիզիկական ուժ: Դիտորդները վերոնշյալ անձանց մոտ, մարմնի տարբեր մասերում արձանագրել են ակնհայտ տեսանելի և թարմ վնասվածքներ, ինչը հարուցել է Դիտորդների խմբի անդամների խիստ մտահոգությունը, Խումբը մտահոգ է կիրառված հատուկ միջոցների և ֆիզիկական ուժի կիրառման իրավաչափության և համաչափության վերաբերյալ: Հարցի առնչությամբ Դիտորդների խումբը Հրատապ հաշվետվությամբ առաջարկել է քննության առարկա դարձնել հատուկ ստորաբաժանման աշխատակիցների գործողությունների օրինականությունը, ուղղել մի շարք հարցադրումներ: Հինգ օր անց ԱՆ պատասխանել է Դիտորդների խմբի Հրատապ հաշվետվությանը, մասնավորապես այն, որ 2020 թ–ի օգոստոսի 23-ի առավոտյան ՀՀ ԱՆ Նուբարաշեն ՔԿՀ–ի թիվ 4-րդ պատժախցում արգելված իրերի առկայության և դրանց օգտագործման վերաբերյալ ստացվել է օպերատիվ տեղեկություն, որը ստուգելու նպատակով կազմակերպվել է չնախատեսված խուզարկությունվերը, որի արդյունքում հայտնաբերվել և առգրավվել է մեկ զույգ անլար ականջակալ, որից հետո խցում պահվող երեք անձանցից երկուսը՝ Ա. Շ–ն և Հ. Շ–ն դրսևորելով հակահիրավական վարքագիծ, սկսել են խոչընդոտել խուզարկության իրականացմանը՝ ստեղծելով լարված իրավիճակ, ինչի պատճառով հնարավոր չի եղել խուզարկությունն ավարտին հասցնել: Իրավիճակից ելնելով նույն օրը նույն խցում չնախատեսված խուզարկություն է իրականացվել 11 քրեակատարողական ծառայողների կողմից, որի շրջանակներում անձնական խուզարկության են ենթարկվել նաև խցում պահվող երեք անձինք՝ Ա. Շ–ն, Հ. Շ–ն և Ա. Խ–ն: 2–րդ չնախատեսված խուզարկության ժամանակ վերը նշված ազատազրկված անձինք դրսևորել են նույնանման վարքագիծ, ինչի արդյունքում աշխատակիցների կողմից հնչել են զգուշացումներ, չդադարեցնելու դեպքում հատուկ միջոցների կիրառության մասին: Ազատազրկված երկու անձինք անտեսել են աշխատակիցների օրինական պահանջները, աշխատակիցների կողմից հնչել է ևս մեկ զգուշացում և տրվել է բավարար ժամանակ հակահիրավական վարքագիծը դադարեցնելու համար, սակայն, բացատրական աշխատանքները չեն տվել դրական արդյունք, որի

հետևանքով՝ Ա. Շ–ի և Հ. Շ–ի նկատմամբ կիրառվել է ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ, ինչի արդյունքում հնարավոր է եղել հանդարտեցնել նրանց: Այնուհետև իրականացվել է խցի խուզարկություն, որի ընթացքում այլ արգելված իրեր չեն հայտնաբերվել: Փաստի առթիվ ՀՀ ԱՆ Նուբարաշեն ՔԿՀ–ում նախապատրաստվել են նյութեր, որոնք 2020 թ–ի օգոստոսի 25-ին ուղարկվել են Երեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազություն: Ա.Շ–ին և Հ. Շ–ին բժշկական օգնության տրամադրման վերաբերյալ նշվել է, որ վերջիններս նույն օրը զննության են ենթարկվել «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ–ի՝ ՀՀ ԱՆ Նուբարաշեն ՔԿՀ–ում տեղակայված բժշկական ստորաբաժանման զեկավարի կողմից, ցուցաբերվել է առաջին բուժօգնություն: Կալանավորված անձինք նշել են, որ խցում ընկել են: Ա. Շ–ի և Հ. Շ–ի ընդունելության ժամանակ նրանց ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարի 2020 թ. հունվարի 14-ի թիվ 10-Լ հրամանով հաստատված՝ խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական հետազոտությունների իրականացման և դեպքերի արձանագրման ձևով փաստաթուղթ, որից ազատազրկված անձինք կտրականապես հրաժարվել են:

Մեկ այլ դրվագով, որն անմիջապես կապ ունի վերը շարադրված դեպքերի նյութերի հետ. Դիտորդների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ նույն պատժախցում (Նուբարաշեն ՔԿՀ, 4-րդ պատժախուց) Ա. Շ–ի և Հ. Շ–ի հետ ներկա է եղել նաև Ա. Խ–ն, նույն այդ օրվա (23.08.2020) խուզարկության ժամանակ վերջինիս նկատմամբ նույնպես կիրառվել են հատուկ միջոց և ֆիզիկական ուժ: Ա. Խ–ի պնդմամբ իր նկատմամ կիրառվել է էլեկտրաշոկ և հասցվել են հարվածներ: Դիտորդների դիտարկմամբ Ա. Խ–ի մարմնի տարբեր հատվածներում առկա էին արնազեղումներ: Դիտորդների խումբն ընթացիկ հաշվետվությամբ (04.09.2020) հայտնել է մտահոգություն Ա. Խ–ի նկատմամբ հատուկ միջոցների և ֆիզիկական ուժի կիրառման իրավաչափության և համաչափության վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել է վերը նշված հարցը նույնպես քննության առարկա դարձնել: Փաստի առնչությամբ Դիտորդների խումբը ԱՆ–ին ուղղել է մի շարք հարցադրումներ:

Դիտորդների խմբի ընթացիկ հաշվետվությանը ԱՆ–ն պատասխանել է 30–օրյա ժամկետից 3 օր ուշացմամբ՝ 07.10.2020–ին հետևյալ բովանդակությամբ.«2020 թվականի օգոստոսի 23-ին ՀՀ ԱՆ Նուբարաշեն ՔԿՀ–ի թիվ 4-րդ պատժախցում կատարված խուզարկության ընթացքում նույն խցում պահվող երեք անձանց նկատմամբ ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ կիրառելու փաստի առթիվ ՔԿՀ–ում նախապատրաստված նյութերը 2020թ–ի օգոստոսի 26-ի թիվ 40/18-10-3349 գրությամբ ուղարկվել են Երեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազություն: Հարկ է նշել, որ խուզարկությանը մասնակից 11 աշխատակիցներից 6–ը հանդիսացել են ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի հատուկ նշանակության բաժնի աշխատակիցներ, 2-ը՝ օպերատիվ բաժնի աշխատակիցներ, իսկ 3-ը՝ Հիմնարկի աշխատակիցներ:»

Այս ամենին հետևել է՝ ՀՀ ԱՆ ՔԾ աշխատակիցների կողմից Նուբարաշեն ՔԿՀ այցելելը և արգելված իրերի առկայության ու դրանց օգտագործման վերաբերյալ ստացված օպերատիվ տվյալների իսկությունը ստուգելու իրավասությունը կարգավորող մի շարք իրավական ակտերի թվարկումը.«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդված, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 77-րդ հոդված, ՀՀ կառավարության 2006 թ–ի «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 1543-Ն որոշմամբ հաստատված հավելվածի X գլխով սահմանված կանոններ, ՀՀ արդարադատության նախարարի 2011 թ–ի նոյեմբերի 21-ի «ՀՀ արդարադատութան նախարարության քրեակատարողական ծառայության անվտանգության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» N 194-Ն, N 195-Ն հրամաններ, ՀՀ արդարադատության նախարարի 2009 թ–ի դեկտեմբերի 18-ի «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողկան ծառայությն կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգերը հաստատելու մասին» N 311–Ն հրաման:

2020 թ–ի օգոստոսի 23-ին Նուբարաշեն ՔԿՀ–ի 4-րդ պատժախցում տեղի ունեցած դեպքերի առնչությամբ Դիտորդների խումբը 25.08.2020-ին ՀՀ գլխավոր դատախազին ներկայացրել է հաղորդում, որում ի թիվս դեպքերի նկարագրության, մասնավորապես նշված է.Խնդրում ենք՝ 1) Հարուցել քրեական գործ հաղորդման մեջ նշված հանգամանքները պարզելու նպատակով, 2) Անհապաղ նշանակել դատաբժշկական փորձաքննություններ՝ ՀՀ ԱՆ ՔԿԾ հատուկ ջոկատայինների գործողություններից տուժած ազատազրկված անձանց նկատմամբ: Ինչին ի պատասխան 31.08.2020 թ–ին ՀՀ գլխավոր դատախազությունից գրությամբ հայտնել են հետևյալը. Ուղարկում եմ ՀՀ ԱՆ ՔԿՀ–ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականցնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Հ. Հարությունյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված հանցագործության մասին հաղորդումը՝ ՀՀ ԱՆ Նուբարաշեն ՔԿՀ–ի կալանավոր Ա. Խ–ի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերին կցելու և համատեղ ընթացքը լուծելու:

14. ՍՆՆԴԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՐԱԿԸ

14.1. Սննդի կազմակերպում

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ ազատությունից զրկված անձն իրավունք ունի առողջության պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ ստանալու:

Նույն օրենսգրքի 76-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալը պատիժը կրելու ընթացքում ապահովվում է օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար անհրաժեշտ սննդով, որի օրական միջին չափաբաժինները սահմանում է ՀՀ կառավարությունը:

Ազատազրկված անձանց արժանապատիվ սննդով ապահովելու հարցը քրեակատարողական համակարգի հիմնական մարտահրավերներից և Խմբի մշտական ուսումնասիրության հարցերից է եղել:

Խումբն այս առնչությամբ դրական է գնահատում 2019-2021 թթ. նախաձեռնված սննդի ոլորտի փոփոխությունները:

2019թ.-ի հոկտեմբերի 15-ից սկսած՝ սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերման փորձնական ծրագիր է իրականացվել ՀՀ-ում ամենամեծ լրակազմն ունեցող ՀՀ ԱՆ «Արմավիր» և «Նուբարաշեն» ՔԿՀ–երում:

Սնունդ է մատակարարվել ընդհանուր հաշվարկով 1.090 անձանց համար: Վերոգրյալի համար ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի կողմից կազմակերպվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնման ընթացակարգ:

Արդյունքում 24.09.2019թ-ին կնքվել է «Արմավիր» և «Նուբարաշեն» ՔԿՀ-երում սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերման ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/9 պայմանագիրը: ՀՀ ԱՆ ՔԿԾ ծառայության կողմից ուղարկված թիվ 40/11-1272 գրության հիման վրա Խմբի կողմից ուսումնասիրվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնման ընթացակարգը, որի շրջանակներում կատարվել է ծանոթություն գնումների մրցույթի 10.09.2019թ.-ի հայտարարությանը[59] և տենդերին մասնակցելու կառուցվածքային չափորոշիչներին:

Ամենացածր գին է առաջարկել «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն, որի հետ 24.09.2019թ.-ին կնքվել է ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/9 սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պայմանագիրը 107,964,500 (մեկ հարյուրյոթ միլիոն ինը հարյուր վաթսունչորս հազար հինգհարյուր) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ: Արդյունքում հաշվարկային տնտեսման ընդհանուր արժեքը կազմել է 1,907,500 (մեկ միլիոն ինը հարյուր յոթ հազար հինգհարյուր): Մեկ անձին տրամադրվող սննդի օրական գումարը կազմում է 1.415 ՀՀ դրամ, ներառյալ բոլոր ծախսերը, այդ թվում՝ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարումները:

---

[59](ANNOUNCEMENT On Request for 14 Հասանելի է հետևյալ հղումով՝ https://armeps.am/epps/cft/prepareViewCfTWS.do?resourceId=5223235 27 Quotation)

Ինչ վերաբերում է սննդի բազմազանությանն ու որակին, 2020 թվականի վերջին Խմբի կողմից կատարված այցերը և ազատազրկված անձանց հետ առանձնազրույցները թույլ են տալիս արձանագրել դրական գնահատական և հիմնականում սննդից գոհունակություն: Նույն իրավիճակը շարունակվել է նաև 2021 թվականի առաջին կիսամյակում: Ճաշացանկը փոխվում է յուրաքանչյուր շաբաթ՝ ապահովելու համար սննդի զանազանությունը, պահպանելով նաև սննդակարգի որակը, կալորիականությունը և այլ օգտակար հատկությունները: Պետք է նշել նաև, որ հաշվետվության ներկայացման պահին «Արտ Լանչ» ապրանքանիշը ներկայացնող «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից ազատազրկված անձանց համար նախատեսված սննդի ապահովման համակարգն արդեն գործում է ԱՆ քրեակատարողական բոլոր 12 հիմնարկներում:

14.2. Ֆոտոշարք

MAXIMUM
MAXIMUM

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

0010 Երևան Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004

Էլ. փոստ info@moj.am

№ /12.2/25180-2021

«16» օգոստոսի 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ՁԱԼՅԱՆԻՆ

(հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, 112 սենյակ,

Էլ. հասցե՝ prisonarmenia@gmail.com)

Հարգելի՛ պարոն Ձալյան,

Ի պատասխան Ձեր՝ 2021 թվականի հունիսի 16-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ստացված թիվ Մ/36022-2021 գրության՝ կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի (այսուհետ՝ Խումբ) 2020 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության մեկնաբանությունները:

Խմբի հետ հանդիպման առաջարկի առնչությամբ հարկ է նշել, որ 2021 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 10:00-ին, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում տեղի է ունենալու հանդիպում, որի շրջանակներում կդիտարկվեն Խմբի գործունեությանն առնչվող հարցերը. նշված հանդիպման մասին Խումբը նախապես տեղեկացվել է:

Առդիր՝ «59» թերթ, «11» լուսանկար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Կատարող՝ Նանե Մելքոնյան

ՀՀ ԱՆ քրեական օրենսդրության, քրեակատարողական

և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչություն

Հեռ. (010) 59-39-43

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում եվ մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2020 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի (այսուհետ՝ Խումբ) 2020 թվականի տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) համալիր ուսումնասիրությունից հետևում է, որ Հաշվետվությամբ անդրադարձ է կատարվել քրեակատարողական համակարգի մի շարք ոլորտներին, մասնավորապես՝ կալանավորված անձանց և դատապարտյալների պահման պայմաններին, տրամադրվող բժշկական օգնությանն ու սպասարկմանը, նոր կորոնավիրուսային վարակին՝ COVID-19-ին, կալանավորված անձանց և դատապարտյալների սննդի կազմակերպմանը և սննդի որակին, քրեակատարողական հիմնարկներում վերասոցիալականացման հնարավորություններին, ենթադրյալ խտրականության դրսևորումներին և այլն:

Ստորև ներկայացնում ենք Հաշվետվության մեջ ընդգրկված՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներին առնչվող դիտարկումների վերաբերյալ համապատասխան մեկնաբանությունները՝ ըստ բաժինների.

ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄ

ՀՀ ԱՆ քրեակատարողական համակարգում գործում են 12 քրեակատարողական հիմնարկներ, որոնցում անազատության մեջ պահվող անձանց լրակազմը սահմանված է ՀՀ արդարադատության նախարարի 2012 թվականի փետրվարի 28-ի «**Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների տեսակները, լրակազմերը, ինչպես նաև կալանավորվածների և դատապարտյալների համար մեկ անձի հաշվարկով բնակելի տարածքները սահմանելու մասին և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 27-ի թիվ 41-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին**» N 30-Ն հրամանով:

Համաձայն վերոնշյալ հրամանով սահմանված լրակազմի՝ քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ կարող են պահվել ընդհանուրը՝ **5346 անձ** (որից 1235-ը՝ կալանավորված անձ, 4111-ը՝ դատապարտյալ):

«Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի լրակազմը ներառում է նաև բուժական ուղղիչ հիմնարկ՝ նախատեսված 424 անձի համար, ուստի Խմբի դիրքորոշումը՝ կապված «Դատապարտյալների հիվանադանոց» քրեակատարողական հիմնարկի ընդհանուր (464 մարդ) լրակազմիցտարանջատել բուժական ուղղիչ հիմնարկի 424 քանակը և այն ընդհանուր լրակազմի մեջ չներառելը, ՀՀ ԱՆ-ն համարում է ոչ ընդունելի:

Հարկ է նշել, որ 16.08.2021 թվականի դրությամբ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ են պահվում 122 անձ, որից

- **107-ը ստանում է համապատասխան բուժօգնություն կամ բուժում**,
- **5-ը ներգրավված է հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում,**
- 5-ը ստացել է համապատասխան բուժում և ենթակա է տեղափոխման:

01.01.2021 թվականի դրությամբ 12 քրեակատարողական հիմնարկներում պահվել է **1967** անձ որից՝

- կալանավորված անձ՝ **914**,
- դատապարտյալ՝ **1053**:

Ինչ վերաբերում է Հաշվետվությամբ ներկայացված վերլուծությանը և թվային անհամապատասխանություններին, ինչպես նաև «գերբնակեցման» առկայությանը (ըստ Խմբի մեկնաբանության), անհրաժեշտ է փաստել, որ **քրեակատարողական հիմնարկներում գերբնակեցում առկա չէ. այդ մասին է փաստում նաև Եվրոպայի խորհրդի տարեկան քրեական վիճակագրությունը (թե՛ 2019, թե՛ 2020 թվականների[60])**: Ինչ վերաբերում է եզակի դեպքերին (այն էլ խցի մակարդակով), երբ ըստ Խմբի մեկնաբանության՝ առկա է

[60] 2020 թվականի տարեկան քրեական վիճակագրությամբ մեր երկիրն ամրապնդում է նախորդ վիճակագրությամբ գրանցած մի շարք ցուցանիշներ և ապահովում դրանց կայունությունը:
- Ըստ զեկույցի՝ Հայաստանում ԵԽ այլ երկրների համեմատ կրկին նկատվել է ազատազրկման մակարդակի նվազում (2018 թվականին Հայաստանի ՔԿՀ-ներում պահվել է 3 հազար 536, 2019 թ-ին՝ 2 հազար 266, իսկ 2020թ-ի հունվարի 31-ին՝ 2 հազար 221 անձ) :
- Զեկույցում համեմատական է տարվել նաև 2010 և 2020 թվականների միջև և արձանագրվել, որ 2010 թվականի համեմատությամբ Հայաստանն արձանագրել է բանտային բնակչության թվի 50.4 % կրճատում, որը համեմատական աղյուսակում երկրորդ լավագույն արդյունքն է:
- Նույն զեկույցի համաձայն՝ ներկայում Հայաստանը 100 հազար բնակչի հաշվով անազատության մեջ գտնվողների թվով դասվում է ամենացածր ցուցանիշն ունեցող երկրների շարքին և համեմատելի է Գերմանիայի, Դանիայի, Սլովենիայի, Շվեդիայի հետ:
- Հայաստանում 2020 թվականին կին բանտարկյալների թիվը կազմել է 3.1% ընդհանուր համամասնությունից, որը կրկին ցածր է եվրոպական միջինից:
- Հայաստանի վերաբերյալ մյուս դրական ցուցանիշն այն է, որ 100 տեղի հաշվով բանտային բնակչության խտությամբ Հայաստանը դասվում է ամենացածր ցուցանիշն ունեցող երկրների շարքին՝ 41.5%: Սա գրեթե երկու անգամ ցածր է եվրոպական միջինից (86.6%):

«գերբնակեցում», պետք է փաստել, որ պայմանավորված ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում իրականացվող շինարարական աշխատանքներով՝ կալանավորված անձինք տեղափոխվել են ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ:

Միևնույն ժամանակ, հարկ է փաստել, որ **գործնականում լրակազմերից տարբերվող թվով կալանավորված անձանց և դատապարտյալների պահման հանգամանքը բովանդակային առումով չի հանգեցնում գերբնակեցման խնդրի, քանի որ նշված անձանց համար ապահովվում են անհրաժեշտ պահման պայմանները: Բացի այդ, հարկ է նկատի ունենալ, որ խնդրո առարկա հրամանում պարբերաբար կատարվում են համապատասխան փոփոխություններ և լրացումները՝ լրակազմերը համապատասխանեցնելով նաև գործնական պահանջներին:**

2021 թվականի օգոստոսի 16-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց թվային տվյալները, ըստ մեկուսացվածության աստիճանի և քրեադատավարական կարգավիճակի, կից ներկայացվում են աղյուսակով:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր տարի՝ հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունն (այսուհետ՝ Ծառայություն) իրականացնում է համապատասխան շինարարական աշխատանքներ՝ քրեակատարողական հիմնարկների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով, մասնավորապես՝ 2020 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ծառայությունը «ՍՈՒԲԱՇԻՆ» ՍՊԸ-ի հետ կնքել է ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքների կատարման պայմանագիր, որի ընդհանուր արժեքը կազմում է 69,000,000 ՀՀ դրամ:

Կնքված պայմանագրով հաստատված է շինարարական աշխատանքների և նրանցում օգտագործվող շինարարական ապրանքների միավորի արժեքը: «ՍՈՒԲԱՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ընթացիկ վերանորոգման շինարարական աշխատանքները կատարվում են Ծառայության կողմից ներկայացված հայտերի հիման վրա, իսկ յուրաքանչյուր կատարված աշխատանքի արդյունքում կազմվում են կատարողական ակտեր և հանձնման-ընդունման արձանագրություններ, մասնավորապես՝

«Արմավիր» քրեակատարողական հիմնարկ.

<u>Բուժ. մասնաշենք՝</u>

Փոխարինվել են 20 հիվանդասենյակների և 3 սանհանգույցների լվացարաններ, զուգարանակոնքեր, ծորակներ և ցնցուղներ:

16 հիվանդասենյակների դռների համար պատրաստվել և տեղադրվել են մետաղական ճաղավանդակից դռներ, միջանցքում տեղադրվել են տարանջատող՝ մեկուսիչ

ճաղավանդակներ: 5 սենյակներում իրականացվել է կոտրված ապակե փաթեթների փոխարինում, 2 խցերում տեղադրվել է մեկական նոր պատուհան:

Վերանորոգվել է աշխատակիցների համար նախատեսված սանհանգույցը, կառուցվել է տաք ջրամատակարարման նոր ջրագիծ մեկ աշխատասենյակի համար: Վերանորոգվել է 5 սենյակների ջեռուցման համակարգը:

Ռեժիմային գոտի՝

Իրականացվել է 24 սանհանգույցների վերանորոգում, որից 7-ն իրականացվել է խցերի ընդհանուր հարդարումով (կոյուղու խողովակներ, լվացարաններ, ասիական զուգարանակոնքեր, ծորակներ, ցնցուղներ և այլն):

Փոխարինվել են 48 խցերի ապակե փաթեթներ:

Իրականացվել է քրեակատարողական հիմնարկի սպասասրահի սանհանգույցի և վարչական մասնաշենքում տեղակայված՝ կին և տղամարդ ծառայողների աշխատակիցների համար սանհանգույցների վերանորոգում:

Վերանորոգվել է հիմնարկի արտաքին ջրամատակարման ցանցը՝ շուրջ 125 գծամետր:

Վերանորոգվել են նաև կաթսայատան մեծ տրամագծով կափյուրները և փականները, իրականացվել է ջեռուցման կաթսաների թուջե մարտկոցների փոխարինում, մղման պոմպերի փոխարինում և նորոգում, ինչպես նաև գազայրիչների կարգաբերում: Փոխարինվել են ընդհանուր ջեռուցման համակարգի տարբեր տրամաչափի փականներ, իրականացվել պրոֆիլակտիկ ստուգման աշխատանքները:

Հայտարարված մրցույթում շահող ճանաչված «Գլոբալ-նախագիծ» ՍՊԸ-ն իրականացրել է հիմնարկի ջեռուցման հետ համատեղված օդափոխության համակարգի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքերը, իսկ «ՄԱՌՔ» ՍՊԸ-ն իրականացրել է նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն:

«Արմավիր» քրեակատարողական հիմնարկի օդափոխության հետ համատեղված ջեռուցման և օդորակման համակարգի շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով 20.11.2020 թվականին, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, առանց ֆինանսական միջոցների նախատեսման հայտարարվել է բաց մրցույթ, որի հայտերը բացվել են հրավերը հրապարակելուց հետո 40-րդ օրը՝ 30.12.2020 թվականին՝ ժամը 12:00-ին, www.armeps.am կայքի միջոցով:

Գնման ընթացակարգին մասնակցել են երեք կազմակերպություններ, իսկ ընթացակարգի գնահատման և ամփոփման արդյունքում «Արտաշատի ԷՑԾ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից՝ 815.000.000 ՀՀ դրամ նվազեցված գնային առաջարկով:

Համապատասխան ֆինանսական միջոցների հատկացման պարագայում՝ պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքները կմեկնարկեն (մինչ օրս ֆինանսական միջոցների հատկացում չի կատարվել):

Շինարարական աշխատանքների հայտարարած մրցույթում հաղթող ճանաչված «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից իրականացվել են մեկ մասնաշենքի կիսաբաց տեսակի ձևափոխման շինարարական աշխատանքեր:

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ.

Իրականացվել է քրեակատարողական հիմնարկի գլխավոր մուտքի դարպասների ամբողջական վերանորոգում, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի մասնակի վերանորոգում: Փոխարինվել են 22 ծորակներ, 20 ջրի կուտակման բաքերի մեխանիզմ և տարբեր չափի փականներ:

Իրականացվել են 3 աշխատասենյակների հարդարման աշխատանքեր:

Իրականացվել են կաթսայատան և ընդհանուր ջեռուցման համակարգի պրոֆիլակտիկ ստուգման և մասնակի վերանորոգման աշխատանքներ:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկ.

Իրականացվել է կանանց մեկուսարանի մասնաշենքի լոգասենյակի վերանորոգում:

Պպահպանությունն իրականացնող ստորաբաժանման մասնաշենքի ամբողջական վերանորոգում, ներքին և արտաքին ջրամատակարարման, ջրահեռացման ցանցի վերանորոգում:

Իիրականացվել են նաև ասֆալտապատման աշխատանքներ՝ շուրջ 1.236 քառակուսի մետր:

Ընթացքի մեջ են կաթսայատան և ընդհանուր ջեռուցման համակարգի պրոֆիլակտիկ ստուգման և մասնակի վերանորոգման աշխատանքները:

«Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ.

Բաց տիպի պայմաններում պատիժ կրող դատապարտյալների բնակավայրի սահմանազատում փշալարե ցանկապատով □ընդհանուր երկարությունը՝ 130 գծամետր, ցանկապատի բարձրությունը՝ 2 մետր□:

Իրականացվել է ռեժիմային գոտու 6 սանհանգույցների վերանորոգում, ներքին և արտաքին ջրահեռացման ցանցի մասնակի վերանորոգում:

Մասնակի վերանորոգվել է նաև ներքին ջրամատակարարման ցանցը:

Իրականացվել են կաթսայատան և ընդհանուր ջեռուցման համակարգի պրոֆիլակտիկ ստուգման և մասնակի վերանորոգման աշխատանքներ:

«Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ.

Նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության՝ COVID-19-ի տարածման կանխարգելման նպատակով կառուցվել են 3 ախտահանման խցիկներ, ընդհանուր՝ 12 քառակուսի մետր մակերեսով:

Ռեժիմային գոտում վարակակիրների սենյակի սանհանգույցում տեղադրվել է ջրատաքացուցիչ:

Իրականացվել են ինֆեկցիոն և թերապևտիկ բաժանմունքներում լվացարանների և ծորակների փոխարինում, կաթսայատան և ընդհանուր ջեռուցման համակարգի պրոֆիլակտիկ ստուգման աշխատանքներ:

«Սևան» քրեակատարողական հիմնարկ.

Իրականացվել են բնակելի մասնաշենքերի, պահեստային մասնաշենքերի տանիքների մասնակի վերանորոգում, տանիքածածկերի ամրացման աշխատանքներ:

Իրականացվել են նաև կաթսայատան և ընդհանուր ջեռուցման համակարգի պրոֆիլակտիկ ստուգման աշխատանքներ:

«Հրազդան» քրեակատարողական հիմնարկ.

Իրականացվել են ռեժիմային գոտում 3 սանհանգույցների վերանորոգում, ներքին ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի մասնակի վերանորոգում, ինչպես նաև կաթսայատան և ընդհանուր ջեռուցման համակարգի պրոֆիլակտիկ ստուգման և մասնակի վերանորոգման աշխատանքներ:

«Կոշ» քրեակատարողական հիմնարկ.

Իրականացվել են արտաքին տարածքի ասֆալտապատման աշխատանքներ, որի արդյունքում ասֆալտապատվել է շուրջ 4900 քառակուսի մետր:

Իրականացվել են կաթսայատան և ընդհանուր ջեռուցման համակարգի պրոֆիլակտիկ ստուգման և մասնակի վերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև շուրջ 220 քմ մակերեսով ջրի կուտակման բաքերի ջերմամեկուսացման աշխատանքներ:

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ.

11 խցում իրականացվել են սանհանգույցների և 1 ընդհանուր լոգասենյակի վերանորոգման աշխատանքներ, ներքին ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի վնասված խողովակների վերանորոգում:

Խցերում փոխարինվել են 37 կոտրված պատուհանների ապակե փաթեթներ:

Իրականացվել են կաթսայատան և ընդհանուր ջեռուցման համակարգի պրոֆիլակտիկ ստուգման և մասնակի վերանորոգման աշխատանքներ:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական ոլորտում շարունակվող լայնածավալ բարեփոխումների շրջանակներում առանձնակի կարևորելով ազատությունից

զրկված անձանց պահման պայմանների բարելավումը, ինչպես նաև քրեակատարողական ծառայողների համար աշխատանքային պատշաճ պայմանների ապահովումը՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում տասնյակ տարիներ վարչական մասնաշենքի նկուղային հարկը, անմիջապես դրա վերևում տեղակայված երկարատև տեսակցությունների սենյակները, մանկական խաղասենյակը և աշխատասենյակները գտնվել են անմխիթար և հակասանիտարական վիճակում, ինչը պայմանավորված է եղել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի սխալ մոնտաժման և շահագործման հանգամանքներով: Վերը թվարկված սենյակների սանհանգույցները խողովակաշարերով միացված չեն եղել ընդամենը հաշված մետրերի վրա գտնվող դիտահորին, կոյուղաջրերը 20 տարուց ավել թափվել և կուտակվել են նկուղային հարկի հատակին, ինչի հետևանքով գարշահոտություն է տարածվել ինչպես նկուղում և վերևում գտնվող սենյակներում, այնպես էլ ողջ մասնաշենքում: Խոնավության հետևանքով պարբերաբար առաջացել են նաև սենյակների պատերի արտաքին շերտերի քայքայումներ և բորբոսի հետքեր:

Հակասանիտարական այդ վիճակը վերացնելու նպատակով նախևառաջ վերանորոգվել է ջրահեռացման ցանցը, նկուղային հարկում կատարվել են կեղտաջրերի հավաքման և մաքրման, խողովակաշարերի կառուցման և դիտահորի հետ համակցման աշխատանքներ: Այնուհետև վերանորոգվել են նաև երկարատև տեսակցությունների սենյակների, մանկական խաղասենյակի և աշխատասենյակների հատակներն ու պատերը՝ արդյունքում ապահովելով թե՛ ազատությունից զրկված անձանց պահման և թե՛ վարչակազմի աշխատանքային բարվոք պայմաններ (կից ներկայացնում ենք լուսանկարները):

«Գորիս» քրեակատարողական հիմնարկ.

Քրեակատարողական հիմնարկում իրականացվել են ճաշարանի մասնաշենքի՝ ճաշաեփման արտադրամասի, օրվա սննդի պահեստի, սննդի մշակման տեղամասի և սանհանգույցի, ռեժիմային գոտում 6 սանհանգույցների, 3 աշխատասենյակների և հանձնուքների սենյակի վերանորոգման աշխատանքներ:

Ինչ վերաբերում է Հաշվետվությամբ ներկայացված առանձին առաջարկություններին, ապա հարկ է նշել, որ.

«Արմավիր» քրեակատարողական հիմնարկում վերանորոգման և հարդարման աշխատանքները յուրաքանչյուր տեղամասում իրականացվում են առաջացած վթարների (անսարքությունների) վերացման առաջնահերթությունից ելնելով՝ հատկացված տարեկան ֆինանսական միջոցների շրջանակներում:

«Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի թիվ 02 կարանտինային խուցը վերանորոգման փուլում է, մասնավորապես՝ վերանորոգվում է սանհանգույցը, տեղադրվում է նոր դուռ, ինչպես նաև հարդարման աշխատանքներ են իրականացվում միջանցքում:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկում ձեռնարկվում են համապատասխան միջոցներ՝ վնասված ջրամատակարարման սարք-սարքավորումների փոխարինման և ջրահեռացման ցանցի մասնակի վերանորոգման ուղղությամբ:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի մասնաշենքի վերանորոգման աշխատանքների կատարման նպատակով 2020 թվականին անց է կացվել մրցույթ, սակայն համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով պայմանագիրը լուծվել է:

Հաշվետվությամբ ներկայացված բոլոր առաջարկություններն՝ ուղղված անազատության մեջ պահվող անձանց պահման և ծառայողների աշխատանքային պայմանների բարելավմանը, անկասկած ընդունելի և ողջունելի են, դրանք կիսում է նաև ՀՀ կառավարությունը, ինչի մասին վկայում է քրեակատարողական ոլորտի քառամյա ռազմավարության տեսլականը: Քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների բարելավմանն ուղղությամբ ՀՀ կառավարության մոտեցումները բազմիցս ներկայացվել են Խմբի հետ ունեցած քննարկումների շրջանակներում:

Ինչ վերաբերում է նոր կառուցվելիք քրեակատարողական հիմնարկ(ներ)ին, ապա դրանց նախագծման և շինարարության ընթացքում հաշվի կառնվեն ոչ միայն Հաշվետվությամբ ներկայացված առաջարկությունները, այլ նաև Խոշտանգումների և անմարդային կամ այլ նվաստացուցիչ վերաբերմունքի, կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի **(այսուհետ՝ ԽԿԿ)** կողմից բնակելի տարածքներին ներկայացվող կողմնորոշիչները:

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ 2020Թ.-Ի ԳՆՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Խմբի կողմից խախտումներ չեն արձանագրվել:

ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ ԿԱՊԸ

Սույն բաժնի շրջանակներումը Խումբը հպանցիկ անդրադառնում է COVID-19-ի շրջանակներում ձեռնարկված քայլերին՝ նշելով, որ ձեռնարկված քայլերի ոչ համաչափ և ոչ հետևողական լինելու հետևանքով արձանագրվել է համավարակով վարակվածների թվային պատկերը: Հաշվի առնելով այն, որ COVID-19-ի առնչությամբ ձեռնարկված քայլերին առավել մանրամասն անդրադարձ է կատարվել այլ բաժնում՝ սույն բաժնին տրվող արձագանքում սահմանափակվենք միայն այն ընդգծումով, որ ՀՀ արդարադատության նախարարության և գործընկեր կառույցների հետ համատեղ ձեռնարկված քայլերի, ներդրած ջանքերի արդյունքում է, որ քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել է վարակվածության նման ցածր ցուցանիշ: Հետևողական աշխատանքը շարունակվում է:

Անդրադառնալով արտաքին աշխարհի հետ կապի առանձին արձանագրումին՝ հարկ է նշել հետևյալը.

ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում երկարատև տեսակցությունների սենյակների բացակայությունը չի խոչընդոտում ազատությունից զրկված անձանց իրավունքի իրացմանը, քանի որ նշված հիմնարկում գտնվողները երկարատև տեսակցության վերաբերյալ դիմումի դեպքում տեսակցությունն իրականացնում են ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» կամ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում: Այսինքն՝ ապահովվում է խնդրո առարկա իրավունքի բովանդակային իրացումը:

Անդրադարձ կատարելով ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի ջեռուցմանը՝ հարկ է նկատել, որ **«Արմավիր» քրեակատարողական հիմնարկի օդափոխության համատեղված ջեռուցման և օդորակման համակարգի շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով** 20.11.2020թ-ին, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, առանց ֆինանսական միջոցների նախատեսման հայտարարվել է բաց մրցույթ, որի հայտերը բացվել են հրավերը հրապարակելուց հետո 40-րդ օրը՝ 30.12.2020թ.-ին, ժամը՝ 12:00-ին www.armeps.am կայքի միջոցով:

Գնման ընթացակարգին մասնակցել են թվով երեք կազմակերպություններ, իսկ ընթացակարգի գնահատման և ամփոփման արդյունքում «Արտաշատի ԷՑԾ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից՝ 815.000.000 ՀՀ դրամ նվազեցված գնային առաջարկով:

Համապատասխան ֆինանսական միջոցների հատկացման պարագայում՝ պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքները կմեկնարկեն (մինչ օրս ֆինանսական միջոցների հատկացում չի կատարվել):

Շինարարական աշխատանքների հայտարարած մրցույթում հաղթող ճանաչված «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից իրականցվել է մեկ մասնաշենքի կիսաբաց տեսակի ձևափոխման շինարարական աշխատանքեր:

Անդրադարձ կատարելով դատապարտյալներ Ա.Չ-ի և Ա.Ս-ի՝ քրեակատարողական հիմնարկը փոխելուն՝ հարկ է նշել, որ Ա.Չ.-ն 2020 թվականի հոկտեմբերի 21-ին ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից, իսկ Ա.Ս.-ն ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկից տեղափոխվել են և ընդունվել են ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ:

Ինչ վերաբերում է Ա.Չ.-ի կողմից հեռախոսազանգերի դիմումները մերժելուն, հարկ է նշել, որ ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկի պետի կողմից մերժվել է, քանի որ ըստ հիմնարկի ներկայացրած տեղեկությունների՝ ժամանակացույցով նախատեսված չի եղել, որ երկու անգամ օգտվելու հնարավորություն տրվի, մեկ ուրիշ դեպքում դատապարտյալն արդեն իր իրավունքն իրացրած է եղել:

Պայմանավորված նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման ուղղությամբ ձեռնարկված (իրականացված) միջոցառումներով՝ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության, իսկ այնուհետև նաև՝ կարանտինի սահմանափակումներով՝ քրեակատարողական հիմնարկներում կարճատև և երկարատև տեսակցությունների տրամադրման գործընթացն օբյեկտիվորեն իրականացվել է ոչ լիարժեք:

Հատկանշական է, որ 2021 թվականի փետրվարի 18-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի N 1514-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության N 204-Ն որոշումը, որի կարգավորումների համաձայն՝ **վերացվել է ազատությունից զրկված անձանց հետ տեսակցությունների ընդհանուր արգելքը**, որի հիման վրա 19.02.2021 թվականից ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատազրկված անձանց երկարատև և կարճատև տեսակցությունները տրամադրվում են սահմանված կարգով:

Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ ՀՀ արդարադատության նախարարություն հասցեագրված թիվ 2/20 հանրագրի շրջանակներում ազատությունից զրկված անձանց տրամադրվող տեսազանգերի թիվն ավելացվել է, մասնավորապես՝ ազատությունից զրկված անձանց, բացի առկա օրենսդրական որոշարկված տեսազանգերից, արտակարգ իրավիճակի պայմաններում տրվել է ամսվա ընթացքում մինչև 10 րոպե տևողությամբ ևս մեկ տեսազանգի հնարավորություն:

Հանրագրի շրջանակներում նշվել է, որ 2020 թվականի առաջին եռամսյակում (հունվար, փետրվար, մարտ) 12 քրեակատարողական հիմնարկներում միջինացված տվյալներով 70 անձի տրամադրվել է 115 տեսազանգ, իսկ երկրորդ եռամսյակում (ապրիլ, մայիս, հունիս) 141 անձի տրամադրվել է 219 տեսազանգ: Այսինքն՝ արտակարգ դրության պայմաններում գրեթե կրկնակի ավելացել է և՛ տեսազանգից օգտվող անձանց թիվը, և՛ տրամադրված տեսազանգերի թիվը:

Ընդհանրացված հաշվարկներով առկա օրենսդրական կարգավորումների պահպանմամբ մեկ օրում մեկ համակարգչով հնարավոր է տրամադրել 14-16 տեսազանգ, մեկ ամսվա ընթացքում (միջինը 22 աշխատանքային օր) հնարավոր է ապահովել 300-350 տեսազանգի տրամադրում, այսինքն՝ 150-175 անձի՝ առանց լրացուցիչ տեսազանգի տրամադրման: Հաշվարկի կատարման ընթացքում հաշվի են առնվել նաև քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանները, անվտանգությունը և տեղափոխումը ապահովող կադրային ռեսուրսը, ինչպես նաև տեսազանգից օգտվող անձանց համապատասխան վայր տեղափոխելու ժամանակահատվածը:

Հիմքում ունենալով ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի իրավունքի իրացման համար հնարավորությունների ընդլայնումը և հաշվի առնելով նաև Հանրագիրը՝ Արդարադատության նախարարության և գործընկեր կազմակերպության համագործակցության արդյունքում հնարավոր է եղել համալրել համակարգչային առկա տեխնիկան: Արդյունքում՝ տեսազանգի տրամադրման համար Արդարադատության նախարարության «Վանաձոր», «Վարդաշեն», «Երևան-Կենտրոն», «Գորիս», «Կոշ», «Արթիկ», «Սևան», «Աբովյան», «Դատապարտյալների հիվանդանոց», «Հրազդան» քրեակատարողական հիմնարկներն ունեն 1-ական համակարգիչ, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը՝ 2, իսկ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկը՝ 4 համակարգիչ:

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է համադրել ազատությունից զրկված անձանց թիվը, նրանց տրամադրվող տեսազանգերի միջինացված թիվը և դրանով որոշել առկա ռեսուրսներով տեսազանգի ծավալների հնարավոր ընդլայնման հարցը:

Լրացուցիչ տեսազանգի (ևս 10 րոպե) տրամադրման դեպքում մեկ ամսում հնարավոր էր ապահովել 100-120 անձի տեսակցության տրամադրումը:

Հաշվի առնելով ազատությունից զրկված անձանց թիվը, տեսազանգից օգտվող անձանց թվի աճի միտումը, քրեակատարողական հիմնարկների տեխնիկական հնարավորությունների ծավալները և ղեկավարվելով ազատությունից զրկված բոլոր անձանց համար հավասար հնարավորությունների նախատեսման պահանջով՝ բացի առկա օրենսդրական որոշարկված տեսազանգերից, արտակարգ իրավիճակի պայմաններում ամսվա ընթացքում նախատեսվել է մինչև 10 րոպե տևողությամբ ևս մեկ տեսազանգի տրամադրման հնարավորություն:

Այդուհանդերձ, պետք է փաստել, որ ՀՀ արդարադատության նախարարությունը մշտապես պատրաստակամ է օրենսդրական ցանկացած փոփոխության միջոցով բարելավել ազատությունից զրկված անձանց կյանքը: Տեխնիկական լրացուցիչ հագեցվածության ապահովման դեպքում կդիտարկվի ոչ միայն օտարերկրյա քաղաքացիներին, այլև բոլոր դատապարտյալներին ավելի շատ տևողությամբ տեսազանգի հնարավորություն տրամադրելու հարցը՝ հիմքում ունենալով ազատությունից զրկված անձանց հավասար հնարավորությունների տրամադրման և խտրական վերաբերմունքի բացառման գաղափարը:

Միաժամանակ պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ տեսազանգի տրամադրումը պետության կողմից տրամադրվող այլընտրանքն է այն դեպքերի համար, երբ ազատությունից զրկված անձը չի կարողանում օգտվել կարճատև կամ երկարատև տեսակցություններից: Այդ այլընտրանքի բացակայության դեպքում անձը պարզապես չէր կարողանա տեսակցել իր հարազատներին: Ուստի, պետք է ընդունել, որ ներկա փուլում անգամ 20 րոպե տևողությամբ տեսազանգի տրամադրումն արդեն իսկ դրական երևույթ է, որովհետև դրա ուժով վերջիններս թեկուզև առցանց, բայց կարողանում են շփվել իրենց հարազատների հետ:

Անդրադարձ կատարելով օրենսդրական առաջարկություններին՝ հարկ է նշել հետևյալը.

1. Խմբի կողմից Հաշվետվությամբ ներկայացված՝ մերձավոր ազգականների հետ կապն ապահովելու ***«օրենսդրական փոփոխության կիրառման հետ կապված խոչընդոտները վերանայելու և այն բարելավելու»*** առաջարկի վերաբերյալ հարկ ենք համարում նշել, որ**Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2019 թվականի հունիսի 3-ին ՀՕ-52-Ն օրենքի 4-րդ հոդվածով** կատարված փոփոխությունն արդեն իսկ օրենսդրական մակարդակով ամրագրված երաշխիք է, համաձայն որի՝ դատապարտյալների ուղղիչ հիմնարկի վայրը փոխելու հարցերը քննարկելիս և լուծելիս հաշվի է առնվում մերձավոր ազգականների հետ կապն ապահովելու հանգամանքը, եթե իհարկե այդ ուղղիչ հիմնարկում առկա չեն դատապարտյալի հետագա գտնվելուն խոչընդոտող բացառիկ հանգամանքներ:

<u>2. Առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տրամադրվող կարճատև և երկարատև տեսակցությունների քանակի ավելացման առաջարկության կապակցությամբ.</u>

2018 թվականի հուլիսի 12-ին ընդունված և 2018 թվականի օգոստոսի 4-ից ուժի մեջ մտած «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-368-Ն ՀՀ օրենքով արդեն իսկ կրկնակի ավելացվել է առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տարվա ընթացքում տրամադրվող տեսակցությունների նվազագույն քանակը՝ նախկին 1 երկարատև և 3 կարճատև տեսակության փոխարեն սահմանվել է 2 երկարատև և 6 կարճատև տեսակցություն:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«2. (…) Նշված սահմանափակումը վերանում է, եթե դատապարտյալը փաստացի կրել է պատժի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելու համար սահմանված ժամկետը:(…)»

Հարկ է նշել նաև, որ ՀՀ օրենսդրությամբ **սահմանված է միայն տեսակցությունների նվազագույն քանակը,** իսկ դրական բնութագրվող դատապարտյալներին կարող է տրամադրվել նվազագույն քանակից ավել տեսակցություններ, ինչպես նաև տեսակցություն կարող է տրամադրվել խրախուսանքի միջոցով**:**

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն, որ ներկայումս լրամշակման փուլում է գտնվում ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագիծը՝ ներկայացված առաջարկը կդիտարկվի վերջինիս շրջանակներում:

3. Ազատազրկված անձանց շրջանում տեսակապից և հեռախոսակապից օգտվելը խրախուսելու համար միջոցներ ձեռնարկելու առաջարկության կապակցությամբ.

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է, որ կալանավորված անձինք և դատապարտյալներն ունեն արտաքին աշխարհի հետ կապի, այդ թվում՝ հեռախոսազանգերի իրավունք, մասնավորապես.

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված է հետևյալը.

« Դատապարտյալն իրավունք ունի՝(…)

9) **արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու**, այդ թվում՝ վարելու նամակագրություն, ունենալու տեսակցություններ, **օգտվելու հեռախոսակապից,** գրականությունից և հնարավոր լրատվական միջոցներից. (…)»:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված է հետևյալը.

«Ձերբակալված կամ կալանավորված անձն իրավունք ունի՝(…)

9) **հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ.**(…)»:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում արտաքին աշխարհի հետ կապը դրսևորվում է մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության իրավունքների իրացմամբ: Այդ կապի ապահովումն ու դրա իրականացմանն աջակցելը կարևոր է հենց ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացման վերջնական նպատակի իրացման տեսանկյունից:

Արտաքին աշխարհի հետ կապի կարևորությունն ընդգծված է նաև ՄԱԿ-ի սահմանած կանոններում, Եվրոպայի խորհրդի հանձնարարականներում, Եվրոպական դատարանի նախադեպային ակտերում, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի փաստաթղթերում և այլուր:

Վերը շարադրված **ներպետական և միջազգային կարգավորումները փաստում են**, որ ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապը՝ դրա տարբեր դրսևորումներով, **և հատկապես հեռախոսազանգն** ունի կարևոր նշանակություն, ընդ որում, ազատությունից զրկման վայրի վարչակազմը պարտավոր է աջակցություն տրամադրել, քանի որ դա, ի թիվս այլ հանգամանքների, համարվում է այնտեղ պահվող անձի **վերասոցիալականացման հիմնական միջոցներից մեկը:**

Ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի պահպանումը, այդ թվում՝ հեռախոսակապից և տեսակապից օգտվելու միջոցով, խրախուսվում է,

մասնավորապես՝ այդ հանգամանքը հաշվի է առնվում դատապարտյալի վերաբերյալ կազմված բնութագրում՝ որպես դրական բնութագրիչ, ինչպես նաև պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման համար Ծառայության կողմից **կազմվող զեկույցում** (արտաքին աշխարհի կետ կապը պահպանելու դեպքում՝ այդ թվում հեռախոսակապի կամ տեսակապի միջոցով, **տրվում է 3 միավոր):**

Ինչ վերաբերում է անվճար քարտեր տրամադրելուն, հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 1717-Լ որոշման հավելված N 2-ով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարության իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների» ծրագրի 33-րդ կետով նախատեսված՝ ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի իրավունքի պատշաճ իրացման ապահովման շրջանակներում կքննարկվի արտաքին աշխարհի հետ կապի միջոցների ընդլայնման հարցը:

ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ՈՒՄ

1. «ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 110-րդ հոդվածում կատարել համապատասխան փոփոխություն և հանել 7 տարուց ավել ազատազրկված անձանց աշխատանքով ապահովելուն խոչընդոտող արգելքը» առաջարկի վերաբերյալ հարկ է նշել, որ վերոնշյալ հարցի կապակցությամբ նախկինում տեղի են ունեցել քննարկումներ խնդրո առարկայի վերաբերյալ, որի արդյունքում ձևավորվել է դիրքորոշում, առ այն, որ սահմանված 7 տարի առավելագույն շեմը նպատակահարմար է փոփոխել և սահմանել ավելի բարձր՝ 10 տարի առավելագույն շեմ, Այսպես՝ «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծի (սույն կետում՝ Փաթեթ) շրջանակներում դիտարկվում է ժամկետի վերանայման հարցը: Մասնավորապես՝ հարկ է նկատել, որ օրենսդիրը նման հնարավորություն նախատեսել է միայն այն դատապարտյալի համար, ում նկատմամբ նշանակված ազատազրկման ժամկետը չի գերազանցում յոթ տարին: Ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ նշված ժամկետի առանձնացումն օբյեկտիվ հիմնավորվածություն չունի, քանի որ նշված ժամկետն առնվազն չի համընկնում հանցագործությունների տեսակների դասակարգմանը, իսկ հանրամատչելի աղբյուրներում չկան այն հիմնավորող փաստական տվյալներ: Սրան զուգահեռ, գործնականում լինում են այնպիսի դեպքեր, երբ նշված ժամկետի հետ ունեցած աննշան անհամապատասխանության

պատճառով դատապարտյալը չի կարողանում ընդգրկվել համապատասխան աշխատանքներում՝ կորցնելով առանց այդ աշխատելու համար նախատեսված սահմանափակ հնարավորությունը: Ուստի, անհրաժեշտ է վերանայել նշված ժամկետը՝ ընդլայնելով տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ներգրավվող անձանց սուբյեկտային կազմը:

Հարկ է նկատել այն փաստը, որ Փաթեթը ներկայումս լրամշակման փուլում է:

2. Խմբի կողմից արվել է դիտարկում, որ անհրաժեշտ է «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում պահվող ազատությունից զրկված անձանց կրթական կարիքների գնատահում անցկացնել և ըստ այդմ՝ մասնագիտական ուսուցման դասընթացներ կազմակերպել: Նշենք, որ ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը (սույն կետում այսուհետ՝ Կազմակերպություն) 2021 թվականի փետրվարից «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում իրականացնում է իրականացվում են հետևյալ դասընթացներ՝ «Հայագիտություն և մշակույթ», «Օտար լեզու /անգլերեն/» և «Օտար լեզու /ռուսերեն/», որոնք ընտրվել են ազատազրկված անձանց կրթական կարիքների գնատման արդյունքում:

2020 թվականի դեկտեմբերին իրականացված կրթական կարիքների գնահատման արդյունքների հիման վրա «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակություն և կրթություն ծրագրի» (սույն կետում՝ Ծրագիր) շրջանակներում Կազմակերպությունը մշակել է համապատասխան կրթական մոդուլները, որոնք 2021 թվականի փետրվարից իրականացվում են ՀՀ ԱՆ «Արմավիր», «Աբովյան», «Սևան», «Նուբարաշեն», «Կոշ», «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկներում և Պրոբացիայի ծառայությունում: Յուրաքանչյուր դասընթացի շրջանակում իրականացվում է առարկայական գիտելիքի նախագնահատում և հետգնահատում, որի արդյունքում ցուցաբերվում է անհատական մոտեցում: Կրթական կարիքների գնահատման արդյունքում, որպես մասնագիտական կրթական նոր ծրագիր, 2021 թվականին «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում և Պրոբացիայի ծառայությունում ներդրվել է «Վարսավիրական հմտություններ» դասընթացը:

Ի պատասխան Խմբի Հաշվետվության մեջ արծարծված դիտարկմանը՝ Կազմակերպության կողմից Ծրագրի շրջանակներում իրականացվող մասնագիտական ուսուցման դասընթացների մեջ ներառել «Խոհարարական արվեստ» դասընթացը, ինչպես նաև Ծրագրի շրջանակում իրականացվող «Օտար լեզու /անգլերեն/» դասընթացի առնչությամբ ապահովել իրականացվող մասնագիտական ուսուցման դասընթացների շարունակականությունը, մասնավորապես, սկսնակների համար նախատեսված անգլերենի դասընթացին զուգահեռ ավելացնել անգլերենի այլ մակարդակների դասընթացներ, որպեսզի այն մասնակիցները, որոնք արդեն ստացել են նախնական գիտելիքներ, հնարավորություն

ունենան մասնակցել մնացած մակարդակների դասընթացներին և ամբողջությամբ տիրապետել լեզվին, հարկ է նշել, որ Կազմակերպությունը կիրականացնի կրթական կարիքի գնահատում և պահանջ առաջանալու դեպքում կձեռնարկի համապատասխան միջոցներ հարցի լուծման ուղղությամբ:

Այս համատեքստում հարկ է նկատել, որ ՀՀ ԱՆ «Վանաձոր» և ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում «Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ» Հայաստանյան գրասենյակը «Արտ-Լանչ» ապրանքանիշը ներկայացնող «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ի հետ համատեղ կազմակերպել է խոհարարական դասընթաց, որին մասնակցել են ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի 5 և ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի 14 դատապարտյալներ, ովքեր դասընթացի ավարտին ստացել են համապատասխան վկայականներ: Այսինքն՝ առաջարկն ըստ էության համընկնում է ՀՀ արդարադատության նախարարության որդեգրած մոտեցմանն այն տեսանկյունից, որ թիրախավորվում են աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտություններ:

Բացի այդ, Ծառայության և Կազմակերպության միջև առկա համագործակցությունն ընդլայնվել է, մասնավորապես.

2020 թվականի ընթացքում Կազմակերպության կողմից **«Աբովյան»** քրեակատարողական հիմնարկում իրականացվել են «Համակարգչային հմտություններ», «Դեկորատիվ-կիրառական արվեստ», «Բիզնես-գրագիտություն» դասընթացները, **«Արմավիր», «Կոշ», «Վարդաշեն» և «Սևան»** քրեակատարողական հիմնարկներում իրականացվել են «Խեցեգործություն և խեցեգործության թրծման, ներկման տեխնոլոգիա», «Ժամանակակից կիրառական արվեստ», «Փայտամշակում և փայտի գեղարվեստական փորագրություն», «Բիզնես հմտություններ», «Հայոց լեզու», «Անգլերեն» և «Համակարգչային հմտությունների ուսուցում» դասընթացներ, որոնց, ընդհանուր առմամբ, մասնակցել է **194 անձ:**

2020 թվականի ընթացքում Կազմակերպության կողմից ՀՀ ԱՆ «**Աբովյան», «Սևան» և «Արմավիր», «Նուբարաշեն»** քրեակատարողական հիմնարկներում իրականացված հանրակրթական ծրագրի **2019-2020թթ.** ուսումնական տարում ընդգրկվել է **13 անձ,** իսկ **2020-2021թթ.** ուսումնական տարում՝ **11 անձ:**

Հարկ է նշել նաև, որ 2021 թվականից «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնակում ևս իրականացվում են «Հայագիտություն», «Անգլերեն» և «Ռուսաց լեզու» դասընթացներ, որոնց մասնակցում է 4 անձ:

Քրեակատարողական հիմնարկներում համապատասխան ստորաբաժանումների կողմից պարբերաբար իրականացվում է անազատության մեջ պահվող անձանց կրթական կարիքների գնահատում և դրա հիման վրա Ծառայության կենտրոնական մարմնի սոցիալական, հոգոբանական և իրավական աշխատանքների (այսուհետև՝

ՍՀԻԱ) բաժինի կողմից Կազմակերպության հետ իրականացնում են քննարկումներ՝ կազմակերպվող դասընթացների շրջանակը ընդլայնելու, դրանց շարունակականությունն ապահովելու համար, ուստի խնդրո առարկայի վերաբերյալ Հաշվետվությամբ ներկայացված առաջարկությունները ևս կդառնան քննարկման առարկա:

Հարկ է նշել նաև, որ Ծառայության կենտրոնական մարմնի ՍՀԻԱ բաժինը համագործակցում և մշտական կապի մեջ է գտնվում տարբեր բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ բուհ) ղեկավարության հետ՝ բուհընդունվելու ցանկություն հայտնած անձանց հնարավորինս կրթական գործընթացում ներգրավելու նպատակով:

Հասարակական և այլ կազմակերպությունների հետ մշտապես տարվում են աշխատանքներ՝ անազատության մեջ գտնվող անձանց համար համապատասխան լուսավորչական, կրթական և այլ միջոցառումների կազմակերպման, դատապարտյալների զբաղվածության ապահովման ընդլայնման ուղղությամբ:

2020 թվականի ընթացքում քրեակատարողական հիմնարկներում կազմակերպվել են ընդհանուր առմամբ **73 տարաբնույթ միջոցառումներ**, որից՝

- 54 մարզական (մասնակցել է 850 անձ),
- 10 լուսավորչական (մասնակցել է 96 անձ),
- 9 մշակութային (մասնակցել է 230անձ):

3. Ազատազրկված անձանց համար նախատեսված աշխատատեղերի ավելացման, աշխատատեղերի թափուր մնալու պատճառների և դրանք համալրման ուղղությամբ ձեռնարկված քայլերի վերաբերյալ հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց զբաղվածության ապահովման և ազատ ժամանակի արդյունավետ օգտագործման համար մշտապես ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ, մասնավորապես՝ 2019 թվականի ընթացքում անազատության մեջ պահվող անձանց միջինացված թիվը կազմել է 2277, 2020 թվականին՝ 2124:

Անազատության մեջ պահվող անձանց օգտակար զբաղվածությունն ապահովելու, սոցիալական վերականգնման արդիական և արդյունավետ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով, ինչպես նաև «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի հետ համատեղ **430** անձ ներգրավվել է տարաբնույթ աշխատանքներում (2019թ.՝ 437), այդ թվում՝ այլ գործատուների մոտ:

Ինքնագործ միավորումներում ընդգրկվել է **177**-ը (2019թ.՝ 180): Իրացվել է **282** դատապարտյալի կրթական իրավունքը (2019թ.՝ 232), այդ թվում՝ **38** հանրակրթական, մասնագիտական՝ **239**, բարձրագույն և հետբուհական՝ **5** (2019թ.՝ 44 հանրակրթական, մասնագիտական՝ 182, բարձրագույն և հետբուհական՝ 6):

Քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձինք ընդգրկվում են տարաբնույթ աշխատանքներում, մասնավորապես՝ հիմնարկների տեխնիկատնտեսական սպասարկման վարձատրվող և չվարձատրվող աշխատանքներում, իսկ փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկներում կազմակերպվում են աշխատանքային զբաղվածության խցեր՝ խցային պայմաններում պահվող անձանց աշխատանքներում ներգրավելու նպատակով, պայմանագրային հիմունքներով աշխատում են «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամում, իսկ բաց ուղղիչ հիմնարկի պայմաններում պատիժ կրող անձինք աշխատում են նաև հիմնարկի սահմաններից դուրս այլ գործատուի մոտ:

Քրեակատարողական հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ստորաբաժանումների ծառայողների (աշխատակիցների) կողմից մշտապես իրականացվում են բացատրական աշխատանքներ անազատության մեջ պահվող անձանց շրջանում՝ քրեակատարողական հիմնարկներում, «Աջակցություն դատապարյալին» հիմնադրամի կամ այլ գործատուների մոտ համապատասխան աշխատանքներում ընդգրկվելու անհրաժեշտության և կարևորության վերաբերյալ, ինչի մասին գրառումներ են կատարվում նրանց անհատական քարտերում:

Քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձինք վարձատրվող և չվարձատրվող աշխատանքներում ընդգրկվում են **բացառապես իրենց ցանկությամբ և գրավոր դիմումի հիման վրա, հետևաբար թափուր հաստիքների առկայությունը պայմանավորված է համապատասխան դիմումների բացակայությամբ:**

4. Ազատազրկված անձանց համար նախատեսված համակարգիչների քանակի, ինչպես նաև համակարգչով աշխատող անձանց հատկացվող ժամաքանակի ավելացման առաջարկության վերաբերյալ հարկ է նշել, որ ազատազրկված անձինք համակարգիչներից օգտվում են համապատասխան դասընթացների մասնակցության և համապատասխան աշխատանքային գործունեությամբ զբաղվելու դեպքում, իսկ կազմակերպվող դասընթացների համար անհրաժեշտ համակարգիչների քանակի ավելացման նպատակով մշտապես ձեռնարկվում են համապատասխան միջոցներ:

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում **համակարգչով աշխատող ազատազրկված անձանց հատկացվող ժամաքանակի ավելացման առաջարկության վերաբերյալ հարկ է նշել, որ** յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:30-ից մինչև 15:30-ը նրանք աշխատում են համապատասխան աշխատասենյակում տեղադրված իրենց անձնական համակարգիչներով: Համակարգիչներից օգտվելու ժամանակացույցը կազմելիս հաշվի է առնվում նաև հիմնարկի օրվա կարգացուցակը, դատապարտյալների սնունդ ընդունելու, մարզասենյակից օգտվելու, կրթական ծրագրերին մասնակցելու, զբոսանքից օգտվելու հանգամանքները, ուստի **աշխատող ազատազրկված անձանց հատկացվող ժամաքանակի ավելացումը ներկայումս նպատակահարմար չի համարվում:**

5. Այլ կրոնական համոզմունք ունեցող անձանց համար կրոնական արարողությունների կազմակերպման պայմաններ ստեղծելու առաջարկության հետ կապված պետք է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում պահվում են տարբեր կրոնական համոզմունքներ ունեցող անձինք, և բոլորի համար միաժամանակ կրոնական արարողությունների կազմակերպման շենքային պայմաններ ապահովելը ներկայումս օբյեկտիվորեն հնարավոր չէ: Կրոնական արարողությունների կազմակերպման և անցկացման համար ներկայացվող դիմումները քննարկվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հարկ է նշել նաև, Խմբի կողմից ներկայացված առաջարկություններն ընդգրկված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 1717-Լ որոշման հավելվածում (սույն կետում՝ Ռազմավարություն), ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի «Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման 2021-2022 թվականների ռազմավարությունը և դրա իրականացման 2021-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 513-Լ հրամանով հաստատված Հավելվածում, որոնք իրականացում և կատարվում են սահմանված ժամանակացույցերին համապատասխան:

Անդրադարձ կատարելով կրթական կարիքների գնահատմանը՝ հարկ է նշել, որ խնդրո առարկան ընդգրկված է Ռազմավարության շրջանակներում: Վերջինի համատեքստում հարկ է նշել, որ Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակություն և կրթություն ծրագրի (սույն կետում այսուհետ՝ Ծրագիր) յուրաքանչյուր մասնակցի հետ գնահատման գործընթացն իրականացվում է դասընթացների սկզբում, ընթացքում և ավարտին:

Վերը նշված չափորոշիչները փորձարկելու նպատակով Ծրագրի՝ 2021 թվականի մեկնարկից հետո (փետրվարի 18-ից մինչև ապրիլի 20-ը) իրականացվել է դասընթացների նախագնահատում ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր», «Աբովյան», «Սևան», «Նուբարաշեն» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկների, ինչպես նաև ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության շուրջ 103 շահառուների շրջանում: Նախատեսվել է նաև իրականացնել դասընթացի հետգնահատում՝ յուրաքանչյուր մասնակցի մոտ դասընթացի ազդեցության՝ փոփոխությունների և առաջընթացի համեմատական պատկերն ստանալու նպատակով: Նախագնահատումը և հետգնահատումը հնարավորություն կտան նաև ունենալ Ծրագրի արդյունավետության և ներգործության միասնական պատկերը:

Բացի այդ, հարկ է նկատել, որ իրականացվում է մասնակիցների հաճախումների գրանցում՝ համաձայն նախապես կազմված և հաստատված դասացուցակի, ինչպես նաև նախատեսվել է իրականացնել ընթացիկ գնահատումներ՝ մասնակիցների մոտ դասընթացների ընթացիկ ազդեցությունը և դրանց խնդիրները վեր հանելու նպատակով, որն էլ կապահովի մասնակիցների նկատմամբ անհատական մոտեցումը:

Այսպիսով, գնահատման հստակ չափորոշիչների միջոցով հնարավոր կլինի իրականացնել համապարփակ գնահատում՝ մասնակիցների մոտ Ծրագրի ազդեցության և նրանց վերասոցիալականացմանը նպաստելու ուղղությամբ, ինչն էլ կապահովի նաև Ծրագրի շարունակական զարգացումը:

Ամփոփելով ազատությունից զրկված անձանց զբաղվածության ապահովմանն առնչվող բաժինը՝ փաստենք, որ ՀՀ կառավարությունը թիրախավորել է քրեակատարողական համակարգի այս բաղադրիչը և թիրախավորված կերպով շարունակելու է տանել հետևողական աշխատանք ազատությունից զրկված անձանց օգտակար զբաղվածությունն ապահովելու ուղղությամբ:

ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼՈՒՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Հաշվետվության շրջանակներում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ ժամկետի հաշվարկի առնչությամբ հարկ է նշել հետևյալը.

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ ժամկետի հաշվարկի մեկնարկին առնչվող հարցի առնչությամբ տարընկալումները բացառելու և միասնական պրակտիկա ձևավորելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարության կողմից ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանը տրվել է համապատասխան պարզաբանում, համաձայն որի՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցը կրկին քննարկելու ժամկետի հաշվարկի մեկնարկ պետք է դիտարկել առաջին ատյանի դատարանի կողմից դատական ակտի կայացման պահը:

Ինչ վերաբերում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս դատապարտյալի տարիքի վերաբերյալ չափանիշը վերանայելուն, հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում ներկայումս ուսումնասիրության փուլում է գտնվում «ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 12-ի թիվ 336-Լ

հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» հրամանի նախագիծը (սույն կետում այսուհետ՝ Հրամանի նախագիծ), որի շրջանակներում հատկապես քննարկման առարկա է դառնալու դատապարտյալի տարիքի վերաբերյալ համապատասխան չափորոշիչները փոփոխելու հարցը:

Ինչպես արդեն Խումբը տեղյակ է, Հրամանի նախագծի լրամշակված տարբերակը կքննարկվի ավելի լայն շրջանակում, այնուհետև կհաստատվի:

ՄԱՀՎԱՆ, ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՑԱԴՈՒԼԻ ԴԵՊՔԵՐԸ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ

2020թ. ընթացքում քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց շրջանում արձանագրվել է **մահվան ընդհանուր 5 դեպք,** որից՝

- **2-ը՝ քաղաքացիական բժշկական հաստատությունում** («Էրեբունի» և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ներում՝ 1-ական դեպք),
- **3-ը՝ քրեակատարողական հիմնարկում** («Արմավիր»՝ 2 դեպք, որից 1-ը՝ ինքնասպանություն, «Դատապարտյալների հիվանդանոց»՝ 1 դեպք):

<u>Ինքնասպանություն.</u>

1. 2020 թվականի մայիսի 30-ին՝ ժամը 07:40-ի սահմաններում, **«Արմավիր» քրեակատարողական հիմնարկի թիվ 15 խցում կարանտինային պայմաններում միայնակ պահվող կալանավորված անձ Ձ.Հ. Կ.-ն կատարել է ինքնասպանություն՝ կախվելու միջոցով:**

Կալանավորված անձի մահվան փաստը ամրագրվել է «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում տեղակայված համապատասխան ստորաբաժանման աշխատակցի կողմից՝ **2020 թվականի մայիսի 30-ին՝ ժամը 08:00-ի սահմաններում:**

Կալանավորված անձ **Ձ.Կ.-ն «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ է ընդունվել 2020 թվականի մայիսի 27-ին՝ ժամը 21:35-ին:**

Դեպքի առթիվ անհապաղ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում նախապատրաստվել են նյութեր, որոնց հիման վրա **2020 թվականի հունիսի 3-ին ՀՀ քննչական կոմիտեի Վաղարշապատի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 57106020 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:**

<u>Քաղաքացիական բժշկական հաստատություններում արձանագրված մահվան դեպքեր.</u>

1. **Վ. Մ. Մ.՝ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի դատապարտյալ.**

13.11.2014թ. Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասով, 176-րդ հոդվածի 1-ին մասով, 176-րդ հոդվածի 2-րդ մասով, 66-րդ հոդվածի կիրառմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 8 տարի ժամկետով (պատժի կրման սկիզբը՝ 07.04.2014 թ.):

Մահացել է 15.01.2020 թ.՝ ժամը 01:20-ի սահմաններում, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնում:

Համաձայն 27.12.2019 թ. միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի (սույն կետում՝ ՝ հանձնաժողով) եզրակացության՝ ախտորոշվել էր **«ՄԻԱՎ-վարակ III կլինիկական փուլ, խիստ արտահայտված իմունային անբավարարությամբ, մարմնի քաշի կորուստ 10%-ից ավել, կախեքսիա III°: Տարածուն ատոպիկ դերմատիտ, բարդացած ֆուրունկուլյոզով: Քրոնիկական գաստրիտ: Քրոնիկական տոքսիկ հեպատիտ «Ց», հակամարմինները դրական: Երկրորդային սակավարյունություն: Հիպոալբումինեմիա: լեղաքարային հիվանդություն, լեղապարկի քարեր»:**

Նույն եզրակացության համաձայն՝ հանձնաժողովը փաստել է, որ ախտորոշումը համապատասխանում է ՀՀ կառավարության 26.05.2006թ.-ի N 825-Ն որոշման պատժի կրմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկի 54-րդ կետին, այն է՝ «**Մարդու իմունային անբավարարության վիրուսից (ՄԻԱՎ) առաջացած հիվանդության վարակիչ և մակաբուծական հիվանդությունների, չարորակ նորագոյացությունների, այլ ճշտված ու չճշտված հիվանդությունների և այլ վիճակների դրսևորումներով (ըստ ՀՄԴ-10 դասակարգչի՝ B20-B24)**»:

Ծանր հիվանդության հետևանքով պատժի հետագա կրումից ազատելու կապակցությամբ համապատասխան միջնորդագիրը 30.12.2019 թվականին «Դատապարտյալներին հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկից ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

2. **Հ. Ռ. Ղ.՝ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի կալանավորված անձ.**

Մեղադրվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, քրեական գործը գտնվել է ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում, կալանքի սկիզբը՝ 05.12.2018 թ.:

02.05.2020 թ.՝ ժամը 13:10-ի սահմաններում, մահացել է «Երեբունի» բժշկական կենտրոնում: Համաձայն 07.05.2020 թ. տրված մահվան ակտի գրանցման տեղեկանքի՝ (ակտ N 441) մահվան պատճառ (ախտորոշում) է հանդիսացել **«Կերակրափողի երակների վարիկոզ լայնացում՝ կերակրափողի երակների վարիկոզ լայնացում՝ արյունահոսությամբ: Ստամոքսի տասներկումատնյա աղու լորձաթաղանթի էռոզիաներ: Լյարդի ցիռոզ: Հեպատոսպլենոմեգալիա (ըստ ՀՄԴ-10 դասակարգչի՝ I85.0)**»:

Քրեակատարողական հիմնարկներում արձանագրված մահվան դեպքեր.

1. Կ. Վ. Ծ.՝ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի կալանավորված անձ.

Մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով, 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 268-րդ հոդվածի 1-ին մասով:

Մահացել է 07.01.2020թ.՝ ժամը 21:20-ի սահմաններում, ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում: **Մահվան փաստով 08.01.2020թ. հարուցվել է թիվ 86150120 քրեական գործը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ, 196-րդ հոդվածներով նախատեսված կարգով **ուղարկվել է ըստ քննչական ենթակայության՝ ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին, կատարվում է նախաքննություն:**

2. Ա. Ա. Գ.՝ «Արմավիր» ՔԿՀ-ի կալանավորված անձ.

Մեղադրվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 7-րդ և 8-րդ կետերով, 238-րդ հոդվածի 3-րդ մասի, 329-րդ հոդվածի 1-ին մասի, 175-րդ հոդվածի 2-րդ մասի, 1,3,4 կետերի հատկանիշներով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ, կալանքի տակ էր՝ 23.01.2018 թ-ից:

18.01.2020թ.՝ ժամը 13:50-ի սահմաններում, խցի սանհանգույցում հայտնաբերվել է կալանավորված անձ Ա. Գևորգյանի դին: Դեպքի առթիվ անհապաղ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում նախապատրաստվել են նյութեր, որոնց հիման վրա **2020 թվականի հունվարի 20-ին ՀՀ քննչական կոմիտեի Վաղարշապատի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 57101520 քրեական գործը, կատարվել է նախաքննություն, որի արդյունքում՝ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով 2020 թվականի հոկտեմբերի 16-ին կայացվել է որոշում՝ վարույթը կարճելու մասին:**

Հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց շրջանում արձանագրված մահվան դեպքերի վիճակագրությունը ներկայացվում է՝

ըստ դեպքի առերևույթ հատկանիշների: Եթե քրեական գործի արդյունքներով պարզվում են այլ հանգամանքներ, վիճակագրությունն, ըստ այդմ, կարող է ենթարկվել համապատասխան փոփոխությունների:

ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄ, ՀԱՅՑԱԴՈՒԼ

2020 թվականի ընթացքում քրեակատարողական հիմնարկներում **329 անձի** կողմից արձանագրվել է **601 հացադուլ** հայտարարելու (2019 թ.՝ 245 անձի կողմից՝ 393) և **244 անձի** կողմից **537 ինքնավնասում** կատարելու դեպք (2019 թ.՝ 182 անձի կողմից՝ 604):

Ստորև ներկայացվում է ինքնավնասման դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունն ըստ քրեակատարողական հիմնարկների.

Հ/Հ	Քրեակատարողական հիմնարկ	Ինքնավնասման դեպք
1.	«Նուբարաշեն»	**112**
2.	«Դատապարտյալների հիվանդանոց»	**20**
3.	«Վարդաշեն»	**6**
4.	«Աբովյան»	**14**
5.	«Սևան»	**3**
6.	«Կոշ»	**10**
7.	«Գորիս»	**6**
8.	«Վանաձոր»	**48**
9.	«Արթիկ»	**85**
10.	«Երևան-Կենտրոն»	**1**
11.	«Հրազդան»	**19**
12.	«Արմավիր»	**213**
	Ընդամենը՝	***537***

Արձանագրված ինքնավնասումները հիմնականում կատարվել են մեկանգամյա օգտագործման սայրի կամ կրակայրիչի մետաղական գլխիկի միջոցով քերծվածք կամ կտրվածք անելու, ինչպես նաև զանազան իրեր և առարկաներ կուլ տալու եղանակով:

Ինքնավնասում կատարելու հիմնական պատճառներից են քրեական գործի հանգամանքները, նյարդային, առողջական խնդիրները, այլ Քրեակատարողական հիմնարկ կամ այլ խուց տեղափոխվելու պահանջը և այլն:

Յուրաքանչյուր ինքնավնասման դեպքով կազմվել են նյութեր, կատարվել է հետաքննություն, ինչպես նաև իրականացվել են սոցիալ-հոգեբանական բնույթի աշխատանքներ, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկի հոգեբանի կողմից կատարվել են հոգեբանական աշխատանքներ, որոնց արդյունքում կազմվել է հոգեբանական եզրակացություն ինքնավնասման հնարավոր դրդապատճառների և վարքի հետագա կանխատեսումների վերաբերյալ:

Ազատությունից զրկված անձանց շրջանում ինքնավնասումների և ինքնասպանությունների դեմ արդյունավետ պայքարելու համատեքստում «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագրի շրջանակներում մշակվել և ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 513-Լ հրամանով հաստատվել է Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման 2021-2022 թվականների ռազմավարությունը և դրա իրականացման 2021-2022 թվականների միջոցառումների ծրագիրը (սույն կետում այսուհետ՝ Ռազմավարություն):

Ռազմավարությամբ նախատեսվում է 2021 թվականի երկրորդ կիսամյակում վերանայել ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի N 279-Ն հրամանը, ինչպես նաև մշակել բժշկական և ոչ բժշկական անձնակազմի կողմից հոգեկան առողջության վիճակի գնահատման, ինքնավնասման և ինքնասպանության դեպքերի հայտնաբերման, գնահատման, ինչպես նաև ինքնավնասման և ինքնասպանության հակում ունեցող անձանց բուժման ուղեցույցներ: Նշված միջոցառումների իրականացման արդյունքում քրեակատարողական հիմնարկներում մատուցվող հոգեբանական ծառայությունների արդյունավետությունը զգալիորեն կբարձրանա՝ ըստ այդմ ապահովելով նաև ազատազրկված անձանց հոգեկան առողջության պահպանման երաշխավորումը:

Ինչ վերաբերում է վերապատրաստումների իրականացմանը, ապա Ռազմավարությամբ նախատեսվում է նաև քրեակատարողական և բժշկական անձնակազմի համար հոգեկան առողջության վիճակի գնահատման, ինքնասպանության և ինքնավնասման թեմաներով ծրագրերի մշակում և վերապատրաստումների շարունակական իրականացում:

Անդրադառնալով վիճակագրության հավաքմանը՝ հարկ է արձանագրել, որ 2022 թվականի առաջին կիսամյակում, Ռազմավարության շրջանակներում, մշակվելու և ներդրվելու է քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների դեպքերի (այդ թվում՝ դրանց փորձերի) վերաբերյալ վիճակագրության գործիքը, ինչը հնարավորություն կտա ունենալ առավել ամբողջական տվյալներ, ինչպես նաև առավել

համակարգային կերպով և արդյունավետորեն կանխել ինքնավնասումները և ինքնասպանությունները քրեակատարողական հիմնարկներում:

Ռազմավարությամբ թիրախավորվել են նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք են քրեակատարողական հիմնարկներում հոգեբույժների և հոգեբանների օպտիմալ թվաքանակի և պրոֆեսիոնալ կադրերի ապահովումը, ինքնասպանության և ինքնավնասման դեպքերի պատշաճ քննության ապահովման նպատակով քրեակատարողական ծառայողների վերապատրաստումների իրականացումը, բժշկական, սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների, անվտանգության և պահպանության ստորաբաժանումների անձնակազմերի պաշտոնների անձնագրերի և/կամ ֆունկցիոնալ պարտականությունների վերանայումը և այլն:

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ Ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների կատարման ուղղությամբ արդեն իսկ ձեռնարկվել են համապատասխան քայլեր, ինչ կրելու է շարունակական բնույթ:

Այս առումով հարկ է նշել, որ Եվրոպայի Խորհրդի փորձագետների ներգրավմամբ արդեն իսկ մշակվել է ՀՀ քրեակատարողական հիմնարկներում հոգեկան առողջության զննության և ռիսկի գնահատման գործիքակազմը, որը ներառում է հոգեկան առողջության զննության (տղամարդկանց և կանանց համար տարբերակված), ինչպես նաև գնահատման գործիքները: Առաջիկայում նշված գործիքակազմը պիլոտային կարգով գործարկվելու է ՀՀ արդարադատության նախարարության երեք՝ «Արմավիր», «Աբովյան» և «Սևան» քրեակատարողական հիմնարկներում, ինչի արդյունքում գործիքակազմի՝ անհրաժեշտության դեպքում լրամշակված տարբերակը կներդրվի և ամբողջությամբ կկիրառվի ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական բոլոր հիմնարկներում:

Ինչ վերաբերում է հացադուլին, ապա Հաշվետու ժամանակահատվածում **Քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող 329 անձի կողմից ներկայացվել է հացադուլ հայտարարելու 601 դիմում:**

Հ/Հ	Քրեակատարողական հիմնարկ	Հացադուլի քանակ
1.	«Նուբարաշեն»	70
2.	«Դատապարտյալների հիվանդանոց»	47
3.	«Վարդաշեն»	31
4.	«Աբովյան»	13
5.	«Սևան»	10

6.	«Կոշ»	7
7.	«Գորիս»	3
8.	«Վանաձոր»	127
9.	«Արթիկ»	72
10.	«Երևան-Կենտրոն»	3
11.	«Հրազդան»	31
12.	«Արմավիր»	**187**
	Ընդամենը	***601***

Հացադուլ հայտարարելու դեպքերի աճի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում հացադուլ հայտարարած 2 դատապարտյալ՝ Վ. Օ.-ն և Գ.Մ.-ն, հաշվետու ժամանակահատվածում **28-ական անգամ շատ կարճ ժամանակով** (հաճախ՝ օրվա ընթացքում մի քանի անգամ) հայտարարել են հացադուլ, ապա դադարեցրել՝ չներկայացնելով որևէ լուրջ և ուշագրավ պատճառաբանություն:

Դատապարտյալ Գ.Մ.-ն նման ձևով հացադուլ է հայտարարել նաև այլ Քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ գտնվելու ընթացքում:

ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ «ԱԲՈՎՅԱՆ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ

Ինչպես վերը նշվեց, ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում (սույն կետում այսուհետ՝ Հիմնարկ) իրականացվել է կանանց մեկուսարանի մասնաշենքի լոգասենյակի վերանորոգում, Հիմնարկի պահպանությունն իրականացնող ստորաբաժանման մասնաշենքի ամբողջական վերանորոգում, ներքին և արտաքին ջրամատակարարման, ջրահեռացման ցանցի վերանորոգում:

Հիմնարկի տարածքում իրականացվել են նաև ասֆալտապատման աշխատանքներ՝ շուրջ 1.236 քառակուսի մետր:

Ընթացքի մեջ են կաթսայատան և ընդհանուր ջեռուցման համակարգի պրոֆիլակտիկ ստուգման և մասնակի վերանորոգման աշխատանքները: Ըստ ֆինանսական միջոցների հատկացումների՝ անհրաժեշտության դեպքում Հիմնարկում կկատարվեն վերանորոգման, հարդարման աշխատանքներ:

Ինչ վերաբերում է կրթությանը, հարկ է նշել, որ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (սույն կետում՝ Կազմակերպություն), 2020 թվականի ընթացքում **«Աբովյան»** քրեակատարողական հիմնարկում իրականացրել է «Համակարգչային հմտություններ», «Դեկորատիվ–կիրառական արվեստ», «Բիզնես-գրագիտություն» դասընթացները:

Կազմակերպությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 1717-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարության իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների շրջանակում՝ 2021-2023թթ.-ի միջնաժամկետ ծախսերի ծրագրում ներառել է, դատապարտված և/կամ կալանավորված անձանց օգտակար զբաղվածությունն ապահովող մի շարք նոր միջոցառումներ (կրթական, մշակութային և այլ վերասոցիալականացման միջոցառումներ), որ Ծրագիրն իրականացվի բոլոր քրեակատարողական հիմնարկներում և համապատասխան ֆինանսավորում հատկացվելու պարագայում Կազմակերպությունը կիրականացնի այդ միջոցառումները:

ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՅՔԱՐ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԴԵՄ

Խմբի կողմից խախտումներ չեն արձանագրվել. դրական է գնահատվել կատարված աշխատանքը և դրա արդյունքները:

Հաշվի առնելով սույն բաժնի կարևորությունը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը հարկ է համարում անդրադառնալ այս ոլորտում ձեռնարկված քայլերին: Մասնավորապես.

<u>Նոր կորոնավիրուսային (COVID-19) վարակով պայմանավորված՝ կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ.</u>

Քրեակատարողական հիմնարկներում նոր կորոնավիրուսային վարակի դեմ պայքարի շրջանակներում կանխարգելիչ միջոցառումները շարունակվում են:

1) «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի (սույն կետում այսուհետ՝ ՊՈԱԿ)՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում տեղակայված ստորաբաժանումների կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ ազատազրկված անձանց մոտ և առհասարակ քրեակատարողական հիմնարկներում COVID-19 համավարակի տարածումը կանխարգելելու ուղղությամբ:

Այսպես, դեռևս ՊՈԱԿ-ի տնօրենի 2020 թվականի հունվարի 10-ի թիվ 3-Լ հրամանի համաձայն՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և

դատապարտյալների շրջանում գրիպի և սուր շնչառական վիրուսային վարակների կանխարգելման նպատակով ՊՈԱԿ-ի ստորաբաժանումների ղեկավարներին հրահանգվել է սահմանափակել կալանավորված անձանց և դատապարտյալների շփումն ակնհայտ հիվանդ այցելուների հետ, ինչպես նաև խստացնել հսկողությունը սանիտարահակահամաճարակային ռեժիմի պահպանման նկատմամբ: Հանձնարարվել է նաև իրականացնել վիրուսային վարակների վերաբերյալ բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում և առողջ ապրելակերպի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:

ՊՈԱԿ-ի դեղորայքային ապահովման պատասխանատուին հանձնարարվել է ստորաբաժանումներն ապահովել անհրաժեշտ ախտահանիչ նյութերով, դեղերով և այլ պարագաներով:

2020 թվականի մարտի 13-ին ՊՈԱԿ-ի ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվել է առավելագույնս սահմանափակել քրեակատարողական հիմնարկներում գտնվող հիվանդների տեղափոխումը քաղաքացիական բժշկական հաստատություններ՝ այն իրականացնելով միայն անհետաձգելի սուր պաթոլոգիաների և հիվանդի կյանքին սպառնացող վտանգի դեպքերում:

Կարևորելով քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց առողջության պահպանման իրավունքի երաշխավորումը՝ դեռևս 2020 թվականի ապրիլի 3-ին **ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից մշակվել է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական ծառայության համակարգում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման, ինչպես նաև հայտնաբերման դեպքում անհրաժեշտ միջոցառումների պլան, որը 2020 թվականի ապրիլի 3-ին թիվ Ե-40/4-1689 ուղեկցական գրությամբ ուղարկվել է քրեակատարողական հիմնարկների ղեկավարներին:**

Անհրաժեշտ է նաև փաստել, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ղեկավարության կողմից ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների և ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ստորաբաժանումների ղեկավարներին տրվել են շուրջ 15 հասցեական հանձնարարականներ՝ կապված COVID-19 կորոնավիրուսային հիվանդության դեմ պայքարում ձեռնարկվելիք միջոցառումների, ցուցումների և մեթոդական ուղեցույցների տեսքով:

Արդարադատության նախարարությունն Առողջապահության նախարարության հետ համատեղ իրականացրել և պարբերաբար իրականացնում է կանխարգելիչ միջոցառումներ՝ բացառելու համար վարակի ներթափանցումը քրեակատարողական հիմնարկներ: Մասնավորապես՝

- Քրեակատարողական հիմնարկների բնակելի գոտիներում և վարչական մասնաշենքերում իրականացվում է ախտահանիչ նյութով սանիտարահիգիենիկ մշակում.

- Ազատությունից զրկված անձանց շրջանում պարբերաբար անցկացվում են անհրաժեշտ բուժզննման, այդ թվում՝ ջերմաչափման և արտաքին զննման աշխատանքներ, առողջության հետ կապված գանգատներ ներկայացնող դատապարտյալները և կալանավորված անձինք անհապաղ ենթարկվում են առավել խորացված ստուգման և ախտորոշիչ հետազոտման: Ջերմաչափման են ենթարկվում նաև քրեակատարողական ծառայողները:
- **Հատկապես ազատությունից զրկված անձանց տեղաշարժի դեպքում նրանց և նրանց ուղեկցող անձնակազմին տրամադրվում են դիմակներ, ձեռնոցներ, իսկ փոխադրող տրանսպորտային միջոցները՝ ախտահանվում.**
- Քրեակատարողական հիմնարկներից առողջապահական մարմինների բժշկական հաստատություններ կամ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ առողջական խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժը կամ ուղեգրումը հիմնականում կատարվել է միայն շտապ դեպքերում: Տեղաշարժի դեպքում ազատազրկված անձինք և ուղեկցող քրեակատարողական ծառայողները ենթարկվել են մարմնի ջերմաստիճանի չափման, վերջիններս ապահովվել են անհատական պաշտպանիչ միջոցներով, որոնք են մեկանգամյա օգտագործման ձեռնոցները, շնչադիմակները և ախտահանման միջոցները:
- **Ազատությունից զրկված անձանց տրամադրվում են անձնական հիգիենայի պարագաներ:**

Ընդհանուր առմամբ 2019 թվականի դեկտեմբեր ամսից առ այսօր ՊՈԱԿ-ը քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների շրջանում վիրուսային վարակների կանխարգելման նպատակով տարբեր պետական և միջազգային կազմակերպություններից ձեռք է բերել և ստացել՝

1. 10.12.2019թ. Ձեռնոցներ վիրաբուժական՝ 2159 հատ.
2. 11.12.2019թ. Աբակտերիլ՝ 2100 հաբ.
3. 18.12.2019թ. Ջերմաչափ սնդիկային՝ 180 հատ.
4. 27.12.2019թ. Բժշկական հագուստ՝ 100 հատ.
5. 24.12.2019թ. Ձեռնոցներ՝ 400 տուփ (40000 հատ).
6. 24.12.2019թ. Լեյկոսեպտ 1 լ՝ 9 հատ.
7. 24.12.2019թ. Էթանոլ 1 լ՝ 103 հատ.
8. 24.12.2019թ. Դիմակներ բժշկ՝ 5000 հատ.
9. 24.12.2019թ.Դիասպրեյ 750 մլ՝ 6 հատ.
10. 24.12.2019թ. Լիզոֆորմին 1 լ՝ 60 հատ.
11. 11.03.2020թ. Հեղուկ օճառ 1լ՝ 170 հատ (ԿԽՄԿ օգնություն).
12. 11.03.2020թ. Օճառ՝ 5000 հատ (ԿԽՄԿ օգնություն).

13. 11.03.2020թ. Ախտահանիչ հեղուկ՝ 23 լ (ԿԽՄԿ օգնություն).
14. 11.03.2020թ. Ձեռնոցներ զննման՝ 7200 հատ (ԿԽՄԿ օգնություն).
15. 11.03.2020թ. Ջերմաչափ ԱԳՎ էլեկտրոնային՝ 4 հատ (ԿԽՄԿ օգնություն).
16. 11.03.2020թ. Ալկոհոլի բարձիկներ՝ 4000 հատ (ԿԽՄԿ օգնություն).
17. 11.03.2020թ.- Աբակտերիլ լ-թ -1լ՝ 4 հատ.
18. 19.03.2020թ.- Լեյկոսեպտ 5 լ՝ 18 հատ.
19. 19.03.2020թ.- Հեղուկ օճառի դիսպենսեր՝ 15 հատ.
20. 19.03.2020թ.- Աբակտերիլ հաբ.300՝ 14 տուփ.
21. 23.03.2020թ.- Ջերմաչափ էլ. Սիթիզեն՝ 14 հատ.
22. 06.04.2020թ.- Արտահագուստ պաշտպանիչ՝ 20 հատ.
23. 06.04.2020թ.- Արտահագուստ պաշտպանիչ՝ 20 հատ.
24. 06.04.2020թ.- Դիմակներ (FFP3,FFP2, N50 և այլն)՝ 355 հատ.
25. 06.04.2020թ.- Ձեռնոցներ՝ 5 տուփ (500 հատ).
26. 09.04.2020թ.- Հակամանրէային ախտահանիչ՝ 100 լիտր.
27. 15.04.2020թ.- Դիմակ բժշկական N 50՝ 2 արկղ.
28. 15.04.2020թ.- Դիմակ բժշկական N 95՝ 400 հատ.
29. 15.04.2020թ.- Դիմակ պաշտպանիչ՝ 50 հատ.
30. 15.04.2020թ.- Ձեռնոց զննման լատեքսային՝ 7 տուփ (500 հատ).
31. 15.04.2020թ.- Բախիլ միանվագ օգտագործման՝ 500 հատ.
32. 15.04.2020թ.- Արտահագուստ պաշտպանիչ՝ 50 հատ.
33. 15.04.2020թ.-Պաշտպանիչ ակնոց՝ 10 հատ.
34. 15.04.2020թ.- Ալկոգել դոնդող՝ 10 լիտր.
35. 27.04.2020թ.- Մեկանգամյա օգտագործման ձեռնոց (լատեքս, 100 միավոր ապրանք պարունակող տուփ)՝ 80 հատ.
36. 27.04.2020թ.- Պաշտպանիչ ակնոց՝ 100 հատ.
37. 27.04.2020թ.- Ալկոգել դետոքս / 5 լիտրանոց տարա՝ 30 հատ.
38. 27.04.2020թ.- Բժշկական սպիրտ 96 %՝ 100 լիտր.
39. 27.04.2020թ.- Շնչադիմակներ (WURTHFFP2, WURTHFFP3, FFP2)՝ 260 հատ.
40. 27.04.2020թ.- Մեկանգամյա օգտագործման բժշկական դիմակ (3 շերտ) ամրակով՝ 3600 հատ.
41. 27.04.2020թ.- Մեկանգամյա օգտագործման բժշկական դիմակ (3 շերտ) Յունիքորնմեդ՝ 1400 հատ.
42. 27.04.2020թ.- Թթվածնային գեներատոր՝ 2 հատ.
43. 27.04.2020թ.- Շարժական սատուրոմետր՝ 5 հատ.
44. 27.04.2020թ.- Ինֆրակարմիր ջերմաչափ՝ 5 հատ.

45. 27.04.2020թ.- Բժշկական պաշտպանիչ հագուստ՝ 50 հատ.
46. 27.04.2020թ.- Բակտերիոցիդ լամպ՝ 10 հատ.
47. 20.05.2020թ.- ռապիդ թեստ՝ 3000 հատ.
48. 20.05.2020թ.- պաշտպանիչ արտահագուստ՝ 500 միավոր.
49. 11.09.2020թ – արտահագուստ բժշկական՝ 200 հատ.
50. 11.09.2020թ – ձեռնոց լատեքսե՝ 4100 հատ.
51. 11.09.2020թ – գլխարկ բժշկական՝ 500 հատ.
52. 11.09.2020թ – դիմակներ՝ 260 հատ.
53. 11.09.2020թ – դիմակ վիրաբուժական՝ 15000 հատ.
54. 11.09.2020թ – ջերմաչափ ինֆրակարմիր՝ 11 հատ.
55. 11.09.2020թ – խալաթ բժշկական տղամարդու՝ 20 հատ.
56. 11.09.2020թ – դեմքի վահան՝ 5 հատ.
57. 11.09.2020թ – օճառ մարմնի՝ 7320 հատ.
58. 11.09.2020թ – օճառ հեղուկ՝ 728 հատ.
59. 11.09.2020թ – գել ձեռքերի ախտահանման՝ 450լ.
60. 11.09.2020թ – քլոր՝ 150 կգ.
61. 11.09.2020թ – պուլսօքսիմետր՝ 3 հատ.
62. 11.09.2020թ – սավաններ՝ 100 հատ.
63. 11.09.2020թ – ծածկոց սինթետիկ՝ 50 հատ.
64. 18.09.2020թ – ալկոգել՝ 800լ.
65. 18.09.2020թ - դիմակ բժշկական՝ 30000 հատ.
66. 18.09.2020թ – ձեռնոցներ լատեքսե մեծ և փոքր՝ 4000 հատ:

Համապատասխանաբար վերոնշյալ պաշտպանիչ միջոցները և բժշկական պարագաները բաշխվել են և ըստ անհրաժեշտության բաշխվում են ՊՈԱԿ-ի՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում տեղակայված բոլոր ստորաբաժանումների միջև:

Բացի այդ, հիմնարկներում ախտահանիչ աշխատանքներ իրականացնելու համար բոլոր քրեակատարողական հիմնարկներին տրամադրվել են քլորակիր՝ 480 կգ և լվացող նյութ՝ «ժավել» 740 լիտր: Քրեակատարողական հիմնարկներում բաշխումն իրականացնելիս հաշվի է առնվում տվյալ հիմնարկում պահվող թե՛ անձանց քանակը, թե՛ հիմնարկի կացարանների և խցերի քանակը:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ստորաբաժանումներին և հիմնարկներին տրամադրվել է Եվրոպայի Խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) կողմից ընդունված և հրապարակված **Կորոնավիրուսային հիվանդության համատեքստում ազատությունից զրկված անձանց նկատմամբ վերաբերմունքին առնչվող հրատապ սկզբունքները** (հայերեն

թարգմանությամբ), ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներին են տրամադրվել Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից տարբեր լեզուներով թարգմանված **կորոնավիրուսի կանխարգելման և վարակից պաշտպանվելու վերաբերյալ տեղեկագրեր,** որոնք փակցվել են անազատության մեջ պահվող անձանց հասանելի վայրերում:

Հատկանշական է նաև, որ 2020 թվականի հունիսի 30-ին գործընկեր կազմակերպության կողմից ՀՀ ԱՆ քրեակատարողական համակարգին են նվիրաբերվել թվով 16 դյուրակիր համակարգիչներ, ինչպես նաև 100 միավոր դիսպանսեր:

Այսպիսով, հարկ է փաստել, որ պետական և միջազգային գործընկերների աջակցությամբ ՊՈԱԿ-ի՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում տեղակայված բոլոր ստորաբաժանումները շարունակաբար համալրվում են անհրաժեշտ բժշկական պարագաներով և նյութերով:

2) **Աշխատակիցների և ազատությունից զրկված անձանց շրջանում իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով.**

- Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի հետ համատեղ քրեակատարողական հիմնարկների անձնակազմի համար մշակվել է հոգեբանական ուղեցույց.
- Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի հետ իրականացված բանակցությունների հիման վրա մշակվել են բազմալեզու իրազեկման թերթիկներ և ազդագրեր.
- ՊՈԱԿ-ը, համագործակցելով «Ակադեմիկոս Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ, ՊՈԱԿ-ի ողջ անձնակազմի համար կազմակերպել է COVID-19 համավարակից պաշտպանվելուն ուղղված հեռահար դասընթացների շարք, որը նպատակ է հետապնդել բարելավել բուժաշխատողների գիտելիքները և հմտությունները COVID-19 վերաբերյալ:
- ՊՈԱԿ-ի 12 բուժքույրեր, Ակադեմիկոս Ս.Խ.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտում անցել են «COVID-19 նմուշառում վերցնելու տեխնիկա» վերապատրաստման դասընթաց:

3) Քրեակատարողական հիմնարկներում նոր կորոնավիրուսային վարակի ախտանշաններ ունեցող ազատությունից զրկված անձանց մեկուսացման համար առանձնացվել են առնվազն **մեկուսացման համար առանձնացվել են առնվազն 1-ական խցեր: Բացի այդ, երկարաձգվել է կարանտինային բաժնում պահելու օրերի թիվը՝ 7-ից դառնալով 14** (հիվանդացության նշանների բացահայտման հնարավոր օրերի թվով):

4) Քրեակատարողական համակարգում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման, ինչպես նաև հայտնաբերման դեպքում անհրաժեշտ միջոցառումների ծրագրով դիտարկվել են կորոնավիրուսով պայմանավորված զարգացումների տարբեր սցենարներ, որոնց համար նախապատրաստվել են համապատասխան արձագանքի

մեխանիզմներ: Մասնավորապես, նախատեսվել է ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի մասնաշենքերը **(սկզբնական շրջանում՝ երկուսը, իսկ վատագույն սցենարի դեպքում՝ բոլոր մասնաշենքերը)** հատկացնել առավել ռիսկային համարվող ազատազրկվածներին և հիվանդներին՝ մյուսներից անջատ պահելու համար:

Այսպես, կատարված աշխատանքների արդյունքում ՀՀ ԱՆ **«Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի տուբերկուլոզային և նարկոլոգիական մասնաշենքերն ամբողջության դատարկվել են** և օգտագործվում են բացառապես որպես կորոնավիրուսային վարակի կանխարգելման կարանտինային գոտի:

Առանձնացված 2 մասնաշենքերն ունեն մինչև 150 մահճակալային ֆոնդ հզորություն, որոնց անկողնային պարագաները տրամադրել է Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեն:

Համավարակի տարածման կանխարգելման նպատակով ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում կառուցվել են 3 ախտահանման խցիկներ, ընդհանուր՝ 12 քառակուսի մետր մակերեսով: Առաջին խցիկը՝ քաղաքացիական հագուստի հանդերձարան, երկրորդ խցիկը՝ ցնցուղի և վարակազերծման, երրորդ խցիկը՝ հատուկ նշանակության բժշկական համազգեստի ընդունման-հանձնման: Վերոնշյալ խցիկները տեղակայված են ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի չեզոք տարածքում: Ռեժիմային գոտում վարակակիրների և հիվանդների համար նախատեսված սենյակի սանհանգույցում տեղադրվել է ջրատաքացուցիչ:

Քրեակատարողական հիմնարկին նվիրաբերվել են նաև պուլսօքսիմետրեր, բժշկական անձնակազմի համար նախատեսված հակահամաճարակային պաշտպանիչ համազգեստներ, դիմակներ, ախտահանիչ նյութեր, հեռահար ջերմաչափեր: Եվրոպայի խորհուրդն իր հերթին քրեակատարողական հիմնարկին տրամադրել է երկու օքսիգենատոր (թթվածնի կոնցենտրատոր), որոնցից յուրաքանչյուրը նախատեսված է միաժամանակ երկու հիվանդի համար:

Վերոհիշյալ նախապատրաստական աշխատանքների արդյունքում ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկը ներկա դրությամբ վերազինված է համապատասխան բժշկական սարքավորումներով և անհրաժեշտության դեպքում մշտապես պատրաստ է բուժօգնություն ցուցաբերել կորոնավիրուսով վարակված կալանավորված անձանց և դատապարտյալներին:

5) Ներկայումս ՊՈԱԿ-ի՝ քրեակատարողական հիմնարկներում տեղակայված բժշկական ստորաբաժանումների աշխատակիցները քրեակատարողական ծառայողների հետ համատեղ կատարում են քրեակատարողական հիմնարկների տարածքների ախտահանման, ինչպես նաև նշված աշխատանքների վերահսկման աշխատանքները:

Աշխատանքները կատարվում են հետևյալ պաշտպանիչ միջոցներով և ախտահանիչ նյութերով.

Օգտագործվող պաշտպանիչ միջոցներն են՝

- Ձեռնոց ոչ ստերիլ.
- Լատեքսե ձեռնոց.
- Դիմակ բժշկական.
- Ձեռնոց ստերիլ.
- Արտահագուստ պաշտպանիչ.
- Դիմակ պաշտպանիչ.
- Դիմակ պաշտպանիչ պլաստմասե.
- Արտահագուստ պաշտպանիչ.
- Ակնոց պաշտպանիչ.
- Բախիլ:

Օգտագործվող ախտահանիչ միջոցներն են՝

- Լիզոֆորմին.
- Սպիրտ բժշկական.
- Դիասպրեյ.
- Օճառ մարմնի չոր.
- Օճառ հեղուկ մարմնի.
- Աուրֆանիոզ լ-թ.
- Ալկոհոլի բարձիկներ.
- Ալկոգել.
- Քլորսեպտ:

Ի լրումն վերոգրյալի՝ հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում հակահամաճարակային միջոցառումներ իրականացնելու նպատակով բժշկական ստորաբաժանումներին են տրամադրվել նաև էլեկտրոնային հեռահար և սնդիկով ջերմաչափեր: Ստորև ներկայացվում է համապատասխան ցանկը.

Քրեակատարողական հիմնարկի անվանում	**Էլեկտրոնային ջերմաչափ**	**Սնդիկով ջերմաչափ**
«Աբովյան»	2	-
«Արմավիր»	1	15

«Արթիկ»	1	7
«Դատապարտյալների հիվանդանոց»	3	19
«Երևան-Կենտրոն»	1	-
«Գորիս»	1	-
«Հրազդան»	1	5
«Նուբարաշեն»	2	13
«Վանաձոր»	1	5
«Վարդաշեն»	2	-
«Կոշ»	1	5
«Սևան»	1	-

Ինչ վերաբերում է քրեակատարողական հիմնարկներում կարանտինի պայմաններում բնակչության առողջության պահպանման և առողջական վիճակի բարելավման նպատակով կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը, ապա դրանք իրականացվում են ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 11-ի «Անհատական պաշտպանական միջոցների ցանկը, կիրառման դեպքերն ու կարգը, սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները հաստատելու մասին» **N 23-Ն հրամանով**, ինչպես նաև՝ ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի **«Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող ՍԿ N 3.1.2-001-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին» N 17-Ն հրամանով, որից ելնելով՝** նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելմանն ուղղված համալիր միջոցառումների շրջանակներում իրականացվում է նաև քրեակատարողական հիմնարկներ մուտք գործող անձանց, այդ թվում՝ ծառայողների (աշխատակիցների) ջերմաչափում, իսկ արդյունքները՝ գրանցվում է:

Նշված և արդեն իսկ մշակված, քրեակատարողական հիմնարկներում նոր կորոնավիրուսային (COVID-19) վարակի կանխարգելման և համաճարակի վարման ռազմավարությունը (պլանը), ինչպես նաև գործողությունների շղթան ցույց է տվել իր արդյունավետությունը: Իրականացված միջոցառումների արդյունավետության լավագույն արտացոլումն է Հայաստանի Հանրապետությունում և քրեակատարողական հիմնարկներում արձանագրված հիվանդների թվային համեմատականը: **Համավարակի սկզբից առ այսօր**

քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել է COVID-19 համավարակի 39 հաստատված դեպք, իսկ մահվան դեպքեր չեն արձանագրվել:

«ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԻՆ ԱՌՉՆՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

Քրեակատարողական համակարգում նախատեսված բարեփոխումների օրակարգում, ի թիվս այլնի, առկա է ազատությունից զրկված անձանց համար հավասար պայմանների ապահովումը: Ըստ այդմ՝ խնդրում ենք ընդունել ի գիտություն, որ իրականացված և նախատեսվող ռազմավարական բոլոր միջոցառումները, ի թիվս այլնի, միտված են նաև այդ նպատակի նվաճմանը:

Ազատությունից զրկված անձանց շրջանում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ ձևավորելու հրամայականները մշտապես գտնվում են քրեակատարողական համակարգի ներկայացուցիչների ամենօրյա ուշադրության կենտրոնում: Այս առումով հարկ է նշել, որ **խստորեն դատապարտվում է խտրականության ցանկացած հիմքով ազատազրկված անձանց միջև անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորումը, քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգի պահանջները դիտավորությամբ խախտողների, դատապարտյալների շրջանում «դիրքեր» ստեղծելու փորձ կատարողների կողմից այլ ազատազրկված անձանց նկատմամբ առավելությունների ձեռքբերումը:**

Հաշվի առնելով վերոգրյալ ռիսկերը՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքները, որով պատասխանատվություն է սահմանվել քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու համար, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու համար, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ ներգրավելու համար, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու համար:

ՀՀ արդարադատության նախարարությունը և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը լուսաբանել, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով հասարակությանն իրազեկել է քրեական ենթամշակույթի դեմ պայքարի և դրա գործիքակազմի մասին (շուրջ 10 հրապարակում): Լուսաբանվել են նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում և քրեակատարողական հիմնարկներում իրականացված բազմաբնույթ միջոցառումները:

Բացի վերոնշյալը, հարկ է ընդգծել նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի 2020 թվականի օգոստոսի 20-ի **«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի հնարավոր դրսևորումները կանխարգելելու, բացառելու և դրանց դեմ համակարգված պայքար մղելու նպատակով իրավակազմակերպական և այլ միջոցառումներ ձեռնարկելու մասին» N Ե-40/2-5869 ցուցումը**, որով, ի թիվս այլ միջոցառումների, քրեակատարողական հիմնարկների պետերին հանձնարարվել է կատարել՝

«1. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների պետերին՝

1) Ապահովել քրեակատարողական հիմնարկների համապատասխան ստորաբաժանումների և (կամ) մյուս համապատասխան ծառայողների (աշխատակիցների) մասնակցությամբ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 22-ի ՀՕ-87-Ն օրենքի (սույն բաժնում այսուհետ նաև՝ Օրենք) հետևողական կիրառմանը նվիրված անհատական և (կամ) խմբային տեսագործնական պարապմունքների պարբերաբար անցկացումը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիայի կողմից մշակված «Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագրով» տրված գիտագործնական մեկնաբանությունները.

2) Ապահովել քրեակատարողական հիմնարկների համապատասխան ստորաբաժանումների և (կամ) մյուս ծառայողների (աշխատակիցների) միջոցով ազատությունից զրկված անձանց շրջանում անհրաժեշտ բացատրական-կանխարգելիչ աշխատանքների պարբերաբար անցկացումը՝ քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեականացման կապակցությամբ ընդունված Օրենքի էության ու դրանց վերաբերյալ տրված գիտագործնական մեկնաբանությունների վերաբերյալ.

3) Ապահովել քրեակատարողական հիմնարկների օպերատիվ, անվտանգության ապահովման և սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումների մեկական ներկայացուցչի մասնակցությամբ քրեական ենթամշակույթին հարող և (կամ) այդ արժեհամակարգը կրող կալանավորված անձանց ու դատապարտյալների անհատական ընդունելությունների իրականացումը, որի ընթացքում նրանց պարզաբանել քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեականացման կապակցությամբ Օրենքի էությունը, նախատեսված արարքների վնասակարությունն ու բացառման անհրաժեշտությունը, ինչպես նաև դրանց վերաբերյալ տրված գիտագործնական մեկնաբանությունները: (…).

(…)

6) Ապահովել քրեակատարողական հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումների կողմից քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված

կալանավորված անձանց և դատապարտյալների վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի թիվ 44-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 279-Ն հրամանով հաստատված հավելվածի 39-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տեղեկատվություն ստանալու դեպքում՝ այն սույն կետի 4-րդ ենթակետի պահանջների պահպանմամբ ներկայացումը Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ ստորաբաժանում.

7) Ապահովել քրեակատարողական հիմնարկների օպերատիվ ստորաբաժանումների կողմից յուրաքանչյուր ամիս՝ մինչև տվյալ ամսվա 5-ը ներառյալ, սույն կետի 4-րդ ենթակետի պահանջների պահպանմամբ տեղեկատվության և այդ կապակցությամբ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների վերաբերյալ ամփոփ տեղեկանքի կազմումը, որը հույժ գաղտնի դրոշմագրով ներկայացնել Ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ ստորաբաժանում.

8) Խիստ վերահսկողություն սահմանել և վճռականորեն (խստագույնս) բացառել՝

(…)

բ. Հիմնարկների տարածքում քրեական ենթամշակույթի գաղափարախոսության տարածմանը նպաստող իրերի, առարկաների և ցանկացած այլ նյութական դրսևորումների առկայությունը,

(…)

9) Սույն կետի 8-րդ ենթակետով նախատեսված ցանկացած դեպքով, ինչպես նաև քրեական ենթամշակույթի առանձին դրսևորումների առկայության մասին Ծառայության կենտրոնական մարմնի և (կամ) Հիմնարկի օպերատիվ ստորաբաժանումների կողմից ամփոփված և օպերատիվ-հետախուզական միջոցառումներով հաստատված տվյալներով քննության առարկա դարձնել նաև քրեակատարողական հիմնարկների պաշտոնատար անձանց կողմից առերևույթ պաշտոնեական հանցագործություններ կատարելու հանգամանքը և բավարար հիմքերի առկայության դեպքում քննարկել նյութեր նախապատրաստելու և (կամ) քրեական գործեր հարուցելու հարցը.

(…)

11) Հիմնարկների անվտանգության և պահպանության ապահովման մակարդակն ու վերահսկողության վիճակը բարելավելու նպատակով նոր սերնդի ռենտգեն և մետաղորսիչ սարքերի հետ համատեղ օգտագործել նաև շահագործման մեջ եղած նախկին համապատասխան տեխնիկական սարքերը՝ դրանց հաշվին ավելացնելով վերահսկման կետերի քանակը.

(…)

18) Պարբերաբար իրականացնել հանցածին դիրքորոշում ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալների խցերի (պահման վայրերի) փոփոխություններ՝ վերջիններիս կողմից ազատությունից զրկված այլ անձանց վրա ազդեցություն ձևավորելու և քրեական ենթամշակույթին բնորոշ գաղափարախոսության տարածման հավանականությունը (ռիսկը) կանխելու և բացառելու համար.

(…)»:

Բացի վերոշարադրյալից՝ քրեակատարողական հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի աշխատակիցների կողմից քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձինք պարբերաբար բանավոր տեղեկացվում են նաև պետության կողմից քրեակատարողական հիմնարկներում իրականացվող միջոցառումների, ինչպես նաև պատիժը կատարող կամ վերահսկողությունն իրականացնող մարմինների հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների վերաբերյալ, տրամադրվում են անհրաժեշտ խորհրդատվություններ, կազմակերպվում են անհատական ընդունելություններ՝ տարաբնույթ հարցերի, իրավական օգնության տրամադրման, ինչպես նաև հոգեբանների և սոցիալական աշխատողների կողմից նեղ մասնագիտական խորհրդատվություններ, ինչը ընդգրկվում և իրականացվում է նույն ստորաբաժանումների համապատասխան աշխատակիցների ամենօրյա գործունեության շրջանակներում:

Հարկ է նշել նաև, որ քրեական ենթամշակույթի ազդեցության դրսևորումների, ինչպես նաև կալանավորված անձանց ու դատապարտյալների նկատմամբ խտրական վերաբերմունքի բացառումը մշտապես գտնվում է Քրեակատարողական ծառայության ղեկավարության ուշադրության կենտրոնում: **Քրեակատարողական հիմնարկների երկարատև տեսակցության սենյակներում (փուլային տարբերակով) իրականացվում են վերանորոգման և հարդարման աշխատանքները, որոնք միտված են ապահովելու միատեսակ բարվոք պայմաններ անխտիր բոլոր կալանավորված անձանց և դատապարտյալների, ինչպես նաև նրանց տեսակցելու եկած քաղաքացիների համար:**

Բացի այդ, **ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ քրեակատարողական հիմնարկներում հետզհետե բացառելու անազատության մեջ պահվող անձանց ֆինանսական միջոցների հաշվին վերջիններիս պահման պայմանների բարելավման, մասնավորապես՝ խցերի վերանորոգման պրակտիկան, ինչը նույնպես կարևոր գործընթաց է պահման պայմանների միատեսակության ապահովման, ինչպես նաև տարբերակված կամ խտրական վերաբերմունքի բացառման տեսանկյունից:**

Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ խտրականությունը կանխարգելող օրենսդրություն մշակելու, ինչպես նաև խտրականության դեմ համապատասխան այլ մեխանիզմներ ստեղծելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարության կողմից

արդեն իսկ մշակվել և ներկայումս լրամշակման փուլում են «Ազգային փոքրամասնությունների մասին», «Իրավահավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և հարակից օրենքների նախագծեր, որոնց նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր անձի և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրականացման հավասար հնարավորություններ՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Ամրագրելով խտրականության համընդհանուր արգելքը՝ «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը սահմանում է խտրականության հասկացությունը և տեսակները, ինչպիսիք են՝ ուղղակի խտրականությունը, անուղղակի խտրականությունը, խտրականության հրահրումը, հետապնդումը և սեգրեգացիան: Անկյունաքարային նշանակություն ունի խտրականության վերաբերյալ բողոքների քննության համար Նախագծով սահմանված ապացուցման բեռի բաշխումը: Նախագծով ամրագրվում են խտրականության հասկացությունը և տեսակները, կանոնակարգվում են խտրականության վերացմանն ուղղված և խտրականությունից պաշտպանվելու իրավական մեխանիզմները, ինչպես նաև Իրավահավասարության խորհրդի կարգավիճակը, խնդիրները և գործունեությունը:

Հարկ է նկատել, որ «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է երաշխավորել Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր անձի իրավունքների ու ազատությունների իրականացման հավասար հնարավորությունները, կատարելագործել խտրականության դեմ պայքարի բնագավառի օրենսդրությունը, ապահովել խտրականության կանխարգելման, դրանից իրավական և դատական պաշտպանության իրավական հիմքերը:

Վերոգրյալի հաշվառմամբ այդուհանդերձ հարկ ենք համարում փաստել, որ առկա չէ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հաստատված այնպիսի դեպք, որով կհավաստվի քրեակատարողական ծառայողների կողմից ազատությունից զրկված անձանց նկատմամբ խտրական մոտեցման ցուցաբերումը:

Անդրադառնալով ազատությունից զրկված անձանց զուգարանի, լոգասենյակի, աղբահանության, կոյուղու և տարածքի մաքրման աշխատանքներում ներգրավելուն՝ հարկ է նշել, որ **ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձինք և դատապարտյալները վարձատրվող և չվարձատրվող, ուղղիչ հիմնարկների կամ դրանց հարող տարածքների բարեկարգման, աշխատանքներում ընդգրկվում են բացառապես իրենց ցանկությամբ և գրավոր դիմումի հիման վրա:**

Միաժամանակ, հարկ ենք համարում ընդգծել, որ քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց կարանտինային բաժանմունքներից տեղափոխելու և/կամ կոնկրետ խմբում կամ խցում տեղաբաշխելիս հաշվի են առնվում նրանց հոգեբանական և այլ առանձնահատկությունները, մասնավորապես.

ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի «**Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի թիվ 44-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»** N 279-Ն հրամանի հավելված 1-ով հաստատվել է կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը, որի 5-րդ գլխի 35-րդ կետով սահմանված է.

«Ըստ ուղղիչ հիմնարկների մեկուսացվածության աստիճանի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները կազմակերպվում են հետևյալ առանձնահատկություններով՝

1) բաց ուղղիչ հիմնարկներում սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները կազմակերպվում են անհատական կարգով՝ որպես կանոն ըստ անհրաժեշտության, ինչպես նաև դատապարտյալի դիմումի հիման վրա,

2) կիսաբաց ուղղիչ հիմնարկներում կազմավորվում են դատապարտյալների խմբեր (սույն կետում՝ խմբեր): Հիմնարկում խմբերի թիվը սահմանվում է՝ ելնելով սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակահարմարությունից: Դատապարտյալին ըստ խմբերի տեղաբաշխելը կատարվում է՝ հաշվի առնելով նրա սոցիալական և հոգեբանական առանձնահատկությունները, առողջական վիճակը, քրեածին վարքի առանձնահատկությունները, հոգեբանական համատեղելիությունը և արժեքային կողմնորոշումները: Դատապարտյալներն ըստ խմբերի տեղաբաշխվում են Հիմնարկի պետի հրամանով՝ մյուս ստորաբաժանումների հետ համաձայնեցված միջնորդության հիման վրա: Հրամանի քաղվածքը կցվում է դատապարտյալի անձնական գործին: Տնտեսական սպասարկման աշխատանքներում ներգրավված դատապարտյալները տեղաբաշխվում են նույն խմբում: Խմբի ղեկավար է նշանակվում Բաժանմունքի մասնագետներից որևէ մեկը (սույն կետում՝ խմբի ղեկավար), որը խմբում ընդգրկված դատապարտյալների հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների հիմնական կազմակերպիչը և իրականացնողն է: Խմբերի ղեկավարների գործունեությունը համակարգում և վերահսկում է Բաժանմունքի պետը: Որպես կանոն, դատապարտյալը խմբում ընդգրկվում է պատժի կրման ողջ ժամանակահատվածի համար:

Խմբից խումբ տեղափոխում կարող է իրականացվել խմբի ղեկավարի պատճառաբանված տեղեկանքի հիման վրա՝ Բաժանմունքի պետի կողմից Հիմնարկի պետին ներկայացված միջնորդությամբ: Պատժախուց տեղափոխված դատապարտյալը խմբի կազմից չի հանվում,

3) կիսափակ և փակ ուղղիչ հիմնարկներում խցերը բաշխվում են Բաժանմունքի մասնագետների միջև՝ յուրաքանչյուր աշխատող Հիմնարկի պետի հրամանով նշանակվում է համապատասխան խմբի ղեկավար,

4) բուժական ուղղիչ հիմնարկում սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն իրականացվում են ըստ անհրաժեշտության, ինչպես նաև դատապարտյալի դիմումի հիման վրա: Այդ աշխատանքներն ուղղված են դատապարտյալի բուժման գործընթացին նպաստող պայմանների ստեղծմանը: Այդ նպատակով բուժական ուղղիչ հիմնարկներում դատապարտյալների բուժումը, այդ թվում՝ թմրամոլության և ալկոհոլամոլության բուժումը կարող է իրականացվել ոչ միայն բուժական մեթոդներով, այլ նաև հոգեթերապևտիկ և սոցիալական մեթոդներով:

Դատապարտյալի՝ պատիժը կատարելու համար քրեակատարողական հիմնարկի տեսակը փոխելուց հետո նրա հետ իրականացվող աշխատանքները հիմնվում են նախորդ քրեակատարողական հիմնարկում կատարած աշխատանքների արդյունքների վրա»:

Ինչ վերաբերում է դատապարտված անձին պատիժը կրելու համար կոնկրետ Հիմնարկի՝ մեկուսացվածության աստիճանի ընտրությանը և/կամ փոփոխմանը, ապա այն կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 100-րդ և 101-րդ հոդվածներով:

Հարկ է նշել նաև, որ դատապարտված անձանց տեղաբաշխումն իրականացնելիս անհրաժեշտ է նաև ուղղորդվել Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածի դրույթներով, այն է՝

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **ուղղիչ հիմնարկում անջատ են պահվում՝**

1) տղամարդիկ՝ կանանցից.

2) անչափահասները՝ չափահասներից, բացառությամբ սույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի.

3) առաջին անգամ ազատազրկման դատապարտված անձինք, բացի առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտված անձանցից՝ նախկինում ազատազրկման ձևով պատիժ կրած դատապարտյալներից.

4) դատարանների, իրավապահ, մաքսային և հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող, պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայության սպայական կազմի զինծառայող կամ նախկին զինծառայող, ինչպես նաև ոստիկանության զինծառայող կամ նախկին զինծառայող դատապարտյալը՝ մյուս դատապարտյալներից.

5) շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություններով տառապող դատապարտյալը՝ մյուս դատապարտյալներից.

6) դատապարտյալը, որի կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում, մյուս դատապարտյալներից՝ ուղղիչ հիմնարկի վարչակազմի որոշմամբ.

7) անզգուշությամբ կատարված հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձինք՝ դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատապարտված անձանցից:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բուժական ուղղիչ հիմնարկում, ուղղիչ հիմնարկների բուժական ստորաբաժանումներում, ինչպես նաև այն ուղղիչ հիմնարկում, որին առընթեր կա մանկատուն, դատապարտյալներին անջատ պահելու՝ սույն հոդվածով սահմանված պահանջները կիրառվում են հնարավորինս:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատապարտյալներին անջատ պահելու՝ սույն հոդվածով սահմանված պահանջները կարող են չպահպանվել, եթե նրանք մասնակցում են նույն հիմնարկում իրենց համար կազմակերպած սոցիալական, հոգեբանական, իրավական աշխատանքների, աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նման այլ միջոցառումների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

Ինչ վերաբերում է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում 27.02.2020 թվականին Խմբի կողմից իրականացված այցի ընթացքում սննդի բաժանման գործընթացում արձանագրված դիտարկումներին, տեղեկացնում ենք, որ քրեակատարողական հիմնարկում պատրաստվում է մասնավոր կազմակերպության «ՌԵԴԻ-ՍԹԵԴԻ» ՍՊԸ-ի կողմից ընդհանուր կարգով՝ առանց խտրականությունների:

Քրեակատարողական հիմնարկում սննդի բաժանման գործընթացը կազմակերպելիս, դատապարտյալի խցում չգտնվելու հանգամանքով պայմանավորված (չվարձատրվող աշխատանքներում ներգրավված լինելու, փաստաբանական, քննչական կամ բժշկական գործողությունների մասնակցությամբ պայմանավորված)՝ դատապարտյալների ցանկությամբ, սննդի բաժինները նախապես լցվում են առանձին տարաների մեջ և դրվում կերակրադռնակների վրա, որպեսզի հետո վերջիններս օգտվեն իրենց հասանելիք սննդից:

ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԱՅԼ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՔԿՀ–ՆԵՐՈՒՄ

Ինչպես Խումբը տեղեկացված է, 2020թ-ի օգոստոսի 23-ին՝ ժամը 10:30-ի սահմաններում ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի 1-ին մասնաշենքի թիվ 4-րդ խցում տեղի ունեցած չնախատեսված խուզարկության ընթացքում կալանավոր Հ.Շ-ի, Ա.Շ-ի և

դատապարտյալ Ա.Խ-ի նկատմամբ կիրառվել է ֆիզիկական ուժ և հատուկ միջոց, որի արդյունքում վերջիններիս պատճառվել է մարմնական վնասվածք:

Նյութերի նախապատրաստման ընթացքում նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ, կալանավորների և դատապարտյալի նկատմամբ ֆիզիկական ուժ և հատուկ միջոց կիրառած աշխատակիցներից վերցվել են բացատրություններ:
25.08.2020թ-ին նախապատրաստված նյութերը / թիվ 40/18-10-3349 ուղեկցական գրությամբ 76 թերթից/ բանավոր պահանջով ուղարկվել է Երեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազություն:

Դեպքի փաստով ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62223420 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

ՍՆՆԴԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՐԱԿԸ

Խմբի կողմից սույն բաժնի առնչությամբ մտահոգություններ, խախտումներ չեն ներկայացվել:

2020 թվականի հունիսի 1-ից սկսված ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց սննդի տրամադրման գործընթացն իրականացվում է մասնավոր ընկերության կողմից: Պատրաստի սննդից օգտված շահառուների թվաքանակը կազմել է 100%, որն ինքնին հանգեցրել է փոխանցվող հանձնուքների թվի նվազմանը, ինչի արդյունքում թեթևացել է նաև անազատության մեջ պահվող անձանց հարազատների հոգսը:

Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի ապահովման գործառույթը մասնավոր կազմակերպություններին պատվիրակելու հաշվին հնարավոր է լինելու էականորեն բարձրացնել պետության կողմից մատուցվող ծառայությունների որակը՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին, ինչպես նաև կատարել ևս մեկ քայլ ազատությունից զրկված անձանց շրջանում խտրականությունը բացառելու ուղղությամբ:

Միևնույն ժամանակ, ազատությունից զրկված անձանց շրջանում վերջին տարիների ընթացքում առավել տարածված սիրտ-անոթային, աղեստամոքսային տրակտի, շաքարային դիաբետի, խրոնիկական հեպատիտների, լյարդի ցիռոզի հիվանդությունների բուժման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակված **միջինացված դիետիկ սննդակարգերը ներառվել են ազատությունից զրկված անձանց ճաշացանկերում**:

Հարկ է նշել, որ **դիետիկ սննդակարգերն ազատությունից զրկված անձանց ճաշացանկերում ընդգրկելու արդյունքում ներկայումս 66 անձ օգտվում է այդպիսի սննդակարգերից:**

Այս համատեքստում հարկ է արձանագրել, որ **Խմբի կողմից դրական է գնահատվել սննդի ոլորտի փոփոխությունները:**

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ներկայացված առաջարկներն ըստ էության համահունչ են Ռազմավարությամբ որդեգրված քաղաքականությանը: Ուստի, կձեռնարկվեն անհրաժեշտ քայլեր քրեակատարողական համակարգի կատարելագործման ուղղությամբ:

ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Խմբի գործունեության հետ կապված Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցիչների և Խմբի միջև բազմիցս քննարկվել է ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի մարտի 20-ի «Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի ձևավորման և հասարակական վերահսկողության իրականացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի նոյեմբերի 18-ի թիվ ՔՀ-66-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 126-ն հրամանը (սույն կետում այսուհետ՝ Հրաման), և Խմբին ներկայացվել են այս առումով նախարարության հայեցակարգային մոտեցումները:

Հարկ է նշել, որ Հրամանով նախատեսված կարգավորումները որևէ կերպ չեն կարող դիտարկվել որպես Խմբի գործունեությունը խաթարելու փորձ, այլ միտված են բացառապես Խմբի գործունեության կազմակերպաիրավական առումով կանոնակարգմանը, քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում դիտորդների վերահսկողական գործառույթի իրականացման արդյունավետության բարձրացմանը: Բացի այդ, հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկների գործունեության կազմակերպական և ռեժիմային առանձնահատկությունները՝ ոչ աշխատանքային օրը վարչակազմի որոշմամբ քրեակատարողական հիմնարկ այցելելու վերաբերյալ կարգավորումը նախատեսվել է՝ ապահովելու քրեակատարողական հիմնարկների անխափան գործունեության կազմակերպումը:

Հատկանշական է նաև, որ Հրամանի ընդունումից հետո Խմբի կողմից քրեակատարողական հիմնարկ մուտք գործելուն խոչընդոտելու որևէ դեպք չի արձանագրվել:

Անդրադարձ կատարելով փորձագետին ներկայացվող պահանջներին՝ հարկ է նկատել, որ քրեակատարողական ոլորտում երկու տարվա ստաժը նախատեսվել է նրա համար,

որպեսզի Խմբի գործունեությունը հիմնվի պրոֆեսիոնալիզմի վրա, այսինքն՝ Խմբի փորձագետներ ընդգրկվեն այն անձինք, որոնք քաջատեղյակ են ոլորտին և կարող են ոլորտային խնդիրներ արձանագրել և դրանց լուծման ուղղություններ:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ արդարադատության նախարարությունը հարկ է համարում ևս մեկ անգամ ընդգծել այն, որ տարիներ շարունակ քրեակատարողական համակարգում կուտակված ոլորտային խնդիրները շարունակում են մնալ ուշադրության կենտրոնում և, ըստ այդմ, նախաձեռնվում և նախաձեռնվելու են այդ խնդիրների լուծմանն ուղղված քայլեր. քրեակատարողական համակարգի բարեփոխմանն ուղղված՝ իր տեսակի մեջ եզակի փաստաթղթով՝ Ռազմավարությամբ թիրախավորվել են ոլորտային բոլոր խնդիրները՝ պահման պայմանների, ազատությունից զրկված անձանց իրավունքների երաշխավորումից մինչև քրեակատարողական ծառայողների ծառայության համար պատշաճ պայմանների և սոցիալական երաշխիքների ապահովում:

Վերահաստատում ենք այն, որ ՀՀ արդարադատության նախարարությունը մշտապես բաց է համագործակցության համար և պատրաստակամ է Խմբի հետ համատեղ ջանքերով հասնելու ոլորտային խնդիրների լուծմանը:

ՆԿՈՒՂ

Նախկինում *Ներկայում*

ՆԿՈՒՂ

Նախկինում *Ներկայում*

ՆԿՈՒՂ

Նախկինում *Ներկայում*

ԵՐԿԱՐԱՏԵՎ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՆՅԱԿՆԵՐ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՍԵՆՅԱԿ

Նախկինում Ներկայում

Նախկինում Ներկայում

Նախկինում Ներկայում

Նախկինում Ներկայում

ՏԱՆԻՔ

Նախկինում | Ներկայում

ԴԱՀԼԻՃ

Նախկինում | Ներկայում

Նախկինում | Ներկայում



Նախկինում | Ներկայում

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում 2021թ. օգոստոսի 16-ի դրությամբ պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների վերաբերյալ

Հ/Հ	ՀՀ ԱՆ ՔԿ հիմնարկի անվանումը		Լրակազմ	Կալ. ամբ. և դատ. քանակը	Կալ. ամբ. քանակը	Դատապ. քանակը	Այդ թվում				Առողջ. քաղ. բուժ. հաստատ.	Կարգապահական մեկնում
							Փակ տիպ	Կիսափակ տիպ	Կիսաբաց տիպ	Բաց տիպ		
1	«ՆՈՒԲԱՐԱՇԵՆ»		780	311	214	97	40	54	3	0	-	-
2	«ՎԱՆԱՁՈՐ»		240	144	56	88	26	58	4	0	-	-
3	«ՎԱՐԴԱՇԵՆ»		339	116	55	61	2	12	16	31	1	5
4	«ԵՐԵՎԱՆ-ԿԵՆՏՐՈՆ»		60	26	18	8	5	3	0	0	-	-
5	«ԳՈՐԻՍ»		182	71	30	41	22	14	5	0	1	-
6	«ԿՈՇ»		640	64	0	64	0	0	64	0	-	-
7	«ԱՐԹԻԿ»		373	142	41	101	36	29	33	3	1	1
8	«ՍԵՎԱՆ»		548	80	0	80	0	0	79	1	-	-
9	«ԱԲՈՎՅԱՆ»	ընդհ.	265	67	39	28	1	8	15	4	-	-
		կին		59	32	27	1	7	15	4	-	-
		անչ.		8 (1-ի 18ստ. լրացած)	7	1 (18ստ. լրացած)	0	1 (18ստ. լրացած)	0	0	-	-
10	«ԴԱՏ.ՀԻՎԱՆԴԱՆՈՑ»		464	117	77	40	8	21	11	0	1	-
11	«ՀՐԱԶԴԱՆ»		215	150	67	83	27	56	0	0	-	-
12	«ԱՐՄԱՎԻՐ»		1240	786	525	261	74	155	32	0	5	1
	ԸՆԴՀԱՆՈՒՐ		**5346**	**2074**	**1122**	**952**	**241**	**410**	**262**	**39**	**9**	**7**

ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 16.08.2021թ.

«Ա.Հ.Գրիգորյան»ՍՊԸ

ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 34,

099 92 77 99